tant que vent et le souffle en tant qu'esprit. La machine produit du "pneuma", du vent et de l'âme, de l'air comme air que l'on respire et comme atmosphère dans laquelle les œuvres sont créées et vues. Profondément et discrètement, les œuvres renouent, à travers ce traitement du souffle, d'une part avec la pensée stoïcienne (en cherchant du reste à parvenir à un détachement du monde matériel) et, d'autre part, avec un thème fortement développé à la Renaissance, ainsi que l'avait analysé André Chastel, le thème de l'"aria". Les œuvres de ces artistes de onze pays différents, traduisent l'air du temps, elles résultent d'une respiration qui, aujourd'hui, nous fait plutôt voir l'œuvre comme une expiration différente, morbide et physique, équivalente du frisson. Au soupir et au hoquet, liés au luxe et à l'abondance, semble succéder aujourd'hui une sorte d'asthme qui oblige les sujets à se mettre à l'abri de toute poussière, de tout air. A se mettre sous globe. D'où, ces curieux espaces qui apparaissent dans l'exposition, tel cet igloo de plastic transparent, rappelant une situation hospitalière (ou les obsessions d'un Michael Jackson?). D'où, aussi, tous ces corps dont la nudité n'apparaît plus que dans la dimension prophylactique de l'écran. Celui-ci démontre parfaitement sa double fonction de révélateur et de cache. Les écrans de télévision révèlent les nus et mettent l'individu à nu à travers ses mouvements et ses discours, alors que d'autres œuvres, des photographies, proposent des corps transmutés, des corps sur lesquels l'écran aura été invisiblement greffé, jusqu'à ce que disparaissent les signes de l'appartenance sexuelle ou du temps biologique. A peine le visiteur dépasse-t-il la soufflerie qu'il se voit confronté à un lieu aux parois vitrées, dans lequel des mannequins de couture décapités revêtent les robes blanches d'un mariage mort congelé ou d'énigmatiques oripeaux qui, plus qu'une peau d'or (aurea pellis) s'apparentent à une peau d'argent, sans doute plus en accord avec la saison et avec la grisaille socio-économique. Recroquevillée dans ses lugubres vêtements noirs, une femme, un modèle vivant plus mort encore que tout ce qui l'entoure, demeure prostrée dans cet espace. Une identique figure de la mort resurgit ailleurs dans le parcours de l'exposition, comme un triste oiseau abattu, près de cette vanité contemporaine. Sur une toile recouverte d'une sorte de moquette, quelques vieilles balles de tennis pleurent des larmes de cristal auprès d'un vieux panier, engendrant une image qui renoue avec le thème baroque de la vanité. Les jeux de ballon ou la beauté éphémère du cristal énoncent la déréliction de l'être et du monde, la fragilité du corps. D'autres indices de vanités surgissent, tel cet arbre à bijoux du Tibet, telle encore l'installation d'une sorte d'antichambre où des miroirs apposés aux murs reflètent le portrait du spectateur en l'animal imaginaire qu'il aura voulu être. Les masques animaliers s'entassent dans un grand bac. Les visiteurs hésitent à les porter et seuls s'amuse deux gardiens qui resserrent discrètement les liens déjà soupçonnés entre le musée et le zoo.

L'animalité marque encore l'en-deçà de la communication et l'excès des télécommunications. Si des cris animaux surprennent parfois le visiteur, l'incompréhension agressive provient également du chahut des bandes vidéo qui passent en même temps à quelques pas de distance. L'excès des télécommunications nous ramène à l'animalité et à l'incommunicabilité. Que l'animalité comme excès de civilisation n'a

par
Chaké MATOSSIAN
Docteur en philosophie et théorie
de la communication
Professeur à l'Université Nouvelle
de Lisbonne

dans l'écoulement chronologique, dans la durée. En tant que saison, l'hiver signale aussi le retour, la périodicité, le caractère cyclique du temps, le temps météorologique ou cosmique. L'hiver évoque aussi la fixité, l'endormissement solitaire, le gel des choses, comme une sorte de mort. L'amour relève d'une tout autre temporalité, il naît dans l'instant, celui de la flèche décochée par une divinité, celui du clin d'œil et du coup de foudre. Il lui arrive d'être éternel et, plus souvent encore, d'être impossible. Lorsque le moment opportun, le "kaïros", n'a pu être saisi, tout est perdu, comme on perd une bataille. "L'hiver de l'amour" exhibe la double brûlure du gel et du feu, le frisson d'un corps fiévreux, à la fois brûlant et glacé, un corps parcouru de sueurs froides, le corps des années 90. L'atmosphère générale créée par les œuvres est celle de la désolation, celle d'un paysage dévasté par l'hiver, celle d'un espace frigorifique où le corps repose, comme à la morgue. L'exposition opère une autopsie de notre contemporanéité, en recourant à des installations, des images photographiques et vidéographiques, des scénographies et des recherches sonores qui récusent toute finalité morale, tout message qui tendrait nécessairement à ancrer l'art dans l'idéologie, par trop réductrice et récupératrice de la souffrance. Le temps chronologique et météorologique de l'hiver et celui de l'amour, s'opposant et se croisant, établissent un rapport avec une spatialité elle aussi ambiguë, un espace flou participant à l'en-deçà et à l'au-delà du monde quotidien, un espace traversé par l'animalité et par la méditation, un espace excluant toute médiation. L'une des premières choses à laquelle le spectateur se trouve confronté se rapporte à l'impalpable, à l'irreprésentable, à savoir, le vent provenant d'une soufflerie nous projetant dans l'hiver. D'emblée le lien se trouve établi, entre le souffle en

ԽԱՇԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Բառերուն ընդմէջէն կը շոշափեմ
իրերուն անիրականութիւնը
Եւ կը նայիմ գոյութեան միւս երեսին :
Պարապը մէջս չէ
այլ շուրջը ամէն ինչի
որ կրնայ ֆերքուածի մը սահմաններուն մէջ անհետանալ
ինչպէս ես ինքս . . .
Երբեմն նոյնիսկ կը փնտռեմ այդ գլխարկներուն
գիւ շրջապատող լուսքեան մէջ
սուանց ոչ մէկ վերացումի :
Ոչ իսկ անկում .
իմս յարատեւում մըն է
ամէն ինչի ուշացումին :
Այդպէս միայն իրերուն հեռաւորութիւնը կրնամ չափել
իրենց նւթականացման կէս ճամբուն վրայ
ուր ժամանակը հարկույթ չէ
այլ քարացած տեւողութիւն :

Պուէնուս-Այրէս, 28/2/1994

Բառերը ֆերքուածէն բաժնող սահմանին
կը յայտնուի յանկարծ տարածութիւնը
որուն հորիզոնին կը կորսուիմ :
Ըսեմք թէ կար ի սկզբանէ
աներեւոյթ հեռաւորութիւնը ես ինձմէ :
Բայց ճախողութիւնը կը կերպարանաւորուի
արարքին ընթացքին, անոր ընդմէջէն :
Բառերը արդէն չեն ստեղծեր ֆերքուածը,
կան, պարզապէս,
սահմանէն ադին
Եւ յետոյ միայն տարածութիւնն է :
Ոչ իսկ ես հորիզոնին :
Եւ գիտէիր որ անխուսափելի էր այս հեռացումը
դուն ֆեզմէ
սուանց տեղ մը հասած ըլլալու յոգնութեան նման :
.. Ինչո՞ւ գրել, ուրեմն :
Կը հարցնես
Եւ կը շարունակես
ոչ թէ քաֆուն խորհուրդի մը փնտրումի խաբկանով տարուած
այլ՝
անձնատուր չես գիտեր ուրկէ եկած սովորութեան մը թելադրանքին :

Պուէնուս-Այրէս, 12/3/1994

rien à voir avec l'animal, nombre d'œuvres en témoignent. Les masques d'abord, indiquent qu'il ne saurait y avoir, pour nous, d'autre animalité que celle d'une représentation de l'animalité, découlant davantage du simulacre que de la mimesis. La banquise, ensuite, vaste espace de frigidité sur lequel glissent et frétilent quelques phoques en peluche. La violence surgit parfois dans un lieu paradoxal, comme ce mur recouvert de papier peint et qui, sous l'apparence d'une décoration de cabinet bourgeois camoufle des scènes de violence, la guerre et le viol, rappelant les gravures de Goya. Le simulacre gagne la représentation de notre corps dont la nudité se fait image et dont la sexualité n'est plus qu'imaginaire, désormais coupée par le mur de glace de la maladie, comme une concrétisation de l'"amour" lacanien. Pour cela-même, le lit revient-il au plus proche de l'étymologie en devenant exclusivement clinique, "kliné" telle cette chose intitulée "vague", où de vrais draps sont emprisonnés sous la couche d'une pâte noire et cirreuse. L'ennui de nos sociétés est présenté par les reconstitutions de bureaux, avec parois vitrées, machines à écrire et ordinateurs, où il arrive que l'artiste vienne prendre place, à l'instar d'un bureaucrate astreint à des horaires qui seront la con-

signation de sa vie (biographie). Ennuis, violence et maladie nous jettent, plus loin que la crise, dans la désolation. Il y a l'option du suicide, proposée par un artiste, mais aussi celle de l'espoir, ou plutôt d'une suspension à laquelle nous autorisons quelques tatamis posés près des télévisions et, plus encore, les "Buddha home", ces petites tentes aux couleurs vibrantes dans lesquelles nous sommes priés d'entrer sans nos chaussures. La désolation en appelle à une note religieuse et exhibe du même coup l'ineffectualité et l'inefficacité des réponses que prétendent donner le scientifique et le politique au frisson contemporain. Les installations d'hier ont lié l'art à la dérision, celles d'aujourd'hui, gardant le même langage formel ou ne sachant s'en débarrasser, montrent tout autre chose, le désarroi. L'exposition du Musée d'Art moderne de la Ville de Paris a signalé un tournant, le passage du méta-langage au langage. Quelque chose a eu lieu : les installations s'étaient installées dans le luxe d'un nominalisme épuisé, elles exhibent maintenant, sous une même apparence (les oripeaux des aînés), un retour à la naturalité du langage, soit encore le rapport de l'œuvre à la racine de l'esthétique, la sensibilité.

ՎԱՋՐԻԿ ԲԱՋԻԼ

Ռ Ա Հ Վ Ի Ր Ա Ն

Ծառերի հեկտր շաղպատում անհետնում է ինձ եւ հեգ:

Նա գողացել է օրը ցերեկը խորշելով, գիշերը անհացնելով:

Օդն է միայն օրացած, գարտուղի ծալալում իմ եւ քո միջեւ:

Իսկ մե՞նք: Հատուկներս կհտեր

լռայի կուտարեամբ ամառում եւ նրա մէջ,

որը մեր ծնունդը կտակում է պատուհաններին:

Վայրկեանը տիպաւորում է իմ աչքերը պարունակող լռայի մէջ,

որը անստուեր բայց իրանիշ ծագում է պատուհանների արանքում

խօսեցնելով մեզ Աշխարհի մասին:

Անձը յարապատումն է երկուայ, երբ ես սահմանադուրծ փորձեցի գտնել աշխարհի բոլորակը՝

ապաստարանը շարժում սիրող աչքերը շարժող բայց անհետաքրքիր շնչող մի կենդանու՝

սահմանագիծը տարտղնուած, տղմաւեր, ազտադուռն անձի,

որը ծածկում է նշխարները ինչ որ մի երկուայ, որը նայիսկի հեկտաբ լինելու ունակագուրկ

ուրիշ ոչինչ էր՝ սուկ երկի,

երբ հաշտուած կամքով ձայնակցում էի լուսնին եւ արեւին արեւին ու լուսնին

եւ քողանցում հեգ:

Կարո՞ղ ես խօսել:

Առանձին կանգնած կրկնօրում ես ծնունդդ անխօս:

Կարծես թէ միայն ելք ես, անցում, հատում:

Տարփանք: Բայց ինչո՞ւ, երբ լուս ես, լուս ամէնին եւ հաւաքում ծագման յոյսերը հեռակայ, լակայ իրերի, որոնք չեն ուզում անտեսուել քո առանձնութեան մէջ

եւ չեն անտեսում որ դու ելք ես, անցում, հատում,

որ ուզում ես լուսել, կանգնել, բացա- դրուել անապակաւաբար:

(Շար. Ա. Էջէն)

Ժամերի կ'ընեն մեր թիւզանդական ճարտարապետութեան պատերուն մէջ ուսումնասիրելու, ինչպէս նոյն ազգը, այնպէս եւ իրեն գեղարուեստային ճարտարապետութեան ոճը: Այս չէնքերը՝ տարածուած Հայաստանի այս այն կողմերը որքան որ բիւզանդական ճարտարապետութեան ոճին կը նմանին, սակայն իրենց առանձնաշատուկ սեփական նիշերով բոլորովին կը տարբերին անոնցին (ընդգծումը մերն է, Վ. Յ.): Եւ այսպէս ճարտարապետական ոճերու շարքին վրայ կ'աւելցնեն նաեւ իրատ հետաքրքրական ոճ մը -- Հայկական արուեստ (l'art arménien) -- անունով: «Վերջին հրատարակութեան մէջ (Manuel d'art byzantin), -- շարունակում է Թորամանեանը, քանի մը քայլ աւելի առաջ կ'ընթաց Հայ արուեստին ինքնուրոյն զարգացումը եւ անոր օտարներու վրայ ունեցած ազդեցութեան ճանաչման մէջ, հիացմամբ կը դրուատէ Հայ ճարտարապետներու գերազոյն հատկութիւնը եւ քաղաքակրթութիւնն ու գեղարուեստ տարածելու մէջ հին դարերուն անոնց կատարած մեծ դերը: Սակայն դժբախտաբար, ուրիշ աղբիւրներէ քաղած թերի եւ հակասական տեղեկութիւնները վատ ազդեցութիւն ունեցեր են իր եզրակացութիւններին վրայ: Անոր մեծ մասամբ ծանօթ չեն Հայոց 7-րդ դարէն առաջ կանգնուած յիշատակարանները: Ասկէ դատ, իրեն օգտուած աղբիւրներու մէջ այնպիսի յիշատակութիւններու, անուններ ու պատկերներ կան, որոնք անպայման 7-րդ դարէն առաջ են, սակայն նոյն աղբիւրներու հեղինակները դանազան թիրախացութիւններով և կամ նուազ հետաքրքրութեան պատճառով ժամանակակից արուեստի տեղեկութիւններ արձանագրած են անոնց մասին»:

Այս մէջբերումով սահմանափակեց Թորամանեանի կարծիքը Հայ ճարտարապետութեան վերաբերելով Շառլ Տիլի թէ գրական եւ թէ թերի գնահատականի մասին: Թորամանեանը այն համոզվէն կարծիքին էր, որ Հայ արուեստի ու ճարտարապետութեան գիտական ուսումնասիրութիւնը առաջին հերթին Հայ գիտնականների խնդիրը պիտի լինի: «Տեղիքի տամբար» մենագրութեան առաջարկումն ա գրում է. «Եթէ կը կարծեն, որ եւրոպացի գիտնականը, արուեստագետը իրենցմէ աւելի խելք ու կարողութիւն ունին եւ իրենցմէ աւելի լաւ կը տեսնին ճշմարտութիւնը, կը սխալուին: Այս կարծիքով նախ ինքզինքնին կը դրկեն արժանապատուութենէ ... ես կը կարծեմ, որ բաւական է այլեւս եւրոպացի գիտնականին մեծ մասամբ իրականութենէ եւ ճշմարտութենէ զուրկ տեսութիւններն ու վճիռները թողուլ, որ պատմութիւնը անմահացնէ: Մինչեւ ե՞րբ անոնք պիտի դրեն եւ մենք թարգմանենք որպէս երկրային պատգամներ գիտութեան կարօտ մեր հասարակութեան մատակարարելու համար»: Թորամանեանի գիտական փաստագրութեան մէջ Հայաստանի 5 - 7-րդ դարերի ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը գերակշռող տեղ է դրուում: Հայաստանի բազիլիկ եւ դմբէթաւոր եկեղեցիների տարատեսակ յատակապատման եւ ծաւալատարածական յորինուածքների խորամուխ ուսումնասիրութիւնը նրան հնարաւորութիւն է տուել ներկայացնել Հայ ազգային ճարտարապետութեան զարթոնքի ճշմարտացի պատկերը:

Եւրոպական արուեստագետներից Վիլհելմայի համալսարանի արուեստների պատմութեան ինստիտուտի ղեկավար Ժոզեֆ Ստրիկովսկին առաջին հերթին հետաքրքրուեց Թորոս Թորամանեանի գիտական համարձակ երբայնգումներով, ցանկութիւնն ունեցաւ ծանօթանալու նրա հարուստ փաստագրական նիւթերին: Հարկ է նշել, որ այդ ցանկութիւնը երկուստեք էր, քանի որ Թորամանեանը կողմնակից էր Ստրիկովսկու կողմից

համամարդկային քաղաքակրթութեան աւելցնելը արեւելքում տեսնելու գիտական գիրքին: Ինստիտուտի ուսանող եւ աշխատակից Լեոն Լիսիցեանը (ազգազբրագէտ, բանասէր, Ստեփան Լիսիցեանի որդու) ջանքերով եւ հօր ավակցութեամբ յաջողում է 1913 թ. դարնանը, Թորամանեանին Վիլհելմայի հրատարակելու նա ծանօթանում է Ստրիկովսկու, մասնակցում Հայ արուեստի ու ճարտարապետութեանը նուիրուած սեմինարին, ներկայացնելով իրեն հետ քերած Հայ ճարտարապետութեան յուշարձանների վերաբերելու հարուստ նիւթերը, մեծ հետաքրքրութիւն է առաջացնում:

Մեկնելուց առաջ աւստրիացի եւ Հայ գիտնականները պայմանաւորում են համատեղ աշխատութիւն ստեղծել Հայ ճարտարապետութեանը նուիրուած, որի համար Թորամանեանը պիտի լրացնէր իր նիւթերը, իսկ Ստրիկովսկին՝ գիտական մի արշաւախումբով Հայաստան ժամանէր, սեղում ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով:

Ստրիկովսկու արշաւախումբը, որի կազմում նաեւ Լեոն Լիսիցեանն էր, Հայաստան ժամանեց նոյն տարուայ աշնանը: Ուղեկցութեամբ Թորամանեանի շուրջ 20 օր ստուգութեամբ շրջեցին յուշարձաններ, չափազերցին ու լուսանկարեցին, գիտական հարուստ աւարով վերադարձան Վիլհելմայ, պայմանաւորուելով յաջորդ տարի նորից հանդիպել Վիլհելմայում ու միասին գործի անցնել: Սակայն այդ անդիպումը տեղի չունեցաւ: Սկզբեց առաջին աշխարհամարտը եւ ակամայից բաժանուեցին երկու գիտնականները: Վիլհելմայում մնացած Թորամանեանի հարուստ նիւթերով (չափագրութիւններով, լուսանկարներով), եւ իր արշաւախումբի ձեռք քերածով, աւստրիացի գիտնականը նաեւ ամուր հիմնուելով Թորոս Թորամանեանի գիտնականի բողոքներով վրայ 1918 թ. գերմաներէն լեզուով վրատարակեց իր երկհատոր, ստուարածաւալ, բազմաթիւ դժգոյքներով ու նկարներով հարուստ «Die Baukunst Der Armenier und Europa» (Հայերի ճարտարապետութիւնը եւ Եւրոպան) մենագրութիւնը: Այն ուսմանը պէս պայթեց եւրոպական արուեստագիտութեան երկնակամարում, առաջացրեց բուռն ընդդիմադիրներ, նաեւ կողմնակիցներ: Անկախ դրանից, մեծապէս նպաստեց հայկական ճարտարապետութեան ճանաչմանը (1): Այս առթիւ հարկ է առանձնապէս յիշատակել խոստումնալից երիտասարդ գիտնական, 1921 թ. քաղաքացիական ներքին բախումներին զոհ դարձած Լեոն Լիսիցեանի բացառիկ ծառայութիւնը (որպէս ազգութապետ, թարգմանիչ, վերծանող), մենագրութեան հրատարակման գործում, որի մասին շնորհակալութեամբ յիշատակում է հեղինակը: Մենագրութեան առաջաքանում գրուածանքի ջերմ խօսքեր կան նաեւ Թորոս Թորամանեանի հասցէին եւ խոստովանութիւն, որ նրա գիտական հայեացքները եւ նիւթերը լայնօրէն օգտագործուել է իր կողմից: Բայց Թորամանեանը չմիտնարուեց դրանով, մասնաւոր որ իր նիւթերի գրաւի մասը կորստեան մատնուեցին: Որհնդային Հայաստանի կառավարութեան միջամտութեամբ միայն դրանց մի մասը յաջողուեց ետ ստանալ: Ամփոփելով նշենք որ, դեռեւս նախախորհուրդներ չըլնում Թորոս Թորամանեանը հանդէս եկաւ որպէս Հայ ճարտարապետութեան ըզուր առաջին ուսուցչապետը, յիբաւի ուսնողիսն:

Իր բեղմնաւոր գիտական գործունէութեան վերջին փուլը ընթացաւ Ուորհոլային Հայաստանում: Եւ իր կարողութիւնները ու սպաս դրեց յուշարձանների պահպանութեան գործին՝ որպէս 1923 թ. բուստեղծուած հնութիւնների պահպանութեան կոմիտէի գործունէայ անդամ: Դառնալով գիտութեան եւ արուեստի ինստիտուտի

աշխատակից, ղեկավարեց պեղումները Էջմիածնում եւ Գեղարդաձորում: Կարճ ժամկետից Հայաստանի պատմութեան թանգարանի ճարտարապետական բաժնիչը, շարադրելով թեթեւեղ այնուց յետոյ ճարտարապետութեան յուշարձանների մասին: Չուղահետարար տարիներ շարունակ ջանադիր աշխատեց, ամփոփելով իր 30-ամեայ ուսումնասիրութիւնների արդիւնքները, որոնք յաւով ի վիճակի չէր զու աւարտել առողջական վիճակի վատ թարացման ու վերահաս մահուան պատճառով:

Հայաստանի կառավարութեան մամբ Թորոս Թորամանեանի գիտական հարուստ փաստագրութիւնը հրատարակութեան նախապատրաստուեց եւ «Նիւթեր» Հայ ճարտարապետութեան պատմութեան խորագրով լույս տեսաւ երկու պրակներով (1942 եւ 1948 թթ.): Այդ հիմնարար երկը հատորակը սեղանի գիրք պարճաւ Հայ ճարտարապետութեան պատմական մի քանի սերունդների համար եւ տակաւին պահպանում է գիտական անանցանելի արժէքը: Քանզի Թորամանեանի կատարածը յիբաւի մեծագործութիւն է, որի առաջ մշտապէս պիտի խոնարհուել լրջոր ջանքը, ում համար թիանկ է հարգապատգով ըզի ճարտարապետական փաստագրութիւնը, նրա խոշորագոյն ուսումնասիրի ճշմարիտ գնահատականը:

Չարարարուելով «Նիւթեր»-ի, Թորոս Թորամանեանի նամակների եւ նրա մի քանի աշխատութիւնների լրացուցիչ հրատարակմամբ, տարիներ առաջ Հայաստանի Հանրապետութեան ազգային Ակադեմիայի արուեստների պատմութեան ինստիտուտի կողմից ձեռնարկուեց Թորոս Թորամանեանի գիտական փաստագրութեան նոր, աւելի ընդգրկուն ու ինքնուրու կազմուած բազմահատորակի տեղեկագրութեան հրատարակութիւնը, մէջը առնելով «Նիւթեր»-ից դուրս մնացած մի շարք խիստ արժէքաւոր աշխատութիւններ՝ այդ թիւում Թորոս Թորամանեանի «Մատենադարան»-ի տարածքում գտնուող յուշարձանների (որոնք կամ լիովին աւերուած են կամ Հայ գիտնականների ուսումնասիրման համար դարձել են անմատչելի) (2):

Վերջին տասնամեակների ընթացքում Թորոս Թորամանեանի երազները՝ Հայ ճարտարապետութեան գիտական ուսումնասիրութիւնը հանել լայնահուն ուրու վրայ սկսել է իրականանալ: Նրա մերթապէս զինուորագրեալները հայրենիքում եւ արտասահմանում (Փրանսիայում՝ Երկրի Պալմիրուշայթիւր, Սլոբոյանի Տիլհերեւեանը, Արմէն Սալաւորեանը, Ժան Միշէլ եւ Նիքոլ Թիէրինը, իմ ամբողջ Պատրիկ Տոնապետեանը), շարունակելով Թորամանեանի գործը նորանոր հատորներով հարստացնում են Հայ ճարտարապետութեան պատմութեան մատենադարանը: Այդ ուղղութեամբ չափազանց հարուստ է մեր իտալացի բարեկամներ Ատրիանօ Արվակո-Նոյվելլոյի եւ Փապի Գուեչոյի, իսկ Գերմանիայում՝ Արթի Հայնազարեանի ներդրումը: Բարի եղբորդին:

Որքան պիտի ուրախանար մեր ուսուցչապետ Թորոս Թորամանեանը, թէ յայտնուէր մեր օրերում:

ՎԱՐԱՋՂԱՏ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

1994, Մարտ 3

(1) Դեռեւս գէտ դար առաջ տողերի հեղինակի նախածնունդից մեծագրութիւնը բարգւաճում էր ուսերէն ընթացող մերի աւելի լայն շրջանակի ներկայացնելու նպատակադրութեամբ: Միայն տարիներ առաջ դրա առաջին հատորը ներկայացում է իրատարակութեամբ, որը ներկայ պայմաններում մնացել է անհրազոյթի:

(2) Արդէն տպագրութեամբ պատրաստ երկու ստուարածաւալ հատորները, Ստրիկովսկու գրքի առաջին հատորի պէտք լիովին պատրաստ է տպագրութեամբ բայց նոյն պատճառով անշարժ է մնացած: Ինքնի՞ք է արդեօք Փրանսիայում գտնել մեր հայրենասէր բարեբար, ներպայել նպատակաւոր դրանց տպագրութեամբ: Պատասխանի կը պատեմք «Յառաջ»-ի միջոցով:

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԹԱՆԱՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ
ԾՆՆՈՒՄԸ ԷԱՐԻՒՄԵԱԿԻՆ

ՄԱՏԹԵՆՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

«Եթէ մեանիմ, օտար աստղերու տակ, հեռուն, այն ատեն՝ քանի մը արցունք բաւ է ինձի, բայց եթէ հողակոյտս մօտ ըլլայ քեզի, կ'ուզեմ որ, ամէն գարունի, գոգ-գոգ լեղակ քերթս ինձի. շատ կը սիրեմ ես այդ ծաղիկը... Լեղակի գոյն ունէին աչքերը այն երկու աղջիկներուն, որ սիրեցին զիս ու տառապեցան, եւ որոնց սիրոյն արժէքը շատ ուշ գնահատեցի ես, գնահատեցի միայն այն ատեն՝ երբ մէկ ոտքս գերեզման իջած էր արդէն:

Արցունքի կամ լեղակ, չմտնա՛ս»: Իր կեանքի վերջին օրերուն, այս էր բաղձանքը Մատթէնոս Զարիֆեանին, որ մեռաւ 1924 Ապրիլ 9-ին, հազիւ 30 տարեկանին: Իրմով, թերեւս, կը փակուէր արեւմտահայ գրականութիւնը, այն իմաստով, որ անոր մայր ոտանիկն՝ Պոլսոյ արտագրած վերջին կարեւոր անունն էր:

Ծնած էր 1894 Յունուար 4-ին: Ծննդեան հարիւրամեակը թերեւս ամէնէն յարմար առիթն է եղբարարիտ այս բանաստեղծի կեանքին մէկ էջը քիչ մը աւելի լուսաւորելու:

«Կտակ» խորագրուած վերոյիշեալ տողերը կը յիշեն, որ «լեղակի գոյն ունէին աչքերը այն երկու աղջիկներուն, որ սիրեցին զիս ու տառապեցան»: Մենք պիտի անդրադառնանք տառապած այդ երկու աղջիկներէն առաջինին:

Ան կը յիշուի «Կեանքի ու մահուան երգեր»-ուն (1922)՝ Զարիֆեանի երկրորդ թերթագիրքի երկրորդ բաժնի ձօնին մէջ. . .

«Սրբուհիին» իրեն տուած տառապանքիս փոխարէն:

Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին մէջ ստորագրուած յօդուածը շարքով մը՝ «Մատթէնոս Զարիֆեանի մահին մտերմօրէն» (թերեւս 1974-ին. կտրածոյ մը ունինք միայն, անթուակիր), Սրբուհի վարդանեան ի միջի այլոց որոշ մանրամասնութիւններ կը բերէ. . .

«Իրարու կը հանդիպին Արեւմտալի, ամառուան գիւղագեղանքեան շրջանին, 1915-ին: Բանաստեղծին մեծ քայլը՝ Պերնուիին կ'ըլլայ զանազան իրարու ծանօթացումը:

Երկու երիտասարդները երկար կը խօսակցին մարզական ու գրական նիւթերու շուրջ: (Ինչպէս տեսանք Մատթէնոս մարզիկ էր. իսկ Սրբուհիին եղբայրներն ալ մարզամեքի հանդէպ մեծ սէր ունեցած են ու խոշոր շարժում ստեղծած՝ Իսթ-անպուլի մեր համայնքին մէջ):

(...) Մատթէնոս իր բոլոր հետ նոր վերադարձած Պէրնուիէն՝ հանգիստի իր օրերը եկած էր Արեւմտալի շարունակելու:

Բանաստեղծը երկար շրջան մը Սրբուհիին ունեցած է իրեն ներշնչարան: Կը քոթակցին: Իսկ ամառները, Գրեմար կըզգի երկու հեռուար ժայռերը իրենց սիրոյն լուսնի խառնուած վիճակը կ'ըլլան:

Երեք տարի վերջ, իր նամակները կը գաղտնեցնէր Զարիֆեան:

Սրբուհի կ'ամուսնանայ, բայց իր սերտին մէջ պահած է միշտ այդ աստիճան սէրը. չէ բաժնուած Գրեմարէն: Մինչեւ Պոլսէն իր վերջնական բաժանումը՝ պտուտեցաւ Գրեմարի ծովափը ու շնչեց այն միջավայրին մէջ ուր իր սիրածին հետ շնչած ու պտուտած էր»:

Այս կտրածոն անձամբ յանձնած է մեզի նոյնինքն Սրբուհին, որուն հանդիպեցանք 1984-ի վերջերս, Պուէնոս - Այրէսի մէջ, 87 տարեկան հասակին: 94ամեակի ամուսինը մահացած էր նոյն տարուան Յունիս ամսուն, 65 տարեկան ամուսնութենէ ետք:

Հակառակ իր յառաջացած տարիքին, Սրբուհի յաւ կը պահէր իր մտքի արթնութիւնը: Դէմքն ու արդուարդը ցոյց կու տային, նոյնիսկ պարագայական դիտողին, որ այդ կինը արտակարգ գրաւորութիւն մը ունեցած էր իր երիտասարդութեան շրջանին: Այդ բաց կապոյտ աչքերը պէտք է շատեր դիմեցած ըլլային: Առաջինը՝ Զարիֆեան: Յետագային, կողմնակի վկայութենէ մը պիտի իմանայինք, որ Սրբուհի կրտսեր քոյրը՝ Հիլման, Պոլսոյ մէջ գեղեցկութեան թագուհի հրաշակուել էր ժամանակին:

Սրբուհի Յակոբեան ծնած է Պոլիս, 1897-ին, բարեկեցիկ ընտանիքի մը ծոցին մէջ: 1919 Օգոստոս 24-ին ամուսնացած է Հայկ Յովակիմեանի հետ. երկու մանչ դուստկ ունեցած է, այնուհետեւ՝ չորս մանչ թոռնիկ: 1950-ական թուականներու սկիզբը իր ընտանիքին հետ Պուէնոս-Այրէս հաստատուած է, ուր եւ մահացած է 1986-ին: Իր աւագ եղբայրը՝ Լեւոնը, Պոլսոյ սկստական շարժման կարեւոր անուններէն եղած է, երկրորդը՝ Արիսը, մարզական ուշադրաւ գործունէութիւն տարած է:

«Թէ ինչու Զարիֆեան դադարեցուց իր քոթակցութիւնը. կ'ըսուի որ լաւագոյն պայմաններու մէջ ապրելու վարժուած մէկը դժբախտացնել չէ ուզած: Սրբուհի հարուստ էր:

Իսկ Սրբուհի կ'ըսէ. . . Ըսին որ հիւանդ է, պէտք չէ որ ամուսնանար... (նոր ժամանակներու ըմբռումը դեռ հետու էր)» (Ս. Վարդանեան):

Հարց տուինք Սրբուհիին այդ թրջութեան ճակատագրին մասին: Պատասխանեց, թէ ժամանակին ոչնչացուցած է նամակները, ըստ երեւոյթին (զոնէ իր խօսքերէն կարելի էր այդպէս հետեւեցնել) ընտանեկան որեւէ անխորժ գէպէ խուսափելու համար: Նոյնիսկ Զարիֆեանին լուսաւոր շունէր. միայն թերթէ մը միջոցով ու աւելի հաստ թուղթի վրայ փակցուած նկար մը: Պահած էր, սակայն, 1970-ին անուած բանաստեղծի շինարարի մէկ ընտանիք լուսանկարը, զոր մեզի յանձնեց (ներկայիս կը գտնուի Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարանը):

Սրբուհի Յակոբեան Պոլսոյ մէջ մտերմ էր Սրբուհի Վարդանեանին՝ Թատեոսարի Արման Վարդանեանի մօրը: Միանա Թէօօթեան կը գրէ. . . «Հայկազն Վարդանեան եւ Սրբուհի Վարդանեան, Արմանի հայրն ու մայրը, 1920-1970 յիւանդեանի պոլսահայ մտադրականութեան մաս կազմած են իրենց երգարուեստի եւ երաժշտութեան շնչուած տաղանդով, նաեւ գրականութեան եւ առհասարակ մշակութային կեանքի հանդէպ ցայտուն հետաքրքրութեամբ: (...) Վարդանեաններու բնակարանը ժամագրապաշար մըն էր մտքի, գրչի եւ արուեստի մարդոց համար. ապստամբ ու երգիչ՝ առօրեայ տափակութիւններէ յազնած երգիչ. . . երգչուհիներու, դաշնակահարներու, ջութակահարներու, գրագէտներու, խմբագիրներու և ծարձակ նոր տաղանդներու, որոնք պարբերաբար կը մէկտեղուէին հիւրընկալ այդ յարկին տակ՝ "մշակույթ շնչելու" համար» (Ռաբ մը գրականութիւն, Բ. հատոր, Նիւ-Եորք, 1982, էջ 482):

Ի դէպ, Վարդանեան ամուր բարեկամ եղած է պոլսահայ բանաստեղծուհի Արմանուհի Թերզեանին (1910 -- 1992): Անոր թերթագրական երկու հատորները՝ «Հետեք» (1968) եւ «Մթնշաղ» (1978), հրատարակուած են Հայկազն Վարդանեանի մեկենասութեան շնորհիւ: Սրբուհի Յակոբեանը երկու գիրքերը ունէր (այժմ՝ մեր մօտ), որոնցմէ երկրորդը հետեւեալ մակագրութիւնը կը պարունակէ. . .

«2. 7. 978. Ետտ սիրելի Սրբուհիս կզգիի մէջ անցուցած մեր այնքան ջերմ բարեկամութեան յիշատակով առցուն. Ա. Թերզեան»:

Ս. Վարդանեան արժանութիւնարեակ իր ընկերուհիին ուղարկած է Մատթէնոս Զարիֆեանի բանաստեղծութիւններու Փրանսիական լեզուի պոլսահայ գրագէտ Եղուարդ Սիմօնեանի (1906-1979) կողմէ. . . «Matheos Zarifian. (Poète-Arménien), Un bouquet de ses poèmes»: Գրքոյից հրատարակուած է Զարիֆեանի քոյր, գրագիտուհի Սիրան Սեպալի (1903 -- 1973) ամուսնին՝ Ներսէս Քիսիկեանի ծախքով: Մակագրութիւնը կ'ըսէ. . . «A Serpouhie et Haygaz Vartanian. Seza. 1971 Beyrouth».

Եղ. Սիմօնեանին մեր մօտն է նաեւ Թրքահայ Ուսուցչաց Միութեան կողմէ հրատարակուած «Ջահակիթները» հատորը (Պոլիս, 1973. նշուած է «Ա. հա-

տոր», բայց երկրորդ մը սպուած չէ): Ս. Յակոբեանին պատկանած այդ գիրքին մէջ, իր իսկ ձեռագրով կը գտնենք հետեւեալ տողերը էջ 283-ի վրայ. . .

«Եթէ Մօտայի մէկ ամբ պիտի յիշուի եղիայի ժայռով, Սկիւտարի մէկ բարձուքը Սիւմանթոյի ծառով, Մատթէնոս Զարիֆեան ալ Գնալը կզգի բարձուքի վրայի անմոռանալի ժայռով»: Արտագրուած են այս տողերը, ուր կ'է: «Ամուսնանալի» անականի օդադարձուած կը թուի անձնական նրբերանդի արտայայտութիւն, որ միայն կրնայ բըխել անհատէ մը, որ այդ ժայռին իմաստը զիտէ: Նոյնինքն Սրբուհիէն:

Իրմէ մնացած են մեզի Զարիֆեանի երկու հատորիկները՝ «Տրամութեան եւ խաղաղութեան երգեր» (Պոլիս, 1921), եւ «Կեանքի ու մահուան երգեր» (Պոլիս, 1922): 1919-էն ետք յայտնապէս խոլուած են կապերը, քանի որ որեւէ ձեռագրութիւն չենք գտներ: Սակայն, ասիկա չի նշանակեր որ Զարիֆեան մոռցած է իր առաջին սէրը. ընդհակառակն, անոր հետքը քաղցր կ'երեւի երկու հատորներուն:



մէջ, ու երկրորդը, ինչպէս ըսինք, ամբողջ բաժին մը ունի իրեն ձեռուած:

Այդ հետքը յատկապէս մատնանշուած է Սրբուհիի կողմէ, «Տրամութեան եւ խաղաղութեան երգեր»-ու էջ 30-ը կը բերէ «Ամէն անգամ» թերթուածը, որուն առաջին քառուկը կ'ըսէ. . .

«Ամէն անգամ որ հովի ըլլայ Այսպէս քայտնու ու մտքիմ, կարելի չէ՛ որ չը խորհիմ Այն գիշերին, ժայռին վրայ» (ընդգծումը իրն է միշտ)

«Ոսկի վտակ»ը կ'ըսէ (էջ 37). . .

«Ճիշտ այդպէս քայր վարդերու պէս, Մեր շրթները, սիւնէն գինով, եկան այնքան իրարու բով՝ Որ... Ա՛հ, ես չեմ գիտեր ինչպէ՛ս՝

Եզելինի այդ ծառին տակ, Հոգիս, դողով մ'անհնարին, Գտաւ ուղին մե՛ծ անտառին՝ Ուր կը հոսի ոսկի վտակ...»

«Ամուսնանալի ժայռը» քանիցս կ'երեւի. երկնումի վայրն է, թերթուածին աշխարհագրական սահմանումը:

«Դիտել ծովափն ուր այնքան Աստղեր սրտէս դուրս ինկան.

Ու ժայռն այն ծեր՝ ուր հոգիս Վարդի մ'համար լքեց զիս...» (Որոշում, էջ 126)

«Բայց ամէն անգամ որ այսպէս լռին Գուրը լուսնկայ գիշեր է խաղաղ, Միտքս չի՛ կեանք, աչքերս կ'այլային, Ա՛հ, յիշատակը այն խոշոր ժայռին...» (Հսկում, էջ 22)

«Երկու անդունդ» թերթուածին մէջ, ժայռը կը «մերուի».

«Արշալոյսը նոր կը ծագէր՝ Երբ մեմ գացիմք, սիրածս ու ես, մեր ժայռին տակ» էջ (26)

Այս բանաստեղծութիւնը նոյնպէս գրուած է 1918-ին, թուականը ընդգծուած է. նոյնն է պարագայ «Ներսէս» (էջ 77), «Միտքս» (էջ 55) և «Ինչպի սէր» (էջ 40) կտորներուն: Այս չորս միայն թուագրուած են ամբողջ գիրքին մէջ: Վերջինը, իր պարզունակ ոճով, խոստումն է ամբողջ ծէսի մը.

«Իմ կզգիս իր կզգին Կերքամ նորէն յամբօրօր. Այսպէս կ'ընեմ ամէն օր Երբ պիտեմք յուզուին...»

Նաւալարս է պատանի. Ունի տօգոյն, վէտ աչքեր. Իր նազիկումով չի գիտեր Թէ զիս ինչի՛ կը տանի...

Եզելինի տակ մթին Լուս կ'ապաւէ ան հիւսա. Գիշ մ'ալ կեանք՝ քոյր շատնայ Յուզումը իր հոգիին,

Որ երբ հասնիմք մեր ժայռին՝ Տօգոյն ըլլայ իր սէրէն, Ու իր թեւերը բերեն Նորէն այն դո՛ղը մթին...»

Սիրոյ վիպագրաւու ու բարախուն պատմութիւն մը, որմէ Զարիֆեանին մնացել են վարդ մը («Վարդի նուէր», էջ 62) եւ... աստղ մը («Գիշերալուստ», էջ 56):

«Հեռուն, հեռուն, է՛ն հեռուն, Հիւսնախառն կապոյտ մը անա յուշիկ կը ծագի

ՊԶՏԻԿ ԱՍՏՂՍ, ԻՄ ԱՍՏՂՍ. ԱՅՆ ՈՐ ՆՈՒՆԻՐ ԵՄ ՍՍԱՅԵՐ, ՀԻՆ ՕՐԵՐՈՒՆ,

Լուրք, մշուշուտ գիշերի մը անգործիմ մէջ, Տօգոյն վարդի մը նմանող այն հոգիէն...

Ուրիշ նշումներ ալ կան, միշտ ընդդէմ ծումներու եւ, մէկ անգամ, հարցական նշանով («Խոստովանութիւն», «Հին օրեր են...», «Փախուստ», «Կէս-գիշեր», «Գիշերալուստ» եւն. . .):

Ինչ կը վերաբերի «կապոյտ բոցը» արքին (թերեւս ակնարկութիւն սիրականէ աչքերուն, եթէ անշուշտ խորհրդագրաւ տակաւ տարրի մը ցուցումը չէ՛), Սրբուհի Յակոբեանի օրինակը կոչուի ամէն նոր շումէ. բովանդակութեան ցանկին մէջ, միայն, ենթաբաժնի յորսր թերթուածներուն խորագիրները սուրանկուն փակագիծով մը տնտուած են, կարծես ընդդէմ յու համար ամբողջ շարքին միանալու. նոթիւնը: Դիտելի է, որ «կապոյտ բոցը» կրնայ նկատուիլ «Տրամութեան եւ խաղաղութեան երգեր»-ու անդրադարձ մտաւորում մը, աւելի բարդ ու յզկուած ոճով:

Վերոյիշեալ հատորին «վերաբար» խորագրուած յառաջաբանին մէջ, եղ. Սիմօնեան կը գրէ. . .

«Կը յիշեմ իր յուզարկաւորութիւնը, Սկիւտար, Ապրիլի ամպամած յետմիջօրէ մը. երբ ես աւելի կանուխ փութագիր էի եկեղեցի, դեռ վարանաւ ու լակեղ պատանի: Տանարը դատարկ էր սակաւիւն, եւ միայն երիտասարդ աղջիկ մը կանգնած էր դագաղին դէմ ու գալանաբէն կը հեկեկար, իր սեւեռուն ու սեւեռուոր գլխին մէջ կեղծուած: Անձամբ խոսով մը զիս պահած էր գաւիթին մէջ, եւ բնագը մը ինձի ըսած էր թէ «պոթիկ աղուոր աղջիկն» էր ան, որը Զարիֆեանը երգած էր լացող ու դողաւար բառերով, եւ անոր խոստովանած իր մեծագոյն կրտսերը. . . «Արցունք կամ լեղակ, չմտնա՛ս»...»: Նրբախառն ու լքախոսայտ այդ պարմանուիին նման էր արդէն դագաղին առջեւ ծաղկած լեղակեմի մը (էջ 12):

Թերեւս այդ լացող աղջիկը նոյնիմ էր՝ Զարիֆեանի երկրորդ սէրը, բայց «Կտակ» ընթերցումը անմիջապէս կը ցուցնէ, որ անոր հասցէագրուած չէր քանի որ հոր խօսք կայ իր սիրած երկու աղջիկներուն մասին: Այդ տողերը, հասանարար, լողողած են մօրը:

«... Մամա, միակ աղջիկն է որ սիրեցի. մէջ մը բերէք տեսնամ, ըսեր է մօր պաղապարտին, իր Մեծ կզգի անցուցած վերջին ամիսներուն:

Բանաստեղծին այս փոփոխը չեն իմացուցեր Սրբուհիին, ամուսնացած կնոջ մը համար պատուարեր չկանալով:

Սրբուհիին համար ասիկա տառապանքի նոր առիթ մը կը ստեղծէ, իր բաժանումին տուած ցաւին հետ:

«... Զգոյցայ... Եթէ գոնէ լուր տային... կը կրկնէ սրտի մտքումուսով»:

Ս. Վարդանեանի այս յուշին մէջ անմիջապէս է «միակ աղջիկ» խօսքը, ինչպէս կը տեսնուի Զարիֆեանի թերթուածներէն ու կեանքին, բայց ճիշդ է, որ Սրբուհիին չեն իմացուցած հէք բանաստեղծին փառքը:

«Ձեռ գիտեր թէ որքան կը սիրէի զիմ, կ'ըսէ ան. կը սիրեմ ու պիտի սիրեմ ցրման»:

Պէտք էր տեսնել 60 տարի ետք այդ կապոյտ, արտասուախառն աչքերը, լակեղ զոգոյնուն ձայնը, հաստաւոր համար թէ այդ սէրը յարատեւած էր տեղ մը. հակառակ ճակատագրի կարգադրութեան:

Ու գիտնալ, որ 1974-ին Սրբուհի Յակոբեան գումար մը զրկած է Պոլիսի Մատթէնոս Զարիֆեանի ի յիշատակ հանգանդիտու մը խնդրելու համար:

Թող այս տարի տողերը համեստ փորձ մը ըլլան իրենց յիշատակը արձանագրելու:

Պուէնոս . Այրէս

ներկայացնում է նախ *Writer, Visitor* Գրող, Այցելու եւ ապա անմիջապէս *Writer* Գրող գործող անձի անունն տակ: Հակառակ այն պարագային, որ Սարոյեանի անունը թէ իբր Ուիլիամ (բայց այս խաղում երբեք ոչ իբրեւ Բիլ) բաղձաթիւ անգամներ հարուստ է միւս անձերի խօսքերում, գրողը միշտ հաւատարիմ է մնում իր Գրող (18) կոչումին մինչեւ գրութեան տասնհինգերորդ էջը (տասնհինգերորդ օրը), ուր սեղի է ունենում հետեւեալ փոփոխութիւնը մտաբերի փոխանակման այս պահին:

ՀՐԱՉԵԱՅ - /.../ Բայց հիմա՛, հիմա՛, Սարոյեան, դու ի՞նչ ես գրում:

ԽԱՉԻԿ - Եւ ի՞նչն՞:

ՍԱՐՈՅԵԱՆ - Այո՛, դա հարցի լուսագոյն մասն է: Ինչն՞: Լաւ, ես ձեզ կ'աւսեմ թէ ինչն՞: Որպէսզի մեռնելուց ա. գատուեմ, դրա համար: Եւ մեր բոլորիս որեւէ մի արարքն էլ հինգ դրա համար է (19):

Սարոյեանի մէջ գրող-ի երեւակայութեան շնորհիւ միաւորուել են կեանքում իրապէս ի մի չեկած մի քանի հայ տիպարներ: Սաղի ընթացքում խմբագրատունը դառնում է այն տեղ-ն ուր ամէն մի այցելու եւ բնիկ վերջապէս իրեն հաղորդակից է գտնում միւսի հետ ու մի պահ կարծես ենթակա է դառնում բարակող մի ուրիշ գարկերակի:

ՀՐԱՉԵԱՅ - /.../ Բայց միայն ընտիր ուիլիամ չէ, որ ինձ այստեղ է պահում, արդէն ասացի, պահողը մեք էմք, ամէն մէկս գերազանցում եմք մեք մեզ, ուրիշ չէ՞ Սարոյեան:

ՍԱՐՈՅԵԱՆ - Եթէ քիչդ ես, քիչդ է: Այո՛: (20):

Հայեր խաղում արտայայտուած՝ տաղնապը, Պիլիւսում գրացուած՝ փախուստը ու տասանումը, Յառաջ-ի մէջ գործող անձերի մարմնաւորած միասնական գոհունակութեամբ, գրողի վերջ նշուած խօսքերով՝ իր հաստատում, անչարժ ու գրական աւարտին է հանում: Թատրոնում նման քառութեան կարելի է հասնել սեղի, ժամանակի եւ գործողութեան միութեամբ: *Katharsis*-ի գրեւորման դասական հիմնական օրէնքն ու մտածողութիւնն է սա: Սաղի մէջ գործող անձինք տարբեր ժամանակներին շարունակ, համաձայն իրենց տիպարներին, ունեն մէկ կամ մի քանի եւ ու մուտ: Նրանք, խաղի ընթացքում խմբագրատուն են մտնում կամ գուրս են անցնում ու ներս են մտնում նորից, միաւորուելու համար մի որեւէ նիւթի շուրջ. գործող անձինք գրուցում, վիճում, լուծում ու ունիկորում են իրարու եւ... Մենք եւ՝ Հանդիսատեսներս, խաղի աւարտին խմբագրատան մէջ ի մի եկած միւս տիպարների հետ, հաղորդակից ենք գրողի՝ Սարոյեանի խաղը փակող խօսքին: Սորանք գտնուած է բեմում: Չուր չէ, որ տիպարներից մէկը հոգեւորական է: Նրա հարցադրումն է մեզ միակցում երկրից եկած՝ այցելու Հրաչեայի հարցումին ու հաղորդակցում, գրողի եզրակացութեան հետ:

Յառաջ-ի մէջ, հանդիսատեսի զիմաց միշտ ներկայ են միայն խմբագրատունը՝ իբրեւ տեղ, Շաւարշ Միսաքեանի մեծածաւալ իւզակերի զիմակարը՝ իբրեւ ժամանակի ու գրողը՝ Սարոյեանի իբրեւ գործողութիւն: Յառաջ-ի իբր խաղ բեմի վրայ ունակ է թատերախորհրդի գրութեան խորհուրդն մարմնաւորել: Գրողն իբրեւ մարդ, ճամբորդ ու պատկեր միշտ ներկայ է Յառաջ-ի մէջ:

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒԽԵՂԵՐԻ ՀՆՏՈՐԸ

Սարոյեանի անտիպ խաղերի վերջին գիրքը լոյս է տեսել 1991 թուին՝ Ֆրէդ-ու (21): Այն ընթացողին է յանձնում Ուիլիամ Սարոյեանի գրած վերջին երկու խաղերը: Այս հատորն եւս հրատարակուել է California State University, Fresno-ի կողմից շնորհիւ Տիգրան Գուլումեանի ջանքերի եւ կազմուած է Հայկական Եւրոպայի մէջ կիրառուած գրեթէ նոյն մտնեցմամբ: Այստեղ նոյնպէս գերազանցելի կը լինէր, որ ներածական իբրեւ ծանօթագրութիւն տեղ գտնէր գրքի վերջում: Գրքում ներկայացուած առաջին խաղն է՝

ՎԱՐՇԱՒԱՅԻ ԱՅՅԵՆՈՒՆ
որ անտարակոյս իբր գրութիւն իւրատակ, եզակի եւ կարեւոր գործ է: Այն շարագրուել է 1980 ամիսը՝ Փարիզում: Սաղը, գրական գեղարուեստական եւ թատերական տեսակէտից մեծապէս պիտի շահէր, եթէ ընթացողին ներկայանար իր ոչ խմբագրուած վիճակով. այսինքն

առանց արարների, տեսարանների բաժանուելու: Ընթացողին համար հետաքրքիր ու ապագայ բնագիծի համար օգտաւատ էր կարող լինել, եթէ պահուէր Սարոյեանի գրութեան ստեղծագործական ընթացքը՝ օրից օր եւ ժամից ժամ, բոլոր նշումները:

Առհասարակ ընդունուած է, որ ընտիր խմբին պէտք է պահել ու հրամայել իրեն յարմար շիջում ու բաժակով: Սարոյեանի գրելակերպում, ձեւի եւ բովանդակութեան մէջ ներքին անբախտելի կապ կայ եւ ինձ թւում է գրողի յիշուած նշումները, կարեւոր է որ պահուեն:

Մակերեսային ընթացքումը Վարշաւայի այցելումն, առաջին հերթին անմարտելի ու բեմականօրէն անընդունելի կամ անիրազարծելի է կարող համարուել: Գրողն ինքն իրեն բեմի վրայ՝ տիպար ու գործող անձ պատկերելու փորձն, իբր երեւոյթ նախ կարելի է պարզապէս անձնասիրութիւն կամ անձնակենտրոն կեցուածք համարել. սակայն Սարոյեանի խնդիրն շատ աւելի նրբին է դրուած:

Վարշաւայի այցելումն բժախնդրօրէն ընթացելիս, պիտի նկատենք, որ գրողի անունն իբրեւ տիպար, որոշակի գոյաւիճակ, ապրում ու դիտարկատիւ է արտայայտուած եւ արդարեւ գրողն ինքն իրեն դիտելով, մի նոր գրութեան, մի նոր հաւաքական երեւոյթի դէմ առ դէմ է կանգ առնում: Սաղի մէջ գրողն ներկայացուած է Սատանայ, Բիլի ու Սարոյեան եռեակ գործող անձերի միջոցով:

Բիլի - Յիսուս տարի ճամբորդեցի մեռակ: Սա առաջին անգամն է, որ աներկայացի գրողների մի խմբի մասն եմ կազմում: Լինելով է վերջինը (22):

Բեմում գործող անձն Փիլիսոսայիտն իմաստով հեղինակ փնտրելու փոխարէն, գրամեքենայի հետ խաղալով իրեն՝ Սարոյեան է արարում: Այս գործողութիւնն ինքնակենսագրութեան հետ չի աղնչուում եւ բեմում մարմնաւորուելու ունակութիւնն ունենալու բերումով կարող է բազմաթիւ երանգներ դրսեւորել: Սաղով արարուելու եւ մարմնաւորուելու այս գործողութիւնը բաւականին բարդ, դժուար ու զգայուն հարց է: Այն միմիայն իբրեւ թատերական գուրս արարք եւ խաղ պիտի նկատել ու ներկայացնել:

Ընդհանրապէս թէ ընթացողը եւ թէ գերակատարն իրենց իրենց միշտ կապուած ու կազապարուած են դառնում արտաքինապէս ծանօթ ու մասամբ «ճանաչուած» տիպարի «կենսագրական» սահմաններում: Բեմի վրայ, յաճախ հարցը նոյնն է նաեւ պատմական եւ կամ ժամանակակից հանրայայտ օրէնք անձ արարելիս՝ սակայն երբ գրողն ինքն իրեն, իր գրամեքենայի միջոցով է ներկայացնում ու որոշակի մղումն ենթակուում, խաղի էական հետաքրքրութիւնը հէնց միայն այդ գործողութեան մէջ պիտի փնտրել: Պարզ՝ աջպիտի գրուածը, միայն կեանքի գրուականներէ պատկերացում է կարող մնալ եւ խաղի միջոցով բեմում, կրկին ու կրկին արարուելով, բնականաբար ծիսական բնոյթ է ստանում: Մի խօսքով գրողն իրեն «տեսնում է» իբրեւ «գործող» ու «ապրող» եւ երբ «այն», որը սահմաններում բազում անգամներ վերակերուում է, բնականաբար «նա» դառնում է գրողի գրամեքենայից ծրուած մի նոր էակ: Այս երեւոյթի գեղարուեստական ըմբռնումն ու մարմնաւորումն է, որ թատերական արժէք ու հետաքրքրութիւն է ներկայացնում: Եթէ գրողն ազատ է իր սահմանափակ էութիւնից, իր ճշմարիտ եւ-ից, բեմի վրայ կարող ենք տեսնել նաեւ նրա ներսուտ անձը, զոյուցիւնը՝ Եւի իրական իմաստը (հեղինակը): Այսպիսի մի գրութիւն է Եղիշէ Չարենցի Հեթան շարաւիւղը:

Մեր դարի նշանաւոր եւ ուժեղ անհատականութիւնն ունեցող թատերագիրներն Պերնար Շօ եւ Ռոման Պերնար, առաջինը իւր ծերութեան մէջ, 1949 թուին դէմ գիմաց Շէյքսպիրին, իբրեւ մի տեսիլ նիկային խաղի գործող անձ եւ երկրորդը 1989 թուին անձնապարս լինելուց առաջ, երեք տարբեր գրութեան մէջ, իրենք իրենց ներսուտ են թատերախաղերի մէջ:

Սարոյեանի նմանօրինակ կեցուածք է կիրառել մի քանի անգամ: Դրանց շարքում է դեռ անտիպ մնացած Երեւակայական՝ Սարոյեանի կոչում, մի գործող անձ գործը:

Վարշաւայի այցելումն խաղում Սատանան՝ ինչո՞ւնի ակունքն է, Բիլսը՝ գործող մեքենային պարտադրող յիշողութիւնը, Սարոյեանը՝ խաղի գրողը:

Կարելու է յիշել, որ Ուիլիամ Սարոյեանը միշտ իրեն իբր գրող է յիշատակել եւ ոչ թէ հեղինակ: Ելնելով այս մտքից զժողովարանում եմ ընդունել, որ հատորի

էջ 56-ում ապագրուած գործող անձերի շարքում Սարոյեանի անունն զիմաց նշուած հաղի հեղինակ եւ մեկնաբանող քաղաքութիւնը Ուիլիամ Սարոյեանի գրամեքենային կամ ձեռագրին վերադրել:

ՍԱՐՈՅԵԱՆ - /.../ Եւ հիմա յայտնում եմ, ես գրողն եմ եւ մինչ այժմ խաղի մէջ եղածներին ոչ մէկը չեմ, ես նրա գրողն եմ, ազգանունս Սարոյեան, անունս Ուիլիամ բայց ոչ Արամ կամ Պետրոս, որ հաւանական էր եթէ հօրս հօր անուններով կոչուէի, սակայն կոչուեցի հօր ընկերոջ՝ Ուիլիամի անունով, որ Բողոքական Դրախտն էր յաճախում /.../ (23):

Պարզ է, որ անունակոչումը խնդիր է գրողի համար: Այնպէս ինչպէս Յառաջ-ի մէջ գրող-ից Սարոյեան անցումը իմաստաւորուած խաղ է, այստեղ եւս գրողն իր էութեամբ չի կարող հեղինակ լինել:

Բեմի խաղի ընթացքում այցելում է Վարշաւայի հրէական գերեզմանատունը. Բիլի - /.../ այստեղ եկայ, որ թաղման տեղս տեսնեմ, գերեզմանս, գերեզմանաւարս: Բոլորը, բոլորը, բոլորը, ինչ որ տեսայ հոգիս է հպարտացնում ու գրաւարբացում: Մահ չկայ, անջատում կայ (24):

Վարշաւայի այցելումն ամբողջանում է Բեմի միջոցով: Նա նախ իր գրպանի դանակով, հասարակ մի ճիւղից տաշուած, ստեղծուածային «Շփեմի ձեռնափայտը» մոտանում է Պիլիսոսի հիւրանոցում, համար 321 սենեակից համար 307 փոխադրուելիս: Սատանան է միայն հետաքրքրուած թէ այժմ ո՞ւր է Շփեմի ձեռնափայտը. իսկ ի՞նչ լուր Շփեմի ձեռնափայտից հարցումը, Սարոյեան գործող անձի վաղուց արդէն արտասանած խօսքն է: Ընդունելով ձեռնափայտի կորուստն ու գիտակցելով, որ իր կեանքն եւս ենթակայ է ծրագրի եւ պիտի դադարի՝ Բեմը լուծում է: Մեքենագրողն ու մեքենայն, յիշողութիւնն ու կենսոլորը դադարում են՝ ժամն է արդէն:

Թէ ո՞ր ժամին է աւարտուել խաղը, Տիգրան Գուլումեանը ոչ մի նշում չունի ներածականում, իսկ խաղի սկզբնական էջին կցուած նրա նշումը, խաղի շարագրութեան օրերի մասին, չի համապատասխանում ներածականին: Ինչո՞ւ:

● Հ Ե Ք Ե Ա Թ Ն Ե Բ Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Փ Ո Ղ Ո Յ Ն Ե Ի Ծ

Սաղի խօսքի բաժինը սկսում է այսպէս՝

ՎԱՆ - Հա՞յ էք Պարոն:

ՇՄԻՊ - Այե՞ք: Արո՞ւմ: Այեք Արուսն ո՞վ է:

ՎԱՆ - Ձե՞ր անունն է դա: Գո՞ւր էք Այեք Արուսը:

Թիւրիմացութիւնների, թերի ըմբռնումի եւ Սարոյեանի կողմից իր անձնական Ֆիլիքսական պակասութիւնը՝ խլութիւնը, կատակի բռնած այս փոքրիկ միջադէպը, վերակազմուել է համաձայն հատորի խմբագրի կողմից, էջ 150-ում ընթացողին ներկայացուած, Սարոյեանի մեքենագրուած, ձեռագիր ուղղումներով էջի համեմատութեամբ: Ինձ պարզ չէ թէ ինչո՞ւ է խմբագիրը Սարոյեանի ձեռագրով ուղղուած *Is that your name?* -ը փոխել *Is that a name?* -ի: Էլը խիստ հետաքրքիր է եւ մտածել է տալիս՝ արդեօ՞ք հնարաւոր չէ, Սարոյեանի որոշ անտիպները հրատարակել հէնց այդ էջերի ուղղակի հարազատ պատմեմանում:

Գրողի աշխատանքային ընթացքը հետաքրքիր է ու կարօտ է ընթացողին հաղորդակցուելու:

Հէֆեսթոսը /.../ գրութիւնը, Վիէնայում բեմադրելու համար, Սարոյեանի կողմից մշակուած լինելով, թէ ընթացման եւ թէ բեմում իրագործուելու համար, շատ աւելի զերիւն է ընկալուած: Հէֆեսթոսը /.../ -ում Սարոյեանը բեմական գրականութեան տեսակէտից աւելի մօտ է իր սկզբնական շրջանի՝ վոտրվիլի ոճով մշակուած, թատերական գրութիւններին: Սաղն յիշեցնում է Ստոբիլիքեայ գնացքի կրկէս խաղի ազատ կառոյցը եւ *Razzle-Dazzle* (տիպի-ցիֆեկ) հատորում լոյս տեսած երաժշտական մի քանի փոքրիկ գործերը: Սաղի մէջ վաւերականն ու թիւրիմացութեան, սակայն այն թէ իբրեւ գրութիւն եւ թէ բեմական նիւթ ազդան է: Սարոյեանի թատերական այս վերջին գրութիւնը, հակառակ իր մի քանի յաջող տեսարաններ միակցող բաժիններին, համեմատ գրողի նման կառոյց ունեցող Ստոբիլիքեայ գնացքի կրկէսին, ժամանակավրէպ խաղ է:

Հետաքրքիր է, որ գրողի կողմից բե-

մի համար, իր բոլոր միւս խաղերից աւելի մշակուած այս խաղը, մինչ այժմ լոյս տեսած միւս անտիպներին համեմատելիս, իր ոճով՝ Սարոյեանի վերջին խաղն լինելով հանգրեմ, ամենահարուստն է: Եթէ նրա առաջին խաղը՝ Ստոբիլիքեայ գնացքի կրկէսը, իր վերջին արարում կցուած էր երգին, արեւին ու երկուշաբթի կամ երեքշաբթի, օրերին, Հէֆեսթոսը /.../-ը ցանկանում է եւ փորձում է կցուել համաստեղութեան:

Աւազ...
Սարոյեանի Հէֆեսթոսը Վիէնայի Փուրգներից խաղը միայն թղթի վրայ նշուած իր վերջին բանաստեղծական բառերով է կցուած համաստեղութեան ու ծիր կաթինին: Բեմի բանաստեղծ Ուիլիամ Սարոյեանի շունչը՝ Վարշաւայում շատ աւելի հեռուն էր անցել ու խորունկ էր կցուել տիեզերքին:

Ժամանակին, քառասնական թուերի վերջին, ծործ ժան նախանը՝ Սարոյեանի բեմական գրութիւնների ամենալուսազոյն քննադատն ու մեկնաբանը, մի անգամ նրան առաջարկել էր Լեհաստան գնալ ու ծիծաղել էր վրան:

Եւ ես իմացայ, որ այս անմիտ աշխարհում դեռ մէկը կայ, որի ասածը մի բան է նշանակում (25):

ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1994 Փետր. 18 - Ապրիլ 13

Ծանօթագրութիւն

- (1) W. Saroyan, Here Comes, There Goes, You Know Who, (1962/63), էջ 212.
- (2) Ararat — N° 98, Spring 1984.
- (3) William Saroyan, An Armenian Trilogy; ed. by Dickran Kouymjian. The Press at California State University, Fresno (1976).
- (4) 1974 թուին:
- (5) W. S., One Day In The Afternoon Of The World (1964), էջ 72.
- (6) Որին ու. Սարոյեանն երբեք չեն բարկուեց:
- (7) Այնպէս ինչպէս հրատարակուել է Births գրութիւնը 1983 թուին:
- (8) Առաջալի Տիգրան Գուլումեանի՝ համաձայն Սարոյեանի մեքենագրուած էջերի, խաղը փորձէ բաժանել հետեւեալ ձևով.
- Ա. արար էջ 1 - 6.
- Բ. արար էջ 7 - 11.
- Գ. արար էջ 12 - 17.
- Դ. արար էջ 18 - 23.
- Ե. արար էջ 24 - 30.
- Վերջերեքէֆ այս գրքով եւ կը նկատէք որ Յառաջ-ի ընթացքն այսպիսով, բառերակազմով գործօն լիցք է ստանում: Իմ չափանիշը պարզապէս արդէն յօդուածիս մէջ յիշուած գրողի նշած վեց օրն է: Կարծում եմ Սարոյեանի խաղերի գրքի (իբրեւ Արար կամ Տեսարան) նախապէս որոշուած է գրողի բառերակազմին պարտաւոր:
- (9) W. S., The Cave Dwellers (1958), էջ 117.
- (10) Տ. Գուլումեանը ներածականում եւ պատկերազարդում բաժնում, յիշում Ակունքն պատմակազմով նշում է իբրեւ «Ասպարէզ» լրագրի Ակունք: Այս պատմական փաստը եթէ ուրիշ բնագրի տասնացիօրէն նկատի առնի, Սարոյեանի խաղից պիտի խլուի գրողի շունչն ու բանաստեղծական լիցքը:
- (11) W. S., An Armenian Trilogy, էջ 88.
- (12) Նոյնը, էջ 50:
- (13) W. S., The Cave Dwellers (1958), էջ 5.
- (14) W. S., An Armenian Trilogy, էջ 102.
- (15) Նոյնը, էջ 112:
- (16) The New Saroyan Reader, ed. by Brian Darwent (1984), էջ 36.
- (17) W. S., An Armenian Trilogy, էջ 164.
- (18) Հրատարակուած օրինակում վերջում է՝ Սարոյեան:
- (19) W. S., An Armenian Trilogy, էջ 151.
- (20) Նոյնը, էջ 179:
- (21) Warsaw Visitor, Tales From the Vienna Streets, The Last Two Plays of William Saroyan; ed. and with an introduction by Dickran Kouymjian. The Press at California State University, Fresno (1991).
- (22) Նոյնը, էջ 110:
- (23) Նոյնը, էջ 78:
- (24) Նոյնը, էջ 114:
- (25) W. S., Sons Come and Go. Mothers Hang in Forever (1976), էջ 131.

ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆԻՍ 5
DIMANCHE
5 JUIN
1994

ՅՄԻՐԱ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPİK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

LE NUMERO : 5,00 F

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱԽԱՐԵ ՄԻՍԱԿԻԱՆ (1925-1957)

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

69° ANNEE — N° 18.342

ՄԱՆՏՐԱՆ

ԻՔՐԵԻ ԵՂԱՆԱԿ

ՓՐԿԱՆՕՍՈՒԹԵԱՆ

Գրիգոր Պլյուսեան զրած է տասնամէկ ժամանակներ (1): Առաջին երեքը հրատարակուած են 1986-ին, «Մանրամետր» խորագրով կրող հատորով մը: Իսկ չորսէն տասնամէկ, ութ մանտրաներ, խմբուած են երկրորդ հատորի մը մէջ «Ելք» խորագրին տակ, լոյս տեսած՝ 1993-ին Յատակ» մատենաշարէն (2):

Ինչո՞ւ այս մանտրաները բաժնուած երկու հատորի մէջ: Այս մասին աւելի լաւ է դիմել հեղինակի կարծիքին: Կարծազրուած մէջ ան կ'ըսէ. — «Երբ 1986-ին կը հրատարակուէին առաջին ե. մանտրաները երկրորդ խումբ մը գաղափարի չէր: Բայց ահա հիմա քանի մը ուրիշներ, անցատ, անկայն մայրաքաղաքի, տարբեր անունի տակ, որոշ համեմատութեամբ մը սակայն կրուած նոյն արարով»:

«Ելք» ուրեմն ուղղակի չի շարունակուիր մանտրանները սկսուած «Մանտրաներ» հատորով: Անոր օրինակիմակը առաջին իսկ տողէն բոլորովին տարբեր է նախորդէն, որ Ա. Շարք «Մանտրաներ» ու ընթերցողը կը ճանչնար:

Գրքը կը բացուի Առաքել Դարբի-ժեղին խօսքով. — «...ի նոցանէ ոչ ոք էլ արտախ...» այս միտքնոյն տողը անմիջապէս կը դործածուի մանտրան Դ...ին, այսինքն առաջին քերթուածին մէջ: Ան կը յուշ պատմական դէպք մը, բայց պատմական այդ ժամանակաշրջանով չի սահմանափակուիր քերթուածը, ոչ ալ հատորը: Այլ անիկա կը պարագծէ բանաստեղծին սկզբնավայրը, կը բնորոշ վայրին անկ կացութիւնը, կարճ խօսքով կ'ըսէ թէ սկզբնավայրը մասն է, որովհետեւ բանաստեղծը իր մանտրաններով փորձէ ելք մը գտնել կեանքին հասնուի:

ՆՈՐԱԳԻՐ

Ինչո՞ւ քանի կը վերաբերի զրբին խորագրով: Պարզամտութիւն պիտի ըլլար անշուշտ համարձակել բանաստեղծութեան նման հատոր մը մօտեցնել աստուածաշնչական գրքի մը, եւ անոնց միջեւ զուգահեռներ պիտուէին: Բայց ընթերցողը պահ մը կրնայ փորձութեան մասնուել, որովհետեւ բացի խորագրի նմանութենէն, Աստուածաշնչի Ելք Գրքին Բ. գլուխին 3-4 համարները երկու անգամ մէջը թերուած են, առաջին անգամ մը էջ 14-ին, իսկ երկրորդ անգամ մըն ալ էջ 23-ին մէջ: Կու տանք հատուածը. — «...Երբ ալ չէր կրնար պահել որդին, պրտուեղէն տապանակ մը առաւ անոր համար եւ կրուարով ու ձիւքով ծեփեց եւ տղան (ի վերջ Մովսէս) մէջը դրաւ ու գետին Ե. գրքերը եղած շարքին մէջ ձգեց: Տղուն Բայբը հետեւ կայնեցաւ որպէսզի տեսնէ

թէ ի՞նչ պիտի պատահի անոր» (Ելք Բ. 34):

Հակառակ աստուածաշնչական այս մէջըբերումին, «Ելք» էջերուն մէջ չկայ Յակոբի որդի Յովսէփի հեռուոր անցեալը, ո'չ ալ Յակոբի տոհմը որ անէր Եգիպտոսի մէջ դառնալով բազմաթիւ ժողովուրդ մը: Չկայ նոյնպէս Մովսէսի ձեռնամբ Տէրը ներկայութեան վրանին հաստատումը եւ նուիրումը: Բայց Նեղոսի փոխարէն կայ Սէնը եւ փոխանակ Մովսէսին՝ կայ անանուն մէկը որ զեւտին անկրելի խեղդեալն է, ան չունի զերան որ ըլլայ լատտ, այլ ուռած փորով եւ աչքով բաց, կը լողայ, կ'ուզէ խօսիլ իրմէ անգին, վերջին այլութիւնը քանդէ:

Էկոլոթի յայտնի նպատակն է, հակադրել ճանդիստեանի տեսլիքները մըլձաւանջը՝ անոր ամենախորունկ ցանկութիւններուն հետ: Յուզելով կ'ուզէ զրտնել տալ անոր, իրեն հետ քաշկոտած, չի նէն ամբարած յիշատակելի պատկերներ: Հողեկան աշխարհէն ներս թափանցել թաքնուած, բրգած միջոցառումները վերագտնել ու վերաբնել զանոնք: Երբեմն նրբին, երբեմն բիրտ, ուղեկան մինչեւ իսկ զազիք նայուածքներ են անոնք, որոնցմով կը ջանայ ծաւալել տալ հողեկան աշխարհը պատկերներով լեցուն ուր կ'աշխատի ըստ իրեն, առարկայականօրէն անոնցմէ սնանկելով միշտ:

Ընդհանուր աստիճան շատ լաւ խաղարկութիւն: Ի մասնաւորի՝ էլիսա Գոթէսս, Արսինէ Խանճեան ու Միա Քիրշնէ:

Ատոմ Էլոյեան, այս տարի առանձնաշնորհեալ հրաւիրեալը ըլլալ կը թուէր Լոբանոյի փառատօնին, առանց մասնակցելու մրցումին:

Յատկացուած էր նաեւ մասնաւոր ցերեկոյթ մը իր հին սկզբնական բազմաթիւ կարճ ժապաւէններուն: Ու իր «Էկոլոթիքա»-ն՝ ա՛յդ գիշերային զրօսալիւր ուր մարդիկ կ'երթան գտնելու իրենց փնտրուած ու չգտածը՝ ծափահարութեամբ ժանկարէր շուրջ տասը հարցար սիրահարներէ, բացառաբար առանց անձրեւի գիշեր մը՝ Փիացա Կրանտէնի վրայ:

Ոմանք ըննադատեցին ֆիլմին զանազան գնացքը, բայց երբ Փարիզ դայ, պիտի ուզեմ դարձեալ տեսնել՝ որովհետեւ սիրեցի:

ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
Lnfano, 1994, 0qnumu 20

տարիներուն է որ Եւրոպայի մէջ կը խրամորուի ու կ'ունենայ իր գեղարուեստական առաջին պատկերումները: Եւ ընդարձակ է գրականութեան, իմաստասիրութեան, պատմութեան, կրօնագիտութեան եւ ուղեկան հարցերու Ինտրայի ծանօթութիւնը, ինչ որ «Ներաշխարհ»ին կուտայ համամարդկային տարածք մը գործութեան, զիչէր նուաճած ըլլան արեւմուտեան գրականութեան մէջ: Եթէ «Ներաշխարհ»ը թարգմանուի օրինակ, Փրանսերէնի, այս իրողութիւնը գուցէ աւելի ցայտուն դառնայ՝ վկայ այն քանի մը կարճ հատուածները գործ հեղինակը ինք թարգմանած է (6):

Ինքնակենսագրական դործ մըն է «Ներաշխարհ»ը, զգայական եւ տառապող հոգիի մը արտայայտութիւնը, սիրոյ հըրայրքով սողորուն: Վայրը, ուրկէ թըռչէ կ'անունը գրողին երեւակայութիւնը, իմացականութիւնը եւ յուզականութիւնը, իր սենեակին է, թրբական գերեզմանի կողքին: Ինտրա գայն կը նկարագրէ Կիւրճեանին. - «Այս տունին մէջ սենեակ մը ունիմ առանձին: Բաւական բարձր ձեղնակով, պղտիկ, նեղ, երկայնաձու սենեակ մըն է սփանջիլի համեմատութիւններով: Մէկ պատուհան մը ունի որ կը նայի տանիկ գերեզմաններին վրայ, որ սակայն անոյշ պարակի մը երեւոյթն ունի այդ մասին մէջ, որովհետեւ գերեզմանափարեր չկան շատ, եւ մարդ գրեթէ երբեք առիթ չունենար հոն քաղաւած մեռելներուն վրայ խորհելու (7): «Ներաշխարհ»ը այս սենեակի նոյնանման նկարագրութեամբ է որ կը սկսի: Սակայն մաս հոն միշտ ներկայ է: Առաջին էջէն իսկ: Գրութեան երկարութիւնը սիրով թախիծը եւ, օրինակ, ծովուն անվերջ այլեւները, դէպի ծովափ արշաւող, դէպի Ինտրան եկող, կարծէք իւրաքանչիւրը իրեն հետ կը բերէ անյայտին, մահուան ծաղրերը՝ իրեն միշտ յիշեցնելու որ մաս հըրաւորութիւնն իրեն կը նայի. եւ Ինտրա կը ցանկայ, «ամէն բանէ աւելի կը տեսնայ» (8) գայն, տակաւին երեսուն տարեկանին:

Հոգեկան միջին լայնութիւններ ապրող եւրիտասարդ արդէն իսկ հիբնոսով կը սկսի գրադրել եւր գեռ տասնութ տարեկան է, ինչ որ ցոյց կու տայ թէ Ինտրա խորհուրդին եւ մոգութեան հանդէպ յատուկ հակում մը ունի եւ թէ, իր միտքըն ու երեւակայութիւնը, պարզ իրականութեանն եւ երեւոյթներէն անդին թափանցելու անդիմադրելի պահանջը մը կը զգան: Ասիկա երբ գումարուի իր գերզգայնութեան, սկզբունքի անշեղութեան եւ անդրուելիութեան (9), չի կըրնար զինք չզարձնել ծայրայեղ մը՝ յամառ հաւատաւոր մը, որ խորքին մէջ գուցէ բնական հետեւանքն է մահուան հետ իր սերտ կապին: 1913-ին է որ, իր միակ գաւկիին ծնելու տարին, Ինտրա ցոյց կու տայ կրօնամոլութեան իր առաջին նշանները ճիշդ անոր համար որ, թեբեւս, ինք կը պատրաստուի մահուան եւ գուցէ, անյայտին իր սարսափն է, որ զինք կընայ մղած ըլլայ կեանքի վերջին սահմանը մարտը հողիով անցնելու տենչանքին՝ գերծ մնալու յաւիտենական տանջանքէն:

Երկար ատեն, գրաքննութեան խոստովանութեան պատառով, «Ներաշխարհ»ը լոյս չի տեսներ: Անոր աւարտէն միայն վեց տարի յետոյ է որ կարելի կը դառնայ տղարուութիւնը «մանր մունր գեղջուկներու շնորհիւ», եւ առանց լուրջ յայտարարումից (10): Կարգալով Ինտրայի ինքնաքննադատութիւնը՝ «Ներաշխարհը գիտուած իր հեղինակէն» խորագրուած, որպէս պատասխան զինք մեղադրողներուն, կարելի է որոշ կարծիք մը կազմել այն րացասական ընդունելութեան մասին գոր ունեցած է հատորը: Նորարար գործի ճակատագիր:

Հիմնալի է Ինտրայի ինքնաքննադատութիւնը: Այլ բան է երբ գրականութիւնը ներսէն եւ իր մոլորիկ վրայ ապրող մը մը արտայայտուի անոր մասին, որովհետեւ ոչ միայն քննարկումը կը դառնայ աւելի կենդանի այլեւ՝ կ'արծարծուի գրականութեան իսկական էութիւնը: Նման պարագաներու է որ քննադատութիւնը մէկ կողմէ եւ բանասիրութիւնը, մատենագիտական եւ բովանդակային քննարկումը միւս կողմէ, կը յայտնուին

որպէս իրարմէ տարբեր մշակումներ. եւ բազմաթիւ են անոնք որոնք այս մարգերը իրարու հետ կը շփոթեն: Քննադատութիւնն ալ, նման գրականութեան, ըստեղծագործող միայն կ'ենթարկէ:

Ինտրայի այս գրութեանն կը պարզուի թէ «Ներաշխարհ»ին ուղղուած գլխաւոր քննադատութիւնները կը վերաբերին աւելեղուն եւ Ոճին, բ. իմաստասիրութեան եւ Ողբին: Այստեղ կ'արժէ կարգ մը մէջբերումներ կատարել, որոնց մէջ արտայայտուած հաստատումները կը մընան այժմէական եւ որոնք մեկնաբանութեան չեն կարողոր:

Լեզուի եւ Իրականութեան ՄԱՍԻՆ

«Բառերն ընդհանուր գաղափարներ կը յայտնեն բայց այդ գաղափարաց ընդհանրութիւնը նոյն ընդարձակութիւնը չունի ամէն բանի մէջ եւ կան բաներ որ բազայատար մասնաւոր գաղափար մը կը յայտնեն, այնքան փոքր է իրենց տարածութիւնը: ... Ինչպէս պարզութեան դէպի կենտրոն կ'այլանայ ամէն գործարանաւորութիւն, ամէն կեանք, ուշադրութիւնն ալ կը դիմէ պարզեմ դէպի կենտրոնը, բացայայտեմ դէպի զննելին, եւ հետեւեալեւեալ աւելի հագումադէպ ու պարագայական երեւոյթներու յատուկ, աւելի մասնաւոր գաղափարներ կը ծնին, որք դեռ ընդհանուր են բազայատմամբ ալ աւելի մասնաւոր գաղափարներու որք դեռ կըրնան երեւալ: Այս պատճառով է որ երբ ժողովուրդ մը խորապէս գրագի որեւէ բանով, եւ գայն դիմէ ամէն տեսակետներէն ու ամէն այն եղանակաւորմանց մէջ որով կը ներկայանայ, կը ստիպուի այդ իրը կոչել այնքան անուններով որքան հանգամանք որ ունի ան» (էջ Բ):

«... Բառ շինողներն եղած են գրեթէ միշտ անոնք որոնց իմացականութեան մէկ գլխաւոր յատկութիւնն է վերացումը, ինչպէս նաեւ որոնց նկարագրին մէկ յատկանիշն է վերացումը մը, անջատում մը սովորական կենսակի իրենէն: Գաղափարի մարդիկ, գաղափարներու կեանքի մը սիրահար մարդիկ են որ բառ կը շինեն. ուսմիտէն խօսելով՝ վերացական մարդիկ» (էջ Զ):

Ոճի ՄԱՍԻՆ

«Արդարեւ Մարդ բերելով նկարագիր մը չեմք հասկնար յիշայն, այլ ստացիկ վիճակներու, իմացականութեան մը եւ նկարագրի մը միաւորումը... Ոճը մարդէն է, եւ մեք, որ եղանակ մ'է, կը պատկանի ոչ միայն նկարագրին՝ այլ նաեւ մեկնացեալ մեծամասնութեան» (էջ ԺԲ):

«... Կան ընթերցողներ որ մթութիւն տեսած չեն Ներաշխարհին մէջ: Բայց ստանք ժամավաճառ ըլլալու վախը չունին, կըրնան խորհիլ շատ հոծ ու վերացեալ նախադասութեանց վրայ. եւ կ'երեւայ թէ չեն նոյնացներ յատկութիւնը հասկնալիութեան հետ: Վասնզի նոյն չեն անոնք. յատկութիւնը բացարձակ է. ընթերցողներու կարամարտութեանն եւ կարողութեանն կախում չունի, կամ մարդկային մարտէն հետ յարաբերական է միայն. իսկ հասկնալիութիւնը կախում ունի ընթերցողներու տրամադրութեանն, ուշադրութեանն ու հետաքրքրութեանն տարածութեանն: Բռն լորովին յարաբերական բան մ'է: Ներաշխարհը կընայ միշտ գիրքահասկնալի ըլլալ, հակառակ իր ընկալեալ առաւելութեանց պայման եղող մեծ յատկութեան: Ինչքան կայ աւելի անըմբռնելի՝ քան կատարել նշողութեամբ, ծայրագոյն անդուրեանք եւ սփանջիլի յատկութեամբ բաւած մարտնչութիւն սահմանում մը, տեսութիւն մը, օրէնք մը, ապացուցում մը՝ անոր համար որ մարգուած չէ այդ նիւթը մէջ» (էջ ԺԵ - ԺԶ):

«Ներաշխարհը բնական երեւոյթ մ'է. եւ քանի որ ընդհանրապէս եխցում մ'է վիսմ բաներու, եւ տոգորում է խորին բարոյապաշտութեամբ՝ բնական երեւոյթ մ'է որ ոչինչ ունի այլասերեալ ու վատար

ոռոջ, եւ բացայայտութիւն կենսալի է: Բընութեան պաշտող ու էովին անոր վերաբերող հոգւոյ մ'արտադրութիւնն ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ» (էջ ԻԸ):

«Ապահովապէս բնութեանկան մ'է այն գրագէտն որ իր մտածման քոյլ կու տայ ընթացակ ու նիւղաւորուիլ ամէն անուն ու ծաւալում բանի պէս, առուի մը, բայսի մը պէս, գործնաւորութեան մը պէս. ամէն հանդարտութիւն կամ բնութեանկան կենսալի բաներու մտն: Եւ նոյնիսկ աւելի անբնական չէ՞ խորհրդածութիւնը կտրատել, փոքր հատուածներու բաժնել գայն, անդու վերջակտել՝ երբ կիրք մը չկայ որ ոստիկներ, ընդհատներ պատկանէ ֆոսֆին, որ հատկելալ ու հե ի հե ընդոստութիւն մը տայ անոր: Եւ եթէ այդ կտրուկ նախադասութեանց ոճն ոչ ոք անբնական համարի, ինչէ՞ն պարբերականներուն ոճը բնական չնկատուի, եւ նոյնիսկ մերք աւելի բնական: Եթէ ներքի է ոճի մը, նմանիլ անջատ անջատ կտորներով գործող նարապապետութեան մը, ի՞նչպէս արդեօք ներքի չէ որ գրտնուի նաեւ ոճ մը՝ անհնչատ տարբերով նկարչութեան մը նմանող: Եւ գեղարուեստներէն ո՞րն է որ աւելի համաձայն է բնութեան ու բնականին՝ քան նկարչութիւնը» (էջ ԼԵ - ԼԶ):

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՐԻԻ ՄԱՍԻՆ

«Գիտութեան եւ իմաստասիրութեան սահմանակից այդպիսի գեղարուեստական յորինումն մը պակասիկ պէս՝ կայ նաեւ պակաս անբողբական ու որոշ իմաստասիրութեան մը: Իրաւ է թէ հարկ չկար որ հեղինակն անպատճառ գրած ըլլար արդէն նշողեալ իմաստասիրութիւն մ'իր գրքին մէջ: Բանաստեղծէ մը կը սպասուի փիլիսոփայութիւն, բայց ո՛չ անպատճառ փիլիսոփայական գրութիւն» (էջ Խ):

«Եսին ընդհանրացումը, կամ ուրիշ բանով՝ տիեզերքի ներաշխարհացումը կը պանծացնէ միշտ Ինտրա» (էջ ԽԲ):

«... Ինտրայի խորհրդի յատկանիշն որ գրքին մէջ ամէնուրեք կը յայտնակերպի աւելի կամ նուազ որոշ՝ համագում բարոյապաշտութիւնն է, Բարոյականն է: ... Իրաւ է թէ կրօնի կամ ոգեհաստութեան ներքնած յոյսերուն չբացումն ըզմարդ կընայ տրամեցնել, բայց ատով օրէնքները չեն խախտի ու կեանքը չի դադարի: Իսկ Ինտրայի բանաստեղծական կամ արուեստագիտական յատկանիշն է Բնութեանկայաշտութիւնը: ... Եւ Ինտրայի մարդկային յատկանիշն ալ կենսապաշտութիւնն է: ... Պարզապէս՝ իր տրամութիւնք կու գան իր բնութեանկայաշտի, կենսապաշտի, բարոյապաշտի երբեք անբացարձակ արգելաւիճէ: Բնութեան, կենսի եւ Բարոյականի համար Ինտրայի խանդավառութիւնք կը կազմեն ուրեմն Ներաշխարհի երբեք յատկանիշները: ... Ներաշխարհի ոգին ապրիլն է գձշմարտութիւն: ... Ներաշխարհի ոգին է լոյսն ապրիլ» (էջ ԽԶ):

Ինտրա կը գրէ նաեւ թէ «Ներաշխարհ»ը գրական գիրք մ'է. բայց գրականութիւնը տգիտութիւն չէ, հակառակ այն երանաւտ կարծիքին գոր գրականութեան մասին կազմած ըլլալու է քիչ շատ ամէն մարդ՝ վարժուելով իր գրական գործ կարգով այն բոլոր արտադրութիւններն որք հրապարակային ըլլալու համար ո՛չ թէ արուեստի ու հետաքրքրութեան ու խելի պէտք ունին՝ այլ լրբութեան:

Չուտ ու բարձր գրականութեան այս ըմբռնումը պատճենէ աւելի կը հիմնուի թեյազրականութեան, արձակուրդ քանաստեղծական զգայնութիւններու արծարծման վրայ, իբրեւ թէ երաժշտութիւն ըլլայ, եղանակաւորում մը, որուն կարելի է յաճախ վերագառնալ ու ամէն ունկնդրութեան, վերադարձի յոյզերը, իմացական եւ ոգեկան վերացումները: Որովհետեւ գրական գիրք մը չի նմանի վէպի մը որուն ընթերցողը կը հրաւարուի ընդհանրապէս հարկ չենք զգար դայն կրկին կարգալու՝ երբ պատումէն անգին

չատ բան չի մնար, ի բաց առեալ անոր գեղարուեստական արժանիքին զիտակցութիւնը երբ հեղինակը տարակազու կամ մեծ գրող մըն է:

Գրականութիւն բնութիւն նկատուելով զլիսաւորարար կընդլծը, համադրումը կատարող, բաներու եւ լեզուին կրթութեան կենսալիութիւնը, գոյնը, վերացումը ունան պատմողական զրոյթի, ահա արբոնում մը որ հիմքն է նաեւ մեր դասարան գրականութեան: «Ներաշխարհ»ի եւ Ինտրայի ինքնաքննադատութեան լոյս տեսնելէն չորս տարի ետք Վասիլի Գասպարի տեսլիկ, ոգեպաշտ եւ միտալը, կը նկատուի որ առաջին վերացապաշտ գործը 1911-ին՝ ջնջելով կերպարանայինը նկարչութեան մէջ: Այլեւս կարելի էր նկարչութեան մէջ մտնելու տեսնելի կամ շղափելի նիւթ մը ներկայացնելու, պատկերելու, կարելի էր ստեղծել նկար մը որ սարկէր միայն գոյնով, գիծով, լոյսով, իրականութեանն անկախ ձեւակերպումներով, մէկ խօսքով՝ ինքնիմով, իր օրէնքներով եւ ամբողջականութեամբ: Եթէ Ինտրա նկարչութիւնը ըմբռնէր այդպէս ինչպէս գրականութիւնը՝ անտես կամ վերացապաշտ նկարչի մը պիտի դառնար: Բայց հասանարար այդ յայտնութիւնը չունենար՝ գերծ ըլլալով այն բոլոր նախապատրաստական կազմութեանն եւ չընթացաւ, գորս ունեցան Գասպարիսիկի եւ իրեն համախոհները:

«Ներաշխարհ»ին նորարարական եւ գրական յատկանիշները չէին կրնար օր մը իրենց անդրադարձն ու զնահատումը չը գտնել յետագայ հայ գրողներուն մօտ: Շահան Շահնուր, հակառակ որ տեղ մը Ինտրան, այլոց կարգին, «ամաքեօքս կը նկատէ (11) (այս որակումը թեբեւս մաս կազմէ այն ցատկոտ կարծիքներուն գորս յետագային նախնորեց յայտնած չըլլալ), դէպի լոյսը ձգտող Վարուժանի եւ Ինտրայի յղաքները բազմաթիւ «Ներաշխարհ»ի տուեալ հատուածին մասին կը գրէ. - «Օ, գմայլելի էջը: Այնքան խոր, այնքան անպայական ինտրան մեղ կը գրուէ ամբողջութեամբ: Մեծի միջոցն հանդիպատես կ'ըլլանք վարուժանի նախադասութիւններու յառաջադասութիւն մին, Ինտրայի հետ միասին է որ կը քննենք դէպի լոյսը, միանալով, նոյնանալով իրեն հետ: Կը յանձնուինք: Վարուժան կ'ըսէ թէ դէպի լոյսը կ'երթայ, բայց Ինտրա է որ կը հասնի անոր: Առայինը լոյսին վրայ կը խօսի, բայց Ինտրա կը նանջնայ նաեւ մութը: Առայինը կը մեկնի գաղափարէ մը եւ անոր վրայ կը փակցնէ պատկերներ՝ դուրսէն, վրայէն, մինչդեռ Ինտրա կը մեկնի առօրեայ կեանքէն, իր կուժէն, իր աղբիւրէն, եւ միշտ հակառակ շարժումով մը անոնցմէ դուրս կը հանէ գաղափարը» (12):

«Ներաշխարհ»ի ընթերցումով անկարելի է չմտածել յատկապէս Սարաֆեանի մասին. եւ ի գուր չէ երբ եղուարդ Պոյաճեան Սարաֆեանը կը կոչէ «Վեմեմի անտառին նոր ինտրայականը» (13): Ինչպէս գեղարուեստական կիրարկումը, նկարագրելու եւ պատկերումի խոհանոցութիւնը, մտածումներու շարահիւստութեան եւ խոսքման եղանակը, միտալը եւ ողբական ենթասոցը, վերացման իղձը եւ, որպէս հոգեվիճակ, թախիծը, ներքին խոր վէրքէն ծորող արիւնը, հասարակաց գիծեր են Ինտրայի եւ Սարաֆեանի մօտ: Աւելին, կան նաեւ բովանդակութեան նմանութիւններ օրինակ, Ինտրայի սենեակին գիծացի նոճատանին եւ Սարաֆեանի ճամբուն վրայ եւ յետոյ դիմացը գտնուող Վէնանի անտառին միջեւ. իրենց հոգեկան եւ իմացական սրբքին՝ ծառերու մարմիններէն հասակ տոնող եւ անծայրածիր ներքին եւ արտաքին տիեզերքներուն մէջ տարածուող Սարաֆեանի ալ կը գծէր: Իր մանկութեան տարի պատէն կատարած նկարին նկարատարութիւնը եւ անոր առժամ ապրումները կը յիշեցնեն նոյնանման նիւթով Ինտրայի «Նկարը» գրութիւնը: Իսկ երբ «Ներաշխարհ»ը բազմաթիւ Սարաֆեանի «Մշուշին մէջ»ին հետ, հիմնական նմանութիւն մը կայ որ է սենեակին դերը որպէս «պատեան», անիչ դիտելով դուրսը, արտաքին աշխարհը: Այստեղ, Սարաֆեանի ինքնիւր դէմքին նկարագրութիւնը՝ պատուհանի ապակիին մէջ, իր գրութեան սկիզբը, կը համընկնի նոյն գրութեան սկիզբը, կը համընկնի յոյսնու ձեւով ներկայացուած Ինտրայի յղաքները, մասնաւորապէս «Ներաշխարհ»ի սկիզբը: Յանկերտեալ առնչուելու մըն ալ կարելի է տեսնել նաեւ Սարաֆեանի «Բաժակ մը Բէջնուն»ի եւ այն էջերուն միջեւ, որոնց մէջ Ինտրա գաւաթ մը օդի շուրջ կը տարուի

ապրումներով, միտքերով, տեղումն եւ շրջապատին նկարագրութեամբ:

«Ներաշխարհ»-ի բնագիտական եւ բանական ենթահոլը, բառակերտումի բնթացակարգն ու բնութեամբ, բառերու իմաստաւորման եղանակը, անոնց արտայայտչական լիցքը եւ անվերջակէտ, երկար պարբերութիւնները՝ որպէս ամբողջութիւն, իրենց արձագանգը կը դնեն, աւելի յետոյ, Պրլոնեանի բանաստեղծութեան մէջ՝ ձեռով մը որ կը տարբերի Սարաֆեանի նկարագրութեան եւ պատմի դասական բնականութիւնէն, շարահարկութեան: Պրլոնեանի դործին լրումը քննադատութիւնները «անհասկընալի» էն մինչեւ «խրթին» եւն. կը բաժնեն իտարայի «Ներաշխարհ»ին ճակատադիրը. եւ Ինտրայի մասնանշումը կը մընայ ի զօրու, երբ կը գրէ. - «Ըսուած է թէ գիրք մը գրելու համար մտտեմադարձ մը տակնուվրայ ընելու է. ինչ գարնամայի բան կ'ըլլար չմտածել թէ գիրք մը կարողաւու համար ալ կարել է մտտեմադարձ մը տակնուվրայ ընել. այսինքն հետո ըլլալ, մարգարած ըլլալ, կարգաւոր դժուարին արհեստին վարժ ըլլալ գէթ՝ երբ չունի մարդ այն հանգամար գործիքն որ Սքալէլ անիրաժեշտ կը գտնէ գրքի մը քափանցման համար» (14):

Բայց այսօր, պարզ ընթացողի մը համար, «Ներաշխարհ»-ը որոշ դժուարութիւններ կը յարուցանէ՝ ինչ կը վերաբերի հոն տեղ գտած առատ բառամիջոցին մէջ մասին, ներկայիս գրեթէ անգործածելի: Անոնցմէ ոմանք չենք գործածեր ոչ թէ որովհետեւ ժամանակակից պարզութեան են այլ՝ դժբախտաբար, մենք կորսնցուցած ենք զանոնք կիրարկելու վարժութիւնը, որովհետեւ մեր բառամիջոցը հետզհետէ կ'աղքատանայ: Ասիկա մէկ մասն է Սփինաքի տարածքին սեղի ունեցող աւերին:

Սակայն պէտք է վերադառնալ Ինտրայի «Ներաշխարհ»ին:

ՎԱՀԻ ԱՐԱՋ

Ծ Ա Ռ Ք Ո Ւ Ք Ի Լ Ո Ւ Ն Ե Ր

(1) Տիրան Չրաֆեան - Ինտրա. - «Ընտիր երկեր», (տե՛ս. հեղինակին «Ծանօթութիւն»ը), «Յարակէզ» Հրատարակչութիւն, Հայ Դատական Գրականութեան Մասնաշար, 2: Պէտրոպ, 1974, կազմեց եւ խմբագրեց Կարիկ Պատմագիտագէտ Յետ աշտու, Ինտրայէն եղած բալար մէքերումները այս հատորէն են:

(2) «Քիչ մը առաջ Ինտրա բոլոր գրեցի՝ գիրքին վրայ գրուած ծածկանունն է ատիկա: Հաւանեցա՞ր. կայծակող մեծ հնդիկ աստուածին անունն է ... դոր իմ անունն կը թոյլատրէ կատարեալ ներողամտութեամբ՝ կազմել "anagramme"-ով»: Նամակ (16. 10. 1900):

«Ինտրա անունը թիչ մը չափազանց է, բայց պիտի մնայ գր տեղը. հնդիկ վաստեներուն առաջինն է, Արեւելքին կը գերազանցէ, եւ աստուածն է լոյսին եւ եթեքին. հնդիկ Չեւս մը գրեթէ, կամ բորրովին»: Նամակ (14. 2. 1903):

(3) Նամակ (14. 1. 1897):

(4) Նամակ (5. 10. 1897):

(5) «Ընտիր երկեր», էջ 2:

(6) Նոյնը, էջ 1:

(7) Նամակ (27. 12. 1898):

(8) «Ընտիր երկեր» (Ծանօթութիւն):

(9) Տե՛ս. Ինտրայի նամակները՝ ուղղուած Գ. Ա. Մազրեանին (1918 Սեպ. 20 եւ 1918 Հոկ. 11):

(10) Նամակ (21. 3. 1906):

(11) Շահան Շահնուր. - «Վաւերաբովորը», Հրատարակչութիւն Թէքեան Մշակութային Միութեան Շահնուրեան Գրադարանի - 2, Պէտրոպ, 1984, էջ 15:

(12) Նոյնը, էջ 43-44:

(13) Մէքերումած հետեւեալ յօդուածին մէջ. - Արա Գազանեան. - «Նիկողոս Սարաֆեան (1902 - 1972)», Յետաջ, Չորեքշաբթի, Սեպ. 18, 1991:

(14) «Ընտիր երկեր» (էջ 22):

Կեանքի տարբեր ասպարէզներում, նաեւ արուեստների ու ճարտարապետութեան, սովորաբար զարգացման ճանապարհը միշտ էլ յուսաւորում են առաջատարները: Հայ ճարտարապետութեան բազմադարեան զարգացման ամէն մի փուլ առաջադրել է իր ջանակիր վարպետներին: Վաղ միջնադարում այդպիսիք են եղել Հայոց առաջին քրիստոնէական տաճարի՝ Ս. Էջմիածնի, Երեւոյքի, Հոփիսիմէի, Պտղիկի, Մաստարայի ու այլ տաճարների անանուն վարպետները, հոյակապ Չուարթնոցի ենթադրեալ հեղինակ Յովհանն: Չարգացած միջնադարի առաջին փուլում՝ 10 - 11-րդ դարերում ջահակիրներ են եղել Վասպուրականում՝ Մանուէլ, Անիում՝ Տրդատ մեծատղանդ ճարտարապետները: 12 - 14-րդ դարերում այդպիսիք հանդիսացան Գեղարզավանքի ժայռափոր տաճարների կերտող Գայձակը, Հաղարծնի սեղանատան հեղինակ Մինասը, Նորայանքի անկրկնելի յուշարձանների հեղինակներ Սիրանեսը, հանճարեղ Մովսիսը եւ ուրիշ շատեր:

Մեր ժամանակներում, սկսեալ 20-ական թուականներից, երբ մեր աղջային ճարտարապետութիւնը թեւակոխեց իր զարգացման արդի փուլը, գլխաւոր ջանակիրն եղաւ Ալեքսանդր Թամանեանը:

Ալեքսանդր Թամանեանը (Թամանովը), ծնունդ է 1878 թ. Ռուսաստանում, Կուպանի Եկատերինադար քաղաքում, բանկային ծառայողի ընտանիքում: Տեղի ուսական միջնակարգ դպրոցում սովորելիս նա ցուցաբերել է նկարչական բացառիկ ընդունակութիւն: Դա էլ Ալեքսանդրին համար բախտորոշ եղաւ: 1898 թ. նա ընդունուել է Ս. Պետերբուրգի կայսերական գեղարուեստից ակադեմիայի բարձրագոյն գեղարուեստական ուսումնարանի ճարտարապետական բաժինը: Կրթական այդ հինաւուրց ու փառապանծ օժանի իր գործը ազդեցութիւնը դրոշմեց ասպարջ ճարտարապետի ստեղծագործական դաստիարակման վրայ, կրիկն նրան ուսական դասական արուեստի հարուստ աւանդոյթներով: Նրա համար նպաստաւոր եղաւ նաեւ Ս. Պետերբուրգեան քաղաքաշինական միջավայրը, նաեւ քաղաքամերձ թաղաւորական դաստակերտների հոյակապ ճարտարապետութիւնը:

Տակաւին ուսանող տարիներին Թամանեանն աչքի ընկաւ բացառիկ աշխատասիրութեամբ եւ ընդունակութիւններով: Արդէն 4-րդ կուրսում նրան իրաւունք վերապահուեց ինքնուրոյն գործունէութեամբ զբաղուելու:

Նկարիչ - ճարտարապետի կոչմամբ 1904 թ. աւարտելով ակադեմիան, Թամանեանը ստեղծագործական կեանք մը տաւ: Եւրոյ 15 տարի ապրեց ու գործեց Ս. Պետերբուրգում, յարելով փոքրաթիւ այն ճարտարապետների խմբին, որոնք ի հակակիժո այն տարիներին, մոլեգնող մոտայական ուղղութիւններին, ձգտում էին հաստատարի մնալ դասական ճարտարապետութեան աւանդոյթներին եւ թարմաշունչ յօրինումներով զարգացնում եւ բազմապիսեմ էին այն Պատահական բերումով, թէ իր հարազատ ժողովրդին ծառայելու միտումով նրա անդրանիկ դործը եղաւ Ս. Պետերբուրգի հայ առաքելական եկեղեցու վերակառուցումը՝ իրագործուած 1904 - 1906 թթ.: ճարտարապետ Կելտէնի նախագծով 18-րդ դարում հիւնուցուած այդ եկեղեցու ճարտարապետութիւնը աղաւաղուած էր յետադայ վերակառուցումների հետեւանքով: Գիտնականի իմացութեամբ ու բարձր ճաշակով Թամանեանը կարողացաւ այն վերակառու-

ցել, արժանանալով ընդհանուրի հաւանութեանը: Նոյնպիսի դրական գնահատականի արժանացաւ իր եւ ճարտարապետ Շչեռլոյի ստեղծագործական համադրածապետութեամբ կատարուած «Քաֆէ տը Ֆրանս»ի ներքին ձեւաւորումը:

Այնուհետեւ նրա նախագծերի թեմատիկան գնալով հարստացաւ եւ գործունէութեան քննադատը ընդլայնուեց, ընդգրկելով Մոսկուան, Եւրոպայը, եւ ուսական նախնադասն այլ քաղաքներ: Առանձնապէս յիշատակելի են Եւրոպայի յորեկնական ցուցահանդէսի (1913 թ.) տաղաւորային համալիրը, Կոչարէյի մենատունը Պուշկինո քաղաքում, իշխան Շչեքրատովի առանձնատունը Մոսկուանում եւ հիւանդանոցային համալիրը Մոսկուա - Կարան երկաթագծի կրտստով կայարանին մօտ: 1913 թ. կառուցմամբ աւարտուած Շչեքրատովի առանձնատան ճարտարապետութիւնը Մոսկուայի քաղաքային վարչութեան կողմից գնահատուեց տարուայ լաւագոյնը եւ հեղինակին արժանացրեց ոսկէ մետալի: Լայն ճանաչում ընրեց նրան նաեւ Եւրոպայի յորեկնական ցուցահանդէսի տաղաւորային համալիրը՝ լուծուած ուսական աղջային փայտաշէն ճարտարապետութեան աւանդոյթներին հաւատարիմ:

Գրեց՝ ՓՐՈՑ. ՎԱՐԱՋՂԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1914 թ., այսինքն ստեղծագործական կեանք մտնելուց ընդամէնը 10 տարի յետոյ, Թամանեանը արժանացաւ ակադեմիկոս ընտրուելու պատուին:

1917 թ. Հոկտեմբերեան յեղաշրջումը Թամանեանը գլխաւորեց Ս. Պետերբուրգում, ստանձնելով գեղարուեստաց ակադեմիայի խորհրդի նախագահի պաշտօնը: Չորեկ լինելով մասնագիտութեամբ զբաղուելու հնարաւորութիւնից, նա իրեն նուիրեց թատերական ներկայացումների նկարչական ձեւաւորմանը, որպէս այդպիսին մասնակցեց Շչեքրովի «Մակլէթ»ի բեմադրութեանը: Այդ ընթացքում էլ նա հրապարուեց ժողովրդական մեծագոյնուած թատրոնի շէքը նախագծելու գաղափարով: Այդ կապակցութեամբ Թամանեանի մօտ առաջացած յրգացումները յետագայում միայն իրականացում ստացան:

Թամանեանի կենսագիրները սովորաբար նշել են իրը նա Հայաստան է եկել 1923 թ., չլրացած թողնելով նրա կեանքի 1919 - 1923 թթ. տարիները: Իրականում նա Հայաստան է հրաւիրուել Հայաստանի առաջին Հանրապետութեան կառավարութեան կողմից: 1921 թ. Փետրուարին Հայաստանում ծագած քաղաքացիական երկպառակութիւնների կապակցութեամբ ի թիւս այլ մտաւորականների նա ընտանիքով փոխադրուել է Պարսկաստան: Ապրելով Թաւրիզում, ըզբաղուել է ճարտարապետական գործունէութեամբ, նախագծել մի փոքրիկ վերակառուցում, մի քանի շէքեր: Յաւօք այդ տարիներին նրա գործունէութիւնը ցարդ մնացել է չպարզուած:

Երկրորդ անգամ Թամանեանը Երեւան է ժամանել 1923 թ. Խորհ. Հայաստանի կառավարութեան հրաւերով: Այստեղ էլ սկսուած է մեծատղանդ ու փորձառու, Ռուսաստանում լայն ճանաչում ստա-

ցած վարպետ ճարտարապետի ստեղծագործական կեանքի երկրորդ փուլը: Այն նշանաւորուեց այնպիսի բարձրարուեստ գործերով, որոնցով նա հիմք դրեց մեր աղջային արդի ճարտարապետութեան ոճական նոր ուղղութեանը: Համարձակօրէն հանդէս եկաւ որպէս դրա ջահակիրը, առաջամարտիկը: Նա այն վարպետներից էր, որոնք խորապէս լսելու ենցին իրենց առաքելութեան նոր խնդիրները: Հայ մտաւորականութեան մի բոլորի կազմում նուիրուելով հարազատ սերունդի պատմական մեծ վերածննդի գործազան գործին, Թամանեանի տաղանդը պարարտ հող գտաւ, վարժամ ծիւր տըւեց, բազմապատուեց եւ սկզբունքորէն նոր բովանդակութիւն եւ որակ ստացաւ, բախտորոշ դառնալով հայկական արդի քաղաքաշինութեան եւ ճարտարապետութեան զարգացման համար:

Բազմապիսին եղան վարպետի ստեղծագործութեան ոլորտները, ընդգրկելով Երեւանի, այլ քաղաքների ու բնակավայրերի վերակառուցման յատակագծերի, վարչական, հանդիսատեսային, ուսումնական, բուժական, նոյնիսկ արտադրական շէքերի նախագծերի մշակումները: Թամանեանի քաղաքաշինական նախագծումներում գլխաւորը Երեւան քաղաքի վերակառուցման գլխաւոր յատակագծի մշակումն էր, որպէսին նա ձեւաւորել էր դեռեւս առաջին Հանրապետութեան տարիներին ու յարունակեց Երեւան վերականգնալուց յետոյ: Հարկաւոր էր հիմնովին վերակառուցել ցարական Ռուսաստանի դատական այս յետամնաց քաղաքի իր խղճուկ ժառանգութեամբ, ծուռ ու մուռ, փոշոտ եւ անարեւկարգ փողոցներով, մէկ-երկու յարկանի կառուցն տըներով: Ըստ 1924 թ. Ապրիլին Հայաստանի կառավարութեան կողմից հաստատուած Երեւան քաղաքի վերակառուցման գլխաւոր յատակագծի, այն հիմնական վերակառուցման պիտի ենթարկուէր, պահպանելով լոկ մի քանի փողոցների ուղղութիւնները: Քաղաքային ողջ տարածքը պատուելու էր լայն եւ բարեկարգ փողոցների ու պողոտաների կանոնաւոր ցանցով, հասարակական կենտրոններով՝ այդ թւում գլխաւոր հրապարակով (այժմ Հանրապետութեան վերանուանուած), տարբեր բնոյթի հասարակական շէքերով, բնակելի թաղամասերով: Մայրաքաղաքի լաւագոյն էկոլոգիական պայմանների ստեղծման հետամուտ, նա արդիւնաբերական շէքերը նախատեսում էր տեղաբաշխել առանձնակի՝ Երեւանի հարաւակողմում: Նոյն նպատակով նախագծում պատշաճ տեղ էր յատկացուած քաղաքաւորածութեան կանաչապատմանը եւ ջրային մակերեսների ստեղծմանը, ինչպիսիք հրամայաբար թեւալարում էին կլիմայական չոզ պայմաններով: Քաղաքն օդակող լայն պուլվարի, պուրակների, դրօսայիների ընդարձակ ցանցի, Հրաղանի գեղատեսիլ կիրճում ստեղծուող դրօսայային ու արհեստական լճի, բնակելի թաղամասերի ներքին բակերի կանաչապատում, քաղաքը շրջապատող բարձունքներին արհեստական անտառաշերտերի ստեղծումը եւ այլք, նպատակ էին հետապնդում բարելաւել քաղաքի կլիմայական պայմանները, փրկուելու աւանդական փոշուց: Ու այդ բոլորը նախատեսուած էր իրագործել, նկատի ունենալով մայրաքաղաքի բնակչութեան աճը մինչեւ 150 հազարի: Այն ժամանակուայ կուսակցութեան աղջային էին: Բացի Երեւանից Թամանեանը մշակել է Նոր Պայազետ (այժմ՝ Կամօ), Վաղարշապատ (այժմ՝ Էջմիածին), Ախտալ (այժմ՝ Հրաղան), Աշտարակ քաղաքների, Սարգարապատի որբաւանի եւ Նուպարաշէն աւանների, Երեւանի Արաբկիր շրջանի կառուցապատման յատակագծերը, ինչպէս նաեւ նրանցում կառուցուող տարատեսակ շէքերի նախագծերը: Դրանով լոկ նա հայկական արդի քաղաքաշինութեան մէջ դեռեւս 20-ական թուականներին արմատաւորել է կոմպլեքսային կառուցապատման սկզբունքը:

Թամանեանի ստեղծագործութեան միւս կարեւոր բնագաւառն եղաւ տարբեր ոլորտի շէքերի նախագծումը: Իւրաքանչիւրի բովանդակութեանը համապատասխան յատակագծերի, եւ ծաւալաւորածական մշակումների ժամանակ նրանց արտաքին եւ ներքին ճարտարապետութիւնը մեկնաբանելիս հեղինակը կիրառել է պարզ ու անպաճճ ձեւեր, լաւ ընտրուած համաչափութիւններ սերուած դասական ճարտարապետութեան շտեմարանից: Այդ մասին են վկայում Երեւանում կառուցուած Բժշկական Ինստիտուտի անատոմի-

կումի մասնաշնչերը, Անանյայազական անանյայազական, Պոլիտեխնիկական և Ֆիզիկոտեխնիկական ինստիտուտների, Պետական համալսարանի աստղադիտարանի և Հանրային գրադարանի շէրքերը: Դրանցից իւրաքանչիւրը գտել է իր ֆունկցիոնալ բովանդակութեան պատշաճ ճարտարապետական լուծումը, նաև քաղաքաշինական ճշգրիտ տեղադրւածութիւնը:

Արտադրական շէրքերը, որոնց թուին են պատկանում Երեւանի առաջին Ջրաէլեկտրակայանի և Այդր լճի (Ակնալճի) ջրհան ենթակայանի շէրքերը, նոյնպէս լուծուած են պարզ, իրենց ծաւալներով ներդաշնակ բնական գեղատեսիլ միջավայրին, սակայն նրանցում հեղինակը խիզախել է այդ շէրքերի ճարտարապետութեանը հարգելի ազդեցութիւնը:

Ստեղծագործական նոյն, առաւելագոյն նորարարական դիրքերից է թամաններ յորինել իր երկու յիւրախ մեծագործութիւնները՝ Հայաստանի կառավարութեան տունը և Ժողովրդական տունը (յետագայում՝ Ալեքսանդր Սպենդիարեանի անուան Օփերայի և պալատի թատրոնի շէրքը): Նրանցում, ինչպէս հեղինակին է խոստովանել «... Ես փորձել եմ օգտագործել անցած դարերի մարտարապետական ժառանգութիւնը: Ես ձգտել եմ գրունել այնպիսի ձևեր, որոնք համապատասխանեին երկրի կլիմայական պայմաններին ու բնութեան առանձնախոյնութեանը, ինչպէս և արտայայտելիս Հայաստանի մի ժողովրդական ստեղծագործութիւնը, գտնել այնպիսի լուծում, որի մէջ ազգային ձևեր գուզակցի նոր (թամանների մօտ՝ սոցիալիստական, Վ. Յ.) բովանդակութեան հետ»:

Դա է եղել նրա ստեղծագործական հաւատարմը, ըստ որում հայ Ժողովրդի ազգային ճարտարապետութեան դանձարանին նա դիմել է (ունենալով թորոս թորամանների նման հմուտ խորհրդատու), ոչ որպէս հին ձևերի երկրպագու, այլ հետամուտ՝ այդ հարուստ ստացածի վրայ ստեղծելու նոր ու անկրկնելի: Նա երբեք չի կաշկանդուել ազգային ճարտարապետութեան աւանդութիւններից բխող հնարաւորութիւններով, մնալով դրանց հաւատարիմ, նա հարստացրել է մեր ազգային ճարտարապետութիւնը, դուզակցելով այն յաւազոյնի հետ, ինչը սերւում էր ուսական և համաշխարհային ճարտարապետութեան դուրս գործողներից: Վարպետի ստեղծագործական հնոցում դա ստացուել է որպէս ներդաշնակ մի համաձուլում, որ ամենեւին չի հրնչում որպէս ոճական անդաճութիւն: Դրանով էլ թամանները նշուած շէրքերի ճարտարապետութեանը հարգելի է ըսկողունըրէն նոր հնչելութիւն, մեր արդի ազգային ճարտարապետութիւնը բարձրացրել համարադրական չափանիշի: Այդ առումով կարելի է գուզահետանել իտալական վերածնութեան 15-16-րդ դարերի վարպետների գործելակերպի հետ: Մեկնարկելով անտիկ հուսման հանդէպ, նրանք ստեղծեցին այն նորը, որը պատուաւոր տեղ գրաւեց ճարտարապետութեան համընդհանուր պատմութեան մէջ, որպէս նրա զարգացման կարեւորագոյն փուլերից մէկը:

Վարպետի դուրս գործող իրաւամբ համարում է Հայաստանի կառավարութեան տունը, որով նա Երեւանի դիտարար հասարակական կենտրոնի՝ այժմ Հանրապետութեան վերանուանուած հրապարակի հիմքը դրեց: Հայաստանի կառավարութեան տունը իր հինգկողմանի, կենտրոնում քակ ունեցող յատակագծով գրադեցնում է հրապարակի հարաւարեւելեան կողմի տարածքը: Այն իր երկու ճակատներով ուղղուած է հրապարակի կողմը, իսկ միւս ճակատներով՝ շէրքը շրջանցող փողոցների: Տարբեր կողմերում գտնուող մուտքերից դիտարարն ու հանդիսատէսը արեւմտեան կողմին է, որտեղ կորագիծ յատակագծով ձգուող ճակատը կազմաւորում է օվալաձև հրապարակի հատուածները: Բացի դրանից, դէպի բակն են տանում կամրակապ երկու դարպասներ, որոնցից դիտարարն ուղղուած է հրապարակի կողմը գտնուող բարձր աշտարակի տակին:

Արտաքին ճակատների ճարտարապետութիւնը մշակելիս հեղինակը ձգտել է մարմնաւորել հարազատ Ժողովրդի պատմական վերածնունդը, ստեղծագործական ուժերի վերելքը: Ըստ էութեան նոր տիպի պալատական այս շէրքի հնչող հանդիսաւորութիւնն ու ձևերի մոնումեն-

տարութիւնը միահիւսուած է մատչելիութեան հետ: Ժողովրդական ստեղծագործութեան հիւթեղ ու կենսախիղձ ձևերը խորը կնիք են դրել շէրքի ճարտարապետութեան վրայ ընդհանրապէս: Նրա իւրաքանչիւր ճակատը, ինչպէս նրանքըրքերը գրքի էջեր, դիտողի առաջ բացուած են անկրկնելի հմայով: Հասկանալի պատճառով ճարտարապետական արտայայտչամիջոցները առաւել ցայտուն շէրքը կիրառուած է հրապարակի օվալաձև մասի կողմն ուղղուած դիտարար ճակատում: շէրքի կենտրոնը ընդգծելու նպատակով: Այնուհանդերձ, ճակատների ճարտարապետութեան անկրկնելիութիւնը չի գրկել նրան միասնութիւնից: Այն ընկալում է կուս ու ներդաշնակ, ընդգծելով քաղաքաշինական իր առաջատար դերը յետագայում իրականացուող հրապարակի ներդրանիկ ճարտարապետութեան մէջ: Վարպետն այս շէրքում համարձակորէն վերականգնեց քարէ ճարտարապետութեան վաղեմի աւանդութիւնները, հասցնելով դրանք բարձր կատարելութեան: Նա կարողացաւ կենքի կոչել հայ Ժողովրդի կարեւոր արժանիքներից մէկը՝ քարի գեղարուեստական մշակման արուեստը, դիտելով այն որպէս շէրքի բովանդակութիւնը արտայայտող ախտի միջոց: Քանդակային յորինուածքների մէջ համարձակորէն նոր շուռչ ու արտայայտութիւն է ստացել ազգային արուեստին հարազատ կատարելակերպը:

Թամաններն վիճակուած էջը աւարտուած տեսնելու 1926 թ. հիմնադրուած իր դուրս գործողներից մէկի շինարարութիւնը, վերահաս մասը (1936 թ.) գրկեց նրան այդ հնարաւորութիւնից: Որոշ փոփոխութիւններով (կտր դահլիճի փոխարէն, շէրքի մի թեւում Հայաստանի Գերագոյն Սորհրդին յատկացուող նիստերի դահլիճի յաւելումը), այն կատարուեց իր աւել որոն, ճարտարապետ Գէորգ Թամանեանի նախագծով և ընդհանուր գեկավարութեամբ: Նա հեղինակ է նաև ողջ շէրքի ներքին ճարտարապետութեան մշակման: Կառավարական հոյակէն տան շինարարութիւնն աւարտուեց 1940 թ.ին: Ի դեհաստուում մեծ վարպետի ստեղծագործական սիրանքի ու դանելով այն Սորհ. Միութեան ճարտարապետութեան աչքի ընկնող նուաճումների շարքը 1942 թ.ին Ալեքսանդր Թամանեանը յետմահու արժանացաւ Սորհ. Միութեան պետական բարձրագոյն մրցանակի: Հայաստանի պետական մրցանակով նշուեց նաև իր որդին՝ Գէորգ Թամանեանը, երբ աւարտուեց Հանրապետութեան Հրապարակի ճարտարապետական ներդաշնակ անսամբլի շինարարութիւնը:

Ալեքսանդր Թամանեանի յաջող մեծագործութիւնը, եղաւ Երեւանի Ալեքսանդր Սպենդիարեանի անուան Օփերայի և պալատի պետական թատրոնի շէրքը, որի նախագիծը նա մշակեց ստեղծագործական բարձր ներշնչմամբ ու կարող հմտութեամբ: Դրա մէջ հեղինակը ներդրել է հանդիսատեսային նոր տիպի շէրքի այն գաղափարները, որոնց մտայնացումը առաջացել էր գեղուս Ս. Պետերբուրգում ապրելիս, Հոկտեմբերեան յեղաշրջման առաջին տարիներին: Հաւատարիմ իր ստեղծագործական նորարարական միտումին, նաև քաղաքաշինակ աշխարհի լուսագոյն թատրոնական շէրքերի յորինուածքային ու ճարտարապետական լուծումներին, հեղինակն այս շէրքի նախագիծում (որը Ժողովրդական տունը, կամ Ժողովրդական տունը է կոչել), խիզախել է ու ստեղծել սկզբունքորէն նոր մի լուծում: Համաձայն նախագիծի թատերական այս շէրքը երկդահլիճ էր, որոնցից հարաւայինը՝ ձմեռնային, ծածկուած, իսկ հիւսիսայինը՝ ամառնային, անձածկ: Դրանց միջև տեղաւորուած է ընդհանուր օդանայրոծման բեմական մասը, որն իր բարձր ու յաղթ ծաւալով վեր է խոյանում երկու դահլիճների կիսաշրջան յատկացների վրայ բարձրացող ծաւալների միջև, կազմաւորելով միասնական կուս ու հաւաք ծաւալարարական յորինուածք: Բեմից դուրս բացուող երկու դարպասները նախատեսուած են ոչ միայն տեղերի ելումուտին, այլ նաև մեծ բազմութիւն քեմով անցկացնելուն՝ համաժողովրդական հանդիսութիւնների ժամանակ:

Ժողովրդական այսպիսի աննախադէպ յորինուածքը ըստ էութեան նոր խօսք էր թատրոնական շէրքերի նախագիծում պատմութեան մէջ, յիւրախ նորարարութիւն: Ահա թէ ինչու Փարիզում, 1937 թ. կայացած համաշխարհային ցուցահանդէսին

ներկայացուած Ժողովրդական նախագիծը յատուկ հետաքրքրութիւն առաջացրեց, արժանանալով Գոան ֆրէ՝ մեծագոյն մրցանակին:

Յուր, իր այս երկրորդ մեծագործութիւնն էլ հեղինակը է վիճակի չեղաւ կառուցմամբ աւարտուած տեսնել: 1926 թ. սկսուած շինարարութիւնը, միայն ձմեռնային դահլիճի մասում, այն էլ առանց ճակատների քանդակապատման, շահագործման յանձնուեց 1939 թ.:

Թամանեանի մտայնացումն իրականացուեց որոշ վերափոխութիւններով, որոնք թեղարուեցին կողմով անցնող պողոտայի (այժմ Մաշտոցի անուան) ուղղութիւնը շտկելով, որի պատճառով շէրքի հիւսիսակողմի աղեկաւորակը մասնատուեց և իրականացուեց իրարից մայրուղիներով բաժանուած հատուածների: Այդ կապակցութեամբ էլ ամառային թատրոնի փոխարէն նպատակաւորաբար գտնուեց կառուցել ծածկուած համերգային դահլիճ (այժմ Հաֆիլհարմոնիայի Արամ Սաչաւորեանի անուան): Այն իրականացուեց Գ. Թամանեանի նախագիծով: Երկդահլիճ շէրքում, օփերայի հանդիսատէրահան ունի 1260, իսկ համերգայինը՝ 1500 տեղ, որոնք իրովին ապահովուած են բարեկատու լսելիութեամբ և տեսանելիութեամբ, ինչը այս կարգի շէրքերի դիտարար պահանջներից է:

Թատրոնական շէրքն կառուցմամբ աւարտելուց յետոյ իր հուժկու ծաւալով, դասական ու ազգային ճարտարապետութեան ներդաշնակ միահիւսութեամբ վեր է խոյանում մայրաքաղաքի համայնապատկերում, հանդիսանալով դրա ուշագրբաւ շէրքը, արդէ հայ ճարտարապետութեան ամենահիասքանչ կոթողներից մէկը: Դրանում ակնառու է թամանեան-քաղաքաշինարարի կանխամտածուած կողմնորոշումը շէրքի կառուցման համար տեղ ընտրելու գործում:

Թամանեանը ոչ միայն մեծ ճարտարապետ էր, այլև քաղաքաշինութեան շինարար ու այդ գործի հմուտ կազմակերպիչ: Նա քաղաքաշինութեանը, որ ճարտարապետութիւնը չի կարող զարգանալ առանց յենուելու գիտութեան և տեխնիկայի նուաճումների վրայ, ուստի հետաձուտ էր դրանց արմատաւորմանը նախագիծման և շինարարութեան մէջ: Մեծ կարեւորութիւն էր տալիս շինարարական աշխատանքների մեքենայացմանը, դիտելով այն, որպէս կառուցումն արագացնելու և էթանացնելու էական միջոց: Ըստ նրա մտայնացման Ժողովրդական ձմեռնային հանդիսատեսուած բազմաթիւները առտոմատ կերպով պիտի դառնային դէպի աջ ու ձախ: Դա թելադրուած էր նրանով, որ բեմը դէպի դահլիճն էր ուղղուած իր կենտրոնական և դրա երկու կողմերի բեմական բացուածքներով, երբ ներայացումը փոխադրուած էր կողմնաբեմերը:

Թամանեանը նախագիծում ու կառուցումը դիտարար էր որպէս միմիայն հետսերտորէն կապակցուած գործընթաց: Կառուցումը պիտի ընթանայ նախագիծի հեղինակի ամէնօրեայ հսկողութեան տակ: Դրանով պիտի բացատրել, որ նախագիծման իր արուեստանոցը կից էր Ժողովրդական շինարարական հրապարակին ու հեղինակին յամայն կարելի էր տեսնել յատուախտակների վրայ: Ժողովրդական ճարտարապետական արուեստանոցը և շինարարական հրապարակը միասին վերցրած մի կատարեալ փորձարարական-հետազոտական դպրոց էր, որտեղ մեծ ուսուցչապետ Ալեքսանդր Թամանեանի գեկավարութեամբ մասնաւորական կոլեկտիւ ստացան տասնընեակ ճարտարապետներ ու կառուցողներ:

Հայաստանի ժամանակուց առաջին իսկ օրերից նախագիծման ու կառուցման հետ միասին, քաղաքաշինութեան վարպետի առաջնակարգ հոգեբերից մէկն էլ եղաւ հայ Ժողովրդի մշակութային հարուստ ժառանգութեան պահպանութիւնը: Նրա, Մարտիրոս Սարգսի, թորոս թորամանեանի, հնազէտ Աշխարհբէկ Քալանթարի նախաձեռնութեամբ և Հայաստանի կառավարութեան 1923 թ. Դեկտեմբերի 18-ի յատուկ որոշմամբ ստեղծուեց հուլիանների պահպանութեան կոմիտէ: Կառավարութեանը թամանեանի յղած դեկուցագրում կարեւոր էր. «... Մեր գեղարուեստի յիշատակարանները քանի են մեզ համար, ոչ միայն որպէս պատմական փաստաթղթեր, նոյն ժամանակում են նաև որպէս հիմք և անպատարազարկ ապագայ ստեղծագործութեան համար»:

Աւելի քան տասը տարի, որպէս նախագահ, ղլխաւորելով նշուած կոմիտէն, թամանեանը անդու ջանքեր գործարեց, Սորհ. Հայաստանի տարածքում գտնուող

քաղաքաշինական յուշարձանների պետական պահպանութեան գործը կազմակերպելու ուղղութեամբ: Մտերմական ուսերտ էին կապերը հայ ճարտարապետութեան երկու արժեքների՝ թամանեանի և թորամանեանի միջև: Առաջինը դրանցից նպաստում էր թորամանեանի հետագոտական աշխատանքների կազմակերպմանը, իսկ երկրորդը նպաստեց թամանեանի հայկական յուշարձաններին ծանօթանալու, ինչը բարեբար ազդեցութիւն ունեցաւ նրա ստեղծագործութեան վրայ:

Մեծ հայրենասէր ու քաղաքացի, տաղանդաւոր ճարտարապետ ու լայնահամուտ շինարար, իր ժամանակի մտաւորականութեան կիզակէտ, ազգային է Ալեքսանդր Թամանեանի հակիթն ընթացիկը: Նա ապրեց ու գործեց յանուն իր Ժողովրդի բարեկեցութեան և լուստար ապագայի, նրան նուիրեց իր քաղաքային գործերը, որոնք պիտի յարանուեն դարէ դար, որպէս հայկական ճարտարապետութեան մերօրեայ առկայ ծուծներ:

Հանդիսանալով մեր արդի ճարտարապետութեան ուղիները հարթող ջանակիրը, նա օրինակ ծառայեց հայ ճարտարապետների մի քանի սերունդներին, ստեղծեց ճարտարապետական մի դպրոց, որն իր անունով կոչուած է «Թամանեանական»: Նրա հետեւորդները, հայ ճարտարապետների մի ստուարացած բանակ, վերատեղեց Երեւանի և Հայաստանի միւս քաղաքների ու բնակավայրերի ճարտարապետական նկարագրերը: Երեւանի «Թամանեանական» կոչուած կառուցարարական տարածքը օժտուած է այնպիսի ազգային ցայտուն առանձնախոյնութեամբ, որ շեն չիտի աշխարհի որեւիցէ քաղաքի հետ: Դրա հանդուցապէս Հանրապետութեան հրապարակի ճարտարապետական ներդաշնակ անսամբլն է, որը նրա յղացման հեղինակի՝ Ալեքսանդր Թամանեանի յետնորդների կողմից վերջնական իրականացում ստացաւ:

Կենքի վերջին տարիներին թամանեանն աշխատում էր «Մեծ Երեւանի» յատակագիծի մշակման վրայ, քանզի մայրաքաղաքի բնակչութեան թիւը գերաճել էր 150 հազարից: Վերահաս մահուան պատճառով այդ կարեւոր գործը մնաց թերաւարտ: Հայ Ժողովրդի խորը վշտով համակուեց իր մեծ գաւակի մահուան առթիւ: Նրա յիշատակին նուիրուած մահախօսականում Ալգափ Սիւնջեանը, արտայայտելով ողջ հայ Ժողովրդի արիստանքը, գրել է. «Յանձնիմ թամանեանի մեհի կորցրիմ մեր շինարարութեան և մշակութային գաւակի ախաւոր մի գործչի, որի յիշատակը պայծառ կը մնայ հարի. Հայաստանի աշխատաւորութեան արտերում»: (Գիտէ՞ր արդեօք մահախօսականի հեղինակը, որ նոյն 1936 թ., ընդամէնը հինգ ամիս յետոյ ինք էլ զոհ է դառնալու Լուրինով Բերեայի միջոցով իրականացուած սաստիկ նախաձեռնի): Իսկ մեծ բանաստեղծ Նիկիտ Չարենցը (որը յաջորդ տարի իր մահահանգուեց ինքեց Երեւանի բանտում), այսպիսի լուսաշող տողերով պիտի ողբար թամանեանի մահը.

«Որքա՞ն նման է եղել մահն այդ մարդկանքին
Նրա կոպերը երկի, երբ բարացել են յապաղ
Կապոյտ բոցով բռնկուած վերջին
Յերմուտ ուղեղի
Նա տեսել է երեւի արեւային մի քաղաք
Ինչպէս մահուր մարմարի կապոյտ
կողին նկարած
Արեւային ժամացոյց՝ բարտեզն ախա
քաղաքի,
Պողոտաներ՝ փողոցներ՝ բոլորամիզ
երկարած,
Իսկ կենտրոնում երկնախա,
գրանիտեայ մի բազիլի,
Ակնքարքում մի վեմ, որ երկարում է դարեր,
Որ փողփողել են ուղեղում - սիրտ
պայքելու չափ պայծառ
Սիւնաշարք՝, տերաքներ,
աստիճաններ մարմարե,
Եւ պարտեզներ ոսկեգոծ,
չաւորաններ երկնագոյն...»

Փառք ու պատիւ և յաւերժ յիշատակ արդի հայ ճարտարապետութեան մեծատաղանդ ջանակիրին:

Փ Ր Ո Յ . Վ Ա Ր Ա Ջ Մ Ի Տ Գ Ե Ի Ա Ր Ո Ի Ե Ս Տ

Երեւան

LE NUMERO : 5,00 F

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԵՒՄԱՐԵ ՄԻԱՔԵԱՆ (1925-1957)

69րդ ՏԱՐԻ - ԹԻԻ 18-474

Fondateur SCHAVARGH MISSAKIAN

69e ANNEE — N° 18.474

ԱՆԿԱՐԵԼԻ ԵՌԱՆԿԻՒՆԸ

Այս տարի ծննդեան հարիւրամեակն է բնեւորման Նուրիկեանի (1894 - 1988)՝ Ամերիկայի մէջ երկարամեծ «Գաւառի գրականութեան» ներկայացուցիչներէն: Իր գրական վաստակին կողքին, Նուրիկեան ծանօթ է նաեւ իրրեւ ամերիկահայ «Նոր Գիր» հանդէսի մղիչ ու ժեղքէն մէկը: Ան գրեթէ տասնամեծ է եւ (1939 - 1954) առանձինն տասնամեծ է եւ ամենայն պարբերականին հրատարակութեան դժուարին աշխատանքը, ճիշդ է, իր գրչեղբայրներուն՝ «Նոր Գիր»-ի տղա՝ անունով յայտնի խմբակի անդամը:

Ամերիկահայ մամուլի պատմութեան մէջ, «Նոր Գիր»ը հաւանաբար յիշուի իրրեւ գուռ գրական մտահոգութիւններ ունեցած միակ նախաձեռնութիւնը, մասնաւոր միջավայրի մը մէջ, ուր նախափորձիւններու կարիքը լայնօրէն բանալու օրինակներ չէին պակսեր՝ «Հայրենիք» ամսագիրէն սկսեալ: Ու նաեւ պիտի յիշուի զազափարական տարբեր հոսանքներէ եկող գրողներու ժամադրափայլը եղած ըլլալու իրողութեամբ, երբեք մը գոր պէտք չէ անտեսել ճանաչման մտերմութիւններով լեցուն իր ժամանակաշրջանի պարագային:

Այդ վայրին բնակիչներէն էին Յակոբ Օշականը եւ Կոստան Չարեանը. առաջինը՝ գրեթէ տիրական ներկայութեամբ, երկրորդը՝ բաւական համեստ մասնակցութեամբ, ինչպէս պիտի տեսնենք: Բ. Նուրիկեանի ծննդեան հարիւրամեակը թրեւս յարմար պատրուակ մըն է մօտանկիւններու համար «Նոր Գիր» գործառնական թղթածրարը, որ իր աշխատակցութեան զատ կը ներառէ նամակադրական կապ մը, ինչպէս եւ Օշականի անդրադարձները անոր մասին: Նուրիկեան կը դառնայ եռանկիւնի մը առանցքային կէտը, մէկ կողմէն բաց՝ անկարելի եռանկիւնի մը, քանի որ Օշականի և Չարեանի միջեւ այդ թուականներուն շփումն ոչ մէկ եղբ կար, ընդհակառակն: Տպագիր եւ դիւանական նիւթերու -- մասամբ ծանօթ -- համատեղ քննարկումը, կը խորհինք, կրնայ շահեկան ըլլալ Կ. Չարեանի կեանքի ու մտածումներու որոշ երեսակներուն առաւել ծանօթացման համար:

ԿԱՐԵՒՈՐ ՆԱՄԱԿ ՄԸ

Չարեան - Նուրիկեան կապը 1938-ին կը սկսի: Այդ տարուան Ապրիլին, «Հայրենիք» ամսագիրին մէջ լոյս կը տեսնէ Կ. Չարեանի «Երկիրներ եւ աստուածներ» շարքին վերջին կտորը. գործը կը մնայ կիսատ: Ըստ ամսագրի խմբագիր Ռուբին Իսաբեկեանի 1946-ին գրած մէկ նամակին, Չարեան կը դադար աշխատակցելէ եւ կը խզէ իր յարաբերութիւնները «Հայրենիք»-ի հետ պատճառ դնելով Օշականի «Մինչեւ ո՞ւր...» թատերախաղին հրատարակութիւնը, զոր ինք կը նշկատէր իր դէմ եղած յարձակում մը անդէսին կողմէ (1): Ապագային վերապահելով Չարեան - «Հայրենիք» ընդարձակ թղթածրարին ներկայացումն ու քննարկումը, պէտք է շեշտել որ, անկասարար Չարեանի կեցուածքէն, այդ խմբակի չի հիմնադրեր «Երկիրներ եւ աստուածներ»-ու ընդհատումը, քանի որ Օշականի գործը հրատարակուած է 1939-ին:

Չարահեռարար, 1936 - 37-ին, Անդրանիկ Անդրէասեանի խմբագրութեամբ լոյս տեսած է «Նոր Գիր» ամսագիրը, որ հարկադրաբար դադարած է խմբագրին ֆրեզնօ փոխադրութեան պատճառով (2):

Նուրիկեան կը հրատարակէ «Այգեկութեք» խորագրուած պատմուածքներու իր երակարգը (Նիւ-Եորք, 1937), որմէ օրինակ մը կ'ուղարկէ Չարեանին, հաւանաբար նամակով մը, ինչպէս եւ թագրելու տայ հետեւեալ պատասխանը, գրուած՝ իտալական Ասկոնա քաղաքը, 1938 Յունուար 23-ին. -

«Ցաւում եմ որ այդքան ուշացրի պատասխանս»: (2 բառ անընթ.) էի եւ շատ դրադամ: Ձեր «Այգեկութեք»ը կարգացի խիական գրական հաճոյքով. դեղեցիկ նկարագրական էջեր ունէք եւ պատմելու կարողութիւն: Աւա՞ղ, այն անցեալը, որ վերակոչում էք, գերեզման է: Հայ կեանքը անցել է մէկ բեւեռից միւսը եւ մնացել է օդում կախուած եւ նրա հետ միասին նաեւ հայ գրականութիւնը: Գտնել հայ մտքի նոր ճամբաները, նոր մղում եւ նոր բովանդակութիւն տալ այդ կեանքին եւ նախատեսել հոգեկան զարգացման կարելի ապագան, այդ պիտի լինի, կարծում եմ, հայ ստեղծագործութեան ներպատակը: Դժուարին եւ փոռաւոր նպատակ...» (3):

«Աւա՞ղ, այն անցեալը, որ վերակոչում էք, գերեզման է»: Չարեանի այս կրտուռիկ հաստատումը անելի հասկնալի կը դառնայ եթէ վերջէնք Նուրիկեանի ժողովածուն հիմնական բնօրէն՝ հայրենի դիւրի վերակերտումը, հետեւելով Համասեղի բացած ուղիին: «Կարօտի գրականութեան» մէկ վաւերական նմոյշը, որ ստեղծուած է համաձայն դեղադիտական այն ծրագրին, որ կը գործադրուէ «Ֆրեզնօ» համար վերջին փշուրները ժողովուրդի կեանքին, որուն մէկ խոշոր հատուածին ճրագը մարեր է ալ իր հին հողերուն երեսին» (4):

Վազգէն Գարրիէլեան որոշ գաղափար կու տայ Չարեանի ակնարկած «գերեզմանած անցեալին»: Գրականագէտին հաստատումով, Նուրիկեան «անելի շուտ վերջիւում է իրական դէպքեր ու մարդկանց, քան ստեղծուած գրական կերպարներ», «կարեւոր տեղ է տալիս գիւղական ընտանիքներին, կենցաղի, բարքերի, սովորութիւնների նկարագրութեանը, առօրեայ կեանքի մանրամասներին՝ անդառնալիքին կորցրածը ամբողջականորէն ներկայացնելու համար» (5): Յայտնի երեւոյթ է, որ փաստագրական նման մթերքով հարուստ է 1920 - 1930-ական թուականներուն մշակուած «կարօտի գրականութիւնը», ուր ներդաշնակուած են անցեալին ապականելու փոյթը՝ ներկային ազատելու համար, եւ ազգագրական մտահոգութիւնը՝ դիւրը փոխանցելու յաջող սերունդին:

Բայց ո՞ւր էր գրական այս հոսանքին շահեկանութիւնը: Անցեալի լուսանկարչական «խրապաշտ» կամ կարօտագրած («Վիպապաշտ») վերարտագրութեան մէջ: Չարեան անկողն կը նկատէ զայն, եւ նամակին յաջորդ նախադասութիւնը կը պարզէ անոր պատճառարանութիւնը. -

«Հայ կեանքը անցել է մէկ բեւեռից միւսը եւ մնացել է օդում կախուած եւ նրա հետ նաեւ հայ գրականութիւնը»: Ուշագրի ընթերցող պիտի նկատէ հետաքրքիր հանգիտութիւն մը Նիկողոս Սարաֆեանի բազմիցս մեկնաբանուած պարբերութեան մը հետ, որ տպուած էր վեց տարի առաջ «Մենք»-ի անդրանիկ համարին մէջ, եւ ուր, խօսելով իր սերունդին մասին, կ'ըսէր. -

«Մօտ, շատ մօտ եւրոպական քաղաքակրթութեան՝ ան դժուար ինքզինքը պարագայ» (6): Սարաֆեան, իր սերնդակիցներուն պէս, կը շօշափէր հայրութեան պակաս

սի հարցը (7): Միայն է 1915 թուականը ֆիզիկական եղեռնով սահմանել, սխալ է մշակութային հարստութիւններու կորուստը բնորոշել յուշարձանի, ձեռագիրի, ակերակի օրինակով: «Այդտ» բառի օգտագործումը ինքնանպատակ է եթէ չմտածենք, որ ան կը սահմանէ հայրերու բնաջնջումը, մշակոյթի բնաջնջումը: Ի՞նչ կապ հայրերուն եւ մշակոյթին միջեւ: Ա՛յն, որ կտրուած է փոխանցումի շղթան, մշակոյթ ժառանգելու յատկութիւնը: Առաջին սպաննուողները եղած են մտաւորական «հայրերը», ապա՝ ռազմիկ «հայրերը», հուսկ՝ բեղմնաբոց «հայրերը»:

1915-ին միայն մարդիկ մեռած չեն. մեռած է մշակոյթ մը: Մահուան այս վերջին հատկացողութիւնն է զոր նկատի ունեցած է «Մենք»-ի սերունդը, եւ ո՛չ սերունդներու հերթափոխութեան սովորական աքորամարտ մը: Մշակոյթի մահը դիրենք կը դնէ պարագլուխ մը դիմադրուելու փորձառութեան առջեւ. իրենց ստեղծուած տակէն հողը՝ մշակոյթը

Գրեց՝
ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Իրաւամբ սահած է, եւ օգտակար մնացած են: Անցեալը անհետացած է եւ յղումի նոր եղբ մը անհրաժեշտ է:

Այս ծիրին մէջ պէտք է արձանագրուի Ծահան Ծահուրի «Գալթակեցուցիչ» արտաստուածութիւններէն մէկը, որ «Նա-հանջը առանց երգի»-ին մէջ տպուած է՝ Սարաֆեանի խօսքէն քիչ առաջ. -

«Աւելի լաւ է ձուլուիլ, քան թէ ապրիլ առանց զարչապարնելու դրօշմին:

Ներքիններ են մեր բոլոր պապերը. անոնք ոչինչ կրցեր են քանդակել միսին վրայ, անտեղ ոչինչ կրցեր են քանդակել միտով: Մեր մէջ մեծ պակաս մը կայ գոր պէտք է լեցնել դիտնային: Մենք Հայաստան չենք ապրած. անոր հողն ու օդը անծանօթ են մեզի. անոր բարքերն ու սովորութիւնները մեզ չեն կոտած եւ բնական է որ մենք սիրենք մեր ծննդավայրը միայն, այսինքն երկիր մը օտար: Մեր նախնիներուն իրարու յաջորդող բոլոր սերունդները չեն կրցեր մեզ փրկել, չեն կրցեր մեզ այդ մեծ սէրը տալ: Պոռոտախօսութիւնները կը ցնդին բոլորն ալ. ճշմարիտ հայրենասիրութիւնը կարօտ է մանուկան մեր պարագային. անցեալի մը, եւ ծեծութեան, օրինակներու» (8):

Չզոյ անցեալ, պարագայ, փոխանցումի անկարելիութիւն: Չարեան կը խօսի անցեալի մը մասին, որ «գերեզման» է, հայ կեանքի մասին, որ «մնացել է օդում կախուած» եւ կ'աւելցնէ. -

«Գտնել հայ մտքի նոր ճամբաները, նոր մղում եւ նոր բովանդակութիւն տալ այդ կեանքին եւ նախատեսել հոգեկան զարգացման կարելի ապագան, այդ պիտի լինի, կարծում եմ, հայ ստեղծագործութեան նպատակը: Դժուարին եւ փոռաւոր նպատակ...»:

Հոս Չարեան կը մատնանշէ փոխանցումի անկարելիութիւնը յաղթահարելու ուղին. «Նոր բովանդակութիւն տալ»: Կարծէ ընդդէմ, որ «մնացորդաց» սերունդին մէջ, Չարեան միակը կը թուի ըլլալ, որ ըմբռնած է անցեալը tabula rasa ընելու եւ նոր սկիզբ մը որոնելու անհրաժեշտութիւնը, հող չէ, թէ ո՛չ «Քարիկի տղոց» հետ համաձայնութեան որեւէ եղբ ունէր եւ ոչ ալ «Միփիւս» երեւոյթը ընդունելու տրամադրութիւնը, ինչպէս նշած ենք այլ առիթներով: Յատկանշական է, միւս կողմէ, որ Փարիզի տրգաքն ալ, համատարած ժխտումի իրենց ալքերն մէջ, պարտաստ չէին ընդունել, որ այդ կէտին մէջ Չարեան կանխած էր զիրենք, դեռեւ «Անցորդը եւ իր ճամբան» էջերէն:

Նամակին համապարփակ վերլուծու-

մը, կը կարծենք, ի չիք կը դարձնէ Վ. Գարրիէլեանի քմահաճ մեկնաբանութիւնը: Հայրենի գրականագէտը ատենին հրատարակած է անոր վերջին հատուածը (չարք մը սեռնեղով հանդերձ, ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը), բայց զայն կարած է իր շքարկէն ու այդ իսկ պատճառով ստացած է հետեւեալ անընդունելի արդիւնքը. -

«Բոլոր այս գործերում Չարեանը շարունակում է «հայ ոգու» որոնումները, փորձում դառնել այն առանձնապատուկը, որ հայ է պահում հային, տեսնել, բարցատրել հայութեան ճակատագիրը: «Բրա-նել հայ մտքի նոր ճամբաները, նոր բովանդակութիւն տալ այդ կեանքին եւ նախատեսել հոգեկան զարգացման կարելի ապագան, այդ պիտի լինի կարծում եմ հայ ստեղծագործական նպատակը: Դժուարին եւ փոռաւոր նպատակը», - այսպէս է բացատրել իրեն Չարեանը 1938 թ. գրած իր մի նամակում, ուղղուած Բ. Նուրիկեանին:

«Հայ մտքի նոր ճամբաների» իր որոնումներն մէջ Չարեանը երբեմն սայթաքեց, թոյլ տուեց գաղափարական վրիպումներ ու հակասութիւններ, չըմբռնեց մեր կեանքի փերափոխումների նշանակութիւնը, երբեմն էլ հակադրուեց՝ տարագրութեան առաջին տասնամեակում...» (9):

Սակայն, հոս նկատելի է, որ Չարեան բացարձակապէս չի խօսիր Սորոս. Հայաստանի կամ Հայութեան ճակատագրի մասին: Սօսը ստեղծագործական նոր ուղղութեան մը փնտրուելին կ'ակնարկէ, որ կապ չունի զազափարակասական կամ ազգային որեւէ նպատակի հետ: Միով բանիւ, մշակութային նոր բովանդակութիւն մը որ կեանքի հիմք դառնայ:

ՈՒՐԻՇ ԹԻՒՐԻՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Չարեանի եւ Նուրիկեանի նամակադրութիւնը անմիջականօրէն շարունակուած չէ: «Նոր Գիր»-ի առաջին շիջումէն ետք, Հոկտեմբեր 1938-ին անոր շուրջ բոլորում խմբակցութիւնը կ'որոշէր վերակենդանացնել զայն, եռամեայ պարբերականութեամբ: Առաջին թիւը հրատարակ կ'իջնէր Ապրիլ 1939-ին (10): Նուրիկեան երբորդ թիւէն օրինակ մը ուղարկած է Չարեանին, որ զայն ստացած է Ֆրոնտան, ուրիչ գովասանական նամակ մը գրած է 1940 Փետրուար 5-ին. -

«Ձէի իմանում որ այդպիսի դեղեցիկ հրատարակութիւն գոյութիւն ունի Ամերիկայում եւ անխառն հաճոյքով է որ կարդացի «Մասնայ ծոբ»-ին ներուած բովանդակային եւ դեղեցիկ թիւը: Եստ պիտի ուզէի միւս թիւերն էլ տեսնել: Ի՞նչ լաւ կ'լինէր եթէ «Նոր Գիր» կարողանայի վերածել ամսագրի, մանաւանդ որ հիմա, պատերազմի պատճառով, Եւրոպայում հրատարակուող գրեթէ բոլոր գրական թերթերը մատնուած են մեռնելու» (11):

Իր պատասխան նամակով (1940 Մարտ 31), Նուրիկեան կը յայտնէ միւս թիւերն ալ ճամբած ըլլալը, հանդէսին աստիճանական տարածումին իրողութիւնը՝ օր մը ամսագրի վերածելու փափաքով - որ, ի դէպ, չիրականացաւ, եւ Չարեանը կը հրաւիրէ աշխատակցելու (12):

Յիշեալ նամակին մէջ, Չարեան «անհասկնալի» գաղափար մը կը յայտնէ. -

«Ապա՞ վախում եմ որ մեր Հայաստանին վիճակուած են դժուարին եւ վճռական օրեր Անդրիայի եւ Ֆրանսայի մեզ հանդէպ բռնած սրիկապական դաւանանքազաւակնութեան պատճառով: Չեմ կարող երեսակայել իսկ որ կարող են լինել հայեր որ պատմական այս օրերին բոլորում չլինեն մեր սիրելի հայրենիքի եւ նրա հարազատ ժողովրդի շուրջը» (13):

«Անհասկնալիութիւն»ը կու դայ զուտ քաղաքական դրդապատճառէ մը. խորհրդահայ գրականագէտները (եւ քաղա-

ԱՌԱՍՊԵԼԱԿԵՐՏՈՒՄ

1

Եօթը տարի առաջ, «Մեհան»-ի սերունդին նուիրուած դասաւանդումի մը ընթացքին՝ կ'ըսէի, որ Կոստան Զարեանի կեանքը մեծ մասամբ կը մնայ «առասպելական»: Պատճառներէն մէկը անշուշտ այն էր, որ իր մասին ունէինք այն ատեն միմայն իր գրելով ծանուցուած դրուագներ: Եւրոպական գրականութեան մեծ անուններ կը շրջէին իր օրագրային նըշուներու էջերէն ներս, Եւրոպայի քաղաքական ու գրական ղեկներ կը յայտնուէին նախադասութեան մը անկիւնադարձին: Ո՞րն էր ճշմարտին քաժինը, ո՞րն էր հնարովիին ու յերիւրուածին համեմատութիւնը: Ինչպէ՞ս գիտնալ:

Հաւանաբար առարկուի, թէ բան մը պիտի չփոխուէր, եթէ գիտնալինք ստոյգ դիտութեամբ՝ թէ բանն նստած է իր կապէս Գերմանիոյ մէջ յեղափոխական բարեկամներու հետ նիստուկացի հետեւանքով, թէ յօղուած գրած է Լենինի կողմէ հրատարակուած այսինչ պարբերակներին մէջ, թէ մօտ եղած է Վերհարէնին, թէ թղթակցած է Ունամունոյի եւ Միլլըրի հետ... Այդ ուղղութեամբ առաջին առարկողը ե՞ս պիտի ըլլայի: Նպատակ Զարեանի ճշմարտախօսութեան շուրջ կատարածներ քարճարցնել չէր ուրեմն: Կենսագրական մանրուքները Զարեանի պարագային լիովին մաս կը կազմեն իր մշակած գրականութեան, ու նոյնքան հաւաստի են հետեւաբար՝ որքան կէօթէի «Բանաստեղծութիւն եւ ճըշմարտութիւն» գրքին տուեալները, կամ նոյնքան յերիւրալից եթէ «Արեւմուտք» եւ «Քաղաքներ» գործերը իրրեւ գրականութիւն պիտի կարգուիք, այդ անձնական նշումներուն օրինակիւններ կը փոխուի հիմնովին: Անոնք իրական կեանքի հետաքրքրաշարժ եւ յափշտակիչ դրուագները ըլլալէ կը դադրին, ու բանաստեղծացած ճշմարտութիւն կը դառնան: Եւ այդ իմաստով, այո՛, առասպել: Անձնական առասպելին արտաքին ցուցանիչները:

Ճշմարտութեան աւելի ուրեմն՝ ցանուած անուններուն նկատմամբ հեղինակին կեցուածքն էր, որ կը մնար գրեթէ անտրոշելի, երկրորդաբար՝ խորհրդաւոր: Անուններուն, դէպքերուն, անձնական կենսագրութեան հանդէպ կեցուածքին ընդմէջէն՝ թերեւս հասկնալիք Զարեանին մշակած գրականութեան էութիւնը: Այս իմաստով՝ բանասիրական պարզ ու անմեղ հետաքրքրութիւն մը կը վերածուէր գրական լուրջ հարցադրութեան մը: Հետեւաբար՝ տարուելիք կարեւոր աշխատանք մը կար պղտեղ, կենսագրական դէպքերու իրական տարողութիւնը ճշդելու ճամբով: Հարցը կը կրկնեն՝ գրողի մը ճշմարտախօսութիւնը չափել չէ՞ր, այլ հասկնալ թէ ինչպէս եւ ինչո՞ւ ինքնակենսագրութիւնը կը գործածուի իրրեւ հում նիւթ ու կը վերածուի գրականութեան:

Ինքնակենսագրութեան այս տեսական շահագործումը առաջին մէկ օրէն ներած է Զարեանի շատ մը ընթերցողներ, որովհետեւ քաղաքաճակագրական կը տարբերէր ընթացիկ գրականութեան մէջ գործածուած միջոցներէն: Անձնական առասպելին մշակումը կը չփոխուէր յաճախ՝ հեղինակին «պէրապիւրութեան» մը կամ ուղղակի՝ «ինքնագոյութեան» մը հետ: Պիտի մէջըրեմ քիչ անդին՝ Զարեանի դիմադրութեան լուսագոյն ծանօթներէն՝ Յակոբ Օշականէն քանի մը հատուածներ, որ ընթերցողը յստակ պիտի տեսնէ, որ Օշականի աչքին՝ գերակշիռը Զարեանի մօտ այդ պէրապիւրական ինքնագոյութիւնն է: Ո՞ր կ'անցնէր սահմանը ինքնագոյութեան եւ ինքնագրութեան միջեւ: Ի՞նչ է այս ինքնագրութիւնը:

2

Հակիրճ պատասխանի մը փորձը առաջարկելէ առաջ, կ'ուզեմ ըսել, որ 1987-էն ի վեր, Վարդան Մատթէոսեանի պրըպտումները բաւական բան փոխեցին այս վերաբերմունքին եւ հարցադրութեան: Իրմէ առաջ՝ Զարեանի շուրջ երբեւիցէ հետաքրքրական ու վերլուծական աշխա-

տանք չէր կատարուած: Հայաստան եւ Սփիւռքի հաւասար էին այս դեմքի վրայ: Սփիւռքի մէջ չկային իրր թէ անհրաժեշտ կառոյցները այդպիսի աշխատանք մը առաջ տանելու համար, իսկ Հայաստանի մտաւորականութիւնը չէր կրցած ազատի իր բերկրութեամբ ընդունած մըտային կապանքներէն: Վարկեան մը իսկ չէմ հաւատար անշուշտ, որ կառոյցներու պակասը կամ սիրայօժար ընդունուած կապանքները կը քաջատրեն գրողի մը նըկատմամբ՝ այս աստիճանի թղթընթաց: Հայրենի ո՞ր գրականագէտը ցոյց տուած է Զարեանի, ինչպէս նաեւ իր սերնդակից եւ ձեռով մը բախտակից Օշականի գործին նկատմամբ ստեղծարար հետաքրքրութեան մը մագաչափ նշոյլը: Երկուքին ալ մեղքը այն էր որ, կանգնելով հանդերձ գրական հակոտնեայ բեւեռներու վրայ, ընտրած էին ազատութիւնը: Այդ մեղքը պիտի քաւէին մինչեւ վերջը:

Փաստօրէն՝ այսքան տարիներ անցան, աշխարհը փոխուեցաւ, ներքին ու արտաքին պատերը փլուսեցին շորս դին, սակայն Հայոց մտաւոր աշխարհը կը մնայ նոյն թմբերին մէջ, արժէքներու եւ մեծութիւններու հանդէպ նոյն սարսափելի անտարբերութեան համակուած, իր մորթին դուրս ելլելու, օտար տեղեր փոխադրուելու, նոր աշխարհներու եւ մանաւանդ՝ նոր հարցադրութիւններու հետ հարցադրուելու նոյն արատաւոր դանդաղութեան ցուցադրումով: Այսօր տակաւին՝ Սփիւռքը Կոստան Զարեան չի կարգար, որովհետեւ ընդհանրապէ՛ս չի կարգար: Հայաստանը Կոստան Զարեան չի կարգար, որովհետեւ զլլաւոր գործերը չեն տպուած հոն եւ ուրիշ շատ մը պատճառներու բերումով: Հայաստանի պարագային՝ հարցը սակայն աւելի՛ ծանրակշիռ է, պարզ այն պատճառով որ Զարեանին գրական եւ կենսագրական ճակատագիրը ինքզին թաւրկայ է աղտոտել: Ինչո՞ւ: Բացարձակօրէն նախաճաշակը միայն պիտի բանաճեւեմ հոս: Զարեան երբեք ինքզինքը Սփիւռքի գրող չէր նըկատած եւ չէր նկատեր: Իր բառերով ըսուած՝ «տարագիր» էր եւ ո՛չ թէ «գաղթական»: Յստակ է, որ «տարագիր»-ի վիճակն ու գաղափարը գերորոշարդուած է Զարեանի մօտ, քանի որ գրողը (իր բառով՝ բանաստեղծը) տարագիր մըն է ըստ էութեան, եւ ինք տարագիր մը պիտի մնար (եւ մնաց կեանքի վերջին տարիներուն) հայրենի հողին վրայ իսկ: Կը բաւարարուիմ հոս «տարագիր / գաղթական» հակադրութիւնը բանեցնող հատուածներէն մէկը մէջըրեւելով. «Տարագրութեան եւ ոչ թէ գաղթականութեան այս տարիներում, մեր սիրտը եւ միտքը մի վայրկեան իսկ չի անջատուել մեր երկրից եւ մեր ժողովրդից» (Նալը Լեքամ Վրայ, առաջին տպագրութեան յառաջաբանին մէջ): Ետո հետեւողական կերպով՝ Զարեան մեծած է այս ձեռով ամբողջ կեանքին ընթացքին՝ Սփիւռքի իրողութիւնը, աւետած է անպարզ մարդը, սպազայ առասպելը, հոն, հայրենի հողին վրայ, ուրիշ կ'անկեղծէր նաեւ իր ընթերցողները: Այնպէս որ մնացած է նոյնքան Սփիւռքէն տարագիր, որքան՝ հայրենիքէն:

Աւելցնեմ սակայն, որ Երեւան լոյս տեսնող «Նորք» ամսագրի 1994-ի Փետրուարի համարին մէջ տպուեցան Կոստան Զարեանի արխիւէն հանուած երկու «օրագիր»: Առաջինը 1954-ին Պէյրութի վերջին ամիսներուն եղած գրառումներն են (Զարեան ընդամենը՝ երկու տարի սպրած ու դասաւանդած է Պէյրութի մէջ): Երկրորդը կ'ընթաց 1956-ի Յուլիանի մինչեւ 1958-ի Օգոստոս, ու գրուած է մեծ մասամբ՝ Վիեննա: Հրատարակութիւնը եւ յառաջարանը կը պարտինք Եռուսի Սաչապրեանին: Իսկապէս ուրախալից երեւոյթ է՝ գրողի անտիպներուն հանդէպ այսպիսի լուրջ ու անկաշխանք վերաբերմունք: Եռուսի Սաչապրեան ցոյց կու տայ հոս բանիմաց վերձանողի իր կարողութիւնները (1): Առաջին անգամ ըլլալով նաեւ՝ լուսարձակի տակ կը գրուին Զարեանի «ենթագրական» գրառումները, որոնք էական են իր պարագային, քանի որ ուղղակի անոնցմէ կը մեկնի իր ողջ գրականութիւնը:

Ի՞նչ է ուրեմն Զարեանի մօտ՝ ինքնագրութիւնը, ինքնակենսագրութեան այդ իւրայատուկ օգտագործումը: Ինքնակենսագրութիւնը ծայրէ ծայր՝ ներկայ է Զարեանի գրականութեան մէջ ու կ'որոշողէր զայն: Գանի մը կէտերու շուրջ պիտի հաւաքեմ այս իրողութեան բացատրութիւնը, ամէն մէկուն վրայէն ըստիպողաբար՝ շատ արագ անցնելով:

ա) Զարեան փորձած է գրականութեան բոլոր սեռերը: Ամենակիրքը, նիցէական ընթերցումներու եւ իր ժամանակաշրջանին յատուկ վահէրեան աղբյուրներէն ճամբով՝ կ'ուզէր գրել հին Յոյներուն օրինակով՝ «տրամաստեղծերը» եւ թատրոն: Իր առաջին հայերէն գիրքը սակայն եղած է բանաստեղծութիւն, ու նոյնն է պարագայն յետ մահու տպուած իր վերջին գործին (Գիրք Իրեւանի գրագրութեան, Երուսաղէմ, 1978) (2): Գրած է վէպեր (Պանկոպը եւ մալուրի ոսկորները, որ լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ 1931-էն 1933, եւ Նալը Լեքամ Վրայ, լոյս տեսած՝ Պոսթըն, 1943-ին): Բայց գրած է մանաւանդ արձակ գործեր, որոնց բնոյթը առաջին սկիզբով կը տատանի յուշին եւ օրագրին միջեւ: Ասոնց վերնագրերն են (փակագծի մէջ պիտի դնեմ «Հայրենիք»-ի մէջ հրատարակութեան տարիները)՝ «Անցորդը եւ իր ճամբան» (1926 . 1928), «Արեւ-



մուտք» (1928), «Քաղաքներ» (1930), «Երկիրներ եւ Աստուածներ» (1935 - 1937): Առաջին երեք գործերը տպուեցան մէկ գիրքի մէջ «Երկիր, Պէյրութ, 1975): Վերջինը տակաւին լոյս չէ տեսած հատորով:

Զարեանի վէպերէն մէկը («Պանկոպը») անաւարտ ու հետաքրքրականօրէն՝ անյաշող վէպ մըն է (3), միւսը («Նալը») աւարտած վէպ է, ինչ որ չի նշանակիր սակայն, թէ յաշող է: Բանաստեղծութիւնը շահագրգռական է այն չափով, որ վերագրած մը կը կատարէ յիսուն տարի ետք՝ Վարուժանի դիւցազներգական ծրագրին, ինչ որ առնուազն զարմանալի կընայ թուի ընթերցողին, եթէ գիտէ ան Զարեանի բուն հակառակութիւնը ու մինչեւ իսկ յարձակումները Վարուժանի դէմ, «Մեհան»-ի օրերէն մինչեւ «Անցորդ»-ի էջերը: Ո՞ր կը գտնուի ուրեմն Զարեանի իսկական մեծութիւնը: Անշուշտ՝ բացայայտ կերպով ինքնակենսագրական գործերուն մէջ: Նաեւ (բայց մէկը միւսէն կասեալ) անոր մէջ, որ ինք անբաժանելի է Վարուժանի եւ Օշականի: 1913 - 14-ին Պոլսոյ մէջ՝ արեւմտահայ գրողներու վերջին սերունդին հետ իր ճակատագրական հանդիպումէն ետք, Զարեան չէ կրցած երբեք ձեռագրատի այն հոգեբանական, մարդկային ու գրական հանգոյցէն, որ զինքը կապած էր արեւմտահայ գրականութեան վերջին եւ ամենապայտուկ երկու ներկայացուցիչներուն (4): Թէեւ զիտացած չափով՝ Օշականի անունը մէկ անգամ միայն կ'անցնի իր տպուած գործին մէջ, ու Վարուժանի անունը՝ ո՛չ իսկ մէկ անգամ բացայայտօրէն: Զարեանն է, որ կը գրէ «Անցորդ»-ին մէջ. «Ինչքան կարեւոր է Պոլսից փախչել, Պոլսը յաղթել...» (Երկիր, էջ 39): Պոլսը յաղթելու, Վարուժանին եւ Օշականին հետ հանգոյցը կրտրելու, Երեւանին շուրջը շտեղծ հաստատ միտումը չի բացատրեր սակայն գործին ինքնակենսագրական որոշարդումը:

բ) Ինքնակենսագրական գործերու շարքին մէջ պէտք է դասել նաեւ 1933-ի անաւարտ վէպը՝ «Պանկոպը»: Վէպին սկիզբը՝ Հայաստանի խորհրդայնացման օրերը կը պատմուի, բայց վէպի երկրորդ «ըջման» տպուած մասը գրեթէ ամբողջութեամբ («Հայրենիք»-ի մէջ՝ 1933 Փետրուարի մինչեւ 1933 Սեպտեմբեր) գրուած է Իպերեանի (այսինքն՝ վէպին մէջ Զարեանի ներկայացուցիչ) օրագրով: Վէպին ձախողանքը կապուած է այն իրողութեան, որ Զարեան կատարելապէս անկարող է «անդրփոխանցում» մը յառաջանցնելու (այսինքն՝ transposition մը), կեանքէն դէպի վէպ անցումով տիպարներու թերեքտում մը, այլ բառով՝ տիպարակերտում մը: Ինչպէս պիտի ըսէր Յակոբ Օշական՝ «Ո՞վ չի գիտեր, որ դժուարագոյն հարցը գրելու ասպարէ-

զին մէջ՝ մարդեր կերտելու, բայց իրաւ, վաւերագրական մարդեր կերտելու աստուածային շնորհն է» (Համապատկեր, Գ. հատոր, էջ 463):

գ) Յստակ է, որ վերը յիշուած գործերը, «Անցորդ»-էն մինչեւ «Երկիրներ եւ Աստուածներ» օրագիր չեն, ո՛չ ալ գրողի մը յուշերը: «Նորք»-ի մէջ երկու օրագրերու հրատարակութիւնը աւելի համոզիչ կը դարձնէ այս կէտը: Զարեան կ'օգտագործէր հաւանաբար իր պահած օրագրերը, բայց շատ վտար բարեկիրտներու ենթակիցով գանոնք: 1954-ի օրագրին մէջ կը կարդանք՝ «Ուզում եմ անպայման «Նաւաստում»ը հրատարակել իրրեւ Դեմեթրի պիւսապոյի [գրողի օրագիր]: Ազատ աւել, ինչ որ մտածում եմ»: «Գրողի օրագիր»ը, որուն յորմը կ'ընթաց Տոսթոյեւսիին, կ'ընկերակցի սակայն ուս վիպագիրին ինչպէս ուրիշ շատ մը գրողներու մօտ՝ ստեղծագործական աշխատանքին: Մեծ տարբերութիւնը Զարեանի պարագային այն է, որ «գրեւելիք» օրագիրը եւ ստեղծագործութիւնը գաղտնի չեն: «Նաւաստում» անունը կրող Պէյրութի յուշերն ու տպուորութիւնները պիտի չնմանէին թերեւս միւս ինքնակենսագրական գործերուն: Բայց դժբախտաբար՝ Զարեան չէ իրականացուցած այդ ծրագիրը (որուն մէջ բաժին ունէր Պէյրութի հայութեան մասին շարախօսութիւնը, արհամարհանքը արտայայտելու փափաքը):

դ) Կէօթէի «Բանաստեղծութիւն եւ ճշմարտութիւն» գործին հետ բաղդատութեան ալ մինչեւ որոշ կէտ մը միայն կը գիմանայ: Ինքնակենսագրական է անշուշտ կէօթէին գրքը, բայց հոն հեղինակը կը փորձէ պատասխանել «Ինչպէ՞ս եղայ ինչ որ եմ» հարցումին, կազմուած գրողին սկզբնական տարիները կը նկարագրէ: Այդ գործը կը պատկանի հետեւաբար կազմաւորման գրականութեան (սակի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ զայն կը հիմնէ): Աւելորդ է նկատել, որ այդպիսի հարցում ան այդպիսի ծրագիր չկայ երբեք Զարեանի մօտ: Զարեան չէ «կազմուած» երբ կը գրէ իր ինքնակենսագրական գործերը: Կը կազմուի անոնց հետ, անոնց միջոցաւ:

ե) Պէտք է յիշեցնել հիմա հայօճեկ կերպով, առանց խորանալու ու հիմնաւորելու բանաճեւեմը, որ Զարեանի սերունդին զլլաւոր յատկանիշը, զլլաւոր ծրագիրը «զեղարուեստական առասպելալիքում» է: Ծիշդ է Վարուժանի ինչպէս Օշականի պարագային: Տեսա՞ք, թէ ինչպէ՞ս բանաստեղծական մարդէն ներս՝ Զարեան կը վերագրուի Վարուժանին իր «Գիրք Իրեւանի գրագրութեան» շարքով (որուն վրայ կ'աշխատէր 1956-էն 1958 Վիեննայի մէջ, քանի որ այդ տարիներու օրագիրը կը խօսի հոն զարգացուած նիւթերուն մասին): Վիպական մարդէն ներս՝ անդրփոխանցելու անկարողութիւնը անկարելի կը դարձնէ բնականաբար այդպիսի գործառնութիւնը: Զարեանին ուրիշ բան չէր մնար, եթէ ոչ ինքզինքը բեմագրել իրրեւ առասպել: Կերպար ու տիպար: Այս գրական տիպարակերտումին մասին պիտի ըսէի, որ «ինքնառասպել»-ի մը կերտումն է: «Վաւերագրական մարդեր կերտելու» իր ձեռն է ու իր շնորհը:

զ) Սրբերի մէջ, ուրիշ ի՞նչ կ'ընէ Օշական իր կարգին «Համապատկեր»-ի ծիհատորին մէջ: Այդ պատճառով է, որ այդքան կը շեշտէ ան Համապատկերի վիպական քննութիւնը: Այդ սերունդին համար, կը կրկնեմ, գրականութիւնը կը «գործարկէ» առասպելակերտումներ ընդմէջէն միայն: Այդ է, որ կը սահմանէ գրականութեան վերջը, նշանակութիւնը եւ էութիւնը: Զարմանալի չէ՛ բնաւ, որ ծիհատորին մէջ տեղ գտնէ այդ գրեթէ անթափանց զաղանիքով մը պատուած բաժինը, որուն մէջ Օշական երկար երկուսութիւն մը կը կազմակերպէ իր ու իր «հէքեակ»-ին միջեւ: Առասպելը այս պարագային արդէն իսկ կազմուած է, բայց հանդիսաւոր մուտք մը կը գործէ գրականութեան ներս: Ծիշդ այդ բաժնին մէջ է, որ Օշական ամէնէն երկար ու հանգամանալից նկատողութիւնները կը նուիրէ Կոստան Զարեանի անձին ու գրութիւնը («Համապատկեր» ծի. էջ 405-էն 423): Կը պահեմ ասոնցմէ հետեւեալ հատուածները 1914-ի հանդիպումին մասին (էջ 418): Նախ՝ հանդուրժողութեան բացատրութիւնը. «ես զինքը կը ճանչնամ երեսուն տարիներէ ի վեր: Երկուսուսուրէ էր ու ես չէի տեսներ իր վրայ գրողի նախադասութիւնը»: Յետոյ՝ պատասխանատու կեցուածքը. «Այսպէս կը տառապէիք, իր այդ փառասիրութեանն էս, Գեղամը, Վարուժանը... Ու կը յիշեմ, որ յայտարարեցի իրեն. "Զարեան, ...աս ու ան

ԱՆԿԱՐԵԼԻ ԵՌԱՆԿԻՒՆԸ

(Շար. Ա. Էջեմ)

քաղցանները, առաջին հերթին) վարչա- կարգին զեմ ուղղությամբ ամեն քննադատ- անություն «Հակա դատարարական վեր- պրում» (14) նկատելու վարժ էին: Գար- բիշեյան, քաղաքապետ մեջբերելով այս տղերքը (զարգեալ սխալներով եւ առանց տարու հասցեատրոջ անունը), կը պնդէ, որ «այսպիսի մտորումներն էլ կամայ-կամայ յատկեցնում են Չարեանի խոհերը, պարզում հակասությունները, ուժղանցում կարծուր հայրենիքի նկատմամբ» (15):

«Հակասությունները» նման մեկնարա- նություններն են, որոնք «փառաբանական» համակարգին մաս կը կազմեն (16), դու- մարուած՝ հայրենիք եւ վարչակարգ դի- տուորեալ կերպով շփոթելու վարժազի- ծին հետ: Սակայն, Չարեան երեւութա- պէս լուծած էր հակասությունները՝ շատ աւելի կանուխ: Գարբիշեյանին ծանօթ չեքեքը այս նամակէն աւելի քան տաս- նամեակ մը առաջ՝ 1929-ին Չարեանի հը- բատարակած «Քարը» փորձագրութիւնը, որ, բանասէր Գոհար Աղաւաղեանի կարծիքով, «ակամաորդ գրողը չըզգարձ է կատարում հայ ժողովրդի վերածնու- թեան եւ ապագայի նկատմամբ եւ իր խո- հերն է արտայայտում այդ հարցի շուր- ջը» (17): Անշուշտ, Չարեան որեւէ շը- ջադարձ չըներ. կը բաւէ կարգալ խնդ- ըրոյ առարկայ գրութիւնը հասկնալու հա- մար, որ ան բնադրական վերլուծում- ներ կ'ընէ քարի ու ճարտարապետու- թեան շուրջ, շարունակելով «Անցողիկ եւ իր ճամբան» մէջ զարգացուցած գիծը, կարծես առանց քննադատութեան (18): Այս վերջին կէտը նկատի ունէր Արշակ Չօպանեան, երբ յիշեալ յօդուածին առի- թով Երվանդազէին կը գրէր, թէ «իր տուած առաջին յօդուածը բարեկամական ոգի ունէր Ո՛ւ. Հայաստանի վերաշինու- թեան գործին հանդէպ (...) (19): Սա- կայն, քննադատութիւնը --ճիշդ է, լուր- նայն ու անուղղակի--, դր Չօպանեան եւ այլք չեն նկատած, քարը լոկ որպէս նիւ- թական առարկայ ընկալող ու գործա- ծող վարդապետութեան զեմ է:

Չարեան հաւանարար Ալեքանդրէի սանձաքին պարպումը (1939) նկատի ու- նէր, երբ Անգլիոյ ու Ֆրանսոյի «սրիկա- յական դաւաճան քաղաքականութեան մասին» կը խօսի. դիտելի է, որ «Նաւը լեռան վրայ»ի պոստիւման հրատարա- կութեան նախարարը համահնչուն է այս սողեղուն ոգիին հետ:

Չարեանի այն հարցումին, թէ «Ի՞նչ էք պատրաստում "Այգեկութեմ"ից յե- տոյ» (20), Նուրիշեյան կը պատասխա- նէ. «"Այգեկութեմ"էն ի վեր արտադրած

եմ ամերիկահայ կեանքէ փրցուած կտոր- ներ: Գեղի նիւթերը սպառեր են զրեթէ, բայց հոս կայ նիւթի առատ եւ անսպառ աղբիւր մը, որմէ պիտի օգտուիմ վտա- հարար: Շատ մօտէն կը հետեւիմ Ամե- րիկեան պրակաւորութեան նոր շարժում- ներուն եւ ճգտումներուն, ասոնցմէ ալ օգտուելու մտքով» (21): Ամերիկահայ կեանքի նիւթերով, յետագային, կազ- մուած են Նուրիշեյանի «Պանդուխտ հո- գիներ» (Երեւան, 1958) եւ «Կարօտ հայ- րենի» (Երեւան, 1977) հատորները:

Չարեան անմիջապէս չէ պատասխանած աշխատակցութեան հրաւերին: Գիտենք, որ 1942-ին Միացեալ - Նահանգներ հաս- տատուած է: Ամերիկա տեղափոխումը պատճառ եղած է որ Նոր Գիթի խումբին հետ «չափով մը» յարաբերութիւն պահէ, ինչպէս կը վկայէ անոր վերապրողնե- րէն մէկը՝ Յակոբ Ասատուրեան (22): 1942 Յուլիս 8 թուակիր բացելէ մը կ'ի- մանանք, որ քանի մը օրով Նիւ - Եորք է (23): Հաւանարար այս այցելութեան հետեւանքով, «Նոր Գիթի» 1942-ի աշ- նան թիւին մէջ առաջին անգամ ըլլալով կ'երեւի իր ստորագրութիւնը երեք քեր- թուածներով՝ «Հիւրը», «Ի՞նչ եղան կեանքերը որ անցան», «Գարուն» (24): Գեղարուեստական տեսակէտէ յատկա- պէս շահեկան է երկրորդը: 1943-ին, Յու- նիս 31 եւ Հոկտեմբեր 11 թուակիր եր- կու բացելներով, ուղարկուած՝ Վոսթո- քէն (Նիւ - Եորք նահանգ), կը խոտա- նայ բան մը զրկել (25): Ոոստումը կ'ի- բարձրանի 1944 Յունուար 31-ի բացի- կով, ուր կը յայտնէ բանտեղծութեան մը առաքումը (26), այդ քերթուածը՝ «Ձին» լոյս կը տեսնէ «Նոր Գիթի» դար- նան թիւին մէջ (27):

ՕՇԱԿԱՆ -- ԶԱՐԵԱՆ

«Նաւը լեռան վրայ»ի հրատարակութիւ- նը 1943-ին մեծապէս խնդրալուծած է Նուրիշեյանը: Այդ մասին գրած է Օշա- կանին, 1944-ին: Նամակին ճակատագր- րը անյայտ է, բայց պահպանուած է անոր տրուած պատասխանը (Երեւան, 1944 Յուլիս 25), ուր Օշական շարունակած է զարգացնել իր խիստ քննադատական կեցուածքը Չարեանի հանդէպ, այս ան- գամ իր խօսքը մասնաւորելով այս վէպին մասին:

Ան կը հաստատէ, որ «անոր հեղինակը ոեւէ մէկէ աւելի կը ճանչնամ իր տաղան- ղին սաստկութեամբը, ինչպէս իր տկա- րութեանց հանդէսովը: Հարուստ, շքեղ գրայնութիւն մը, որուն ցանցը գրուած ըլլար աւագի երեսին: (...) Չարեան իր սպաւորութիւնները տուած է վէպին

մէջ, առանց խորհելու, որ "Անցողիկ ու իր ճամբան" առած էր արդէն իրմէն ա- նոնց ամբողջ թարմութիւնը, կուսութիւ- նը: (...) Վրիպանք մըն է այդ վէպը, ո- րովհետեւ ստուերն իսկ չէ հասարակոր աշ- իրականութեան, որ մեր հայրենիքին էր այդ թուականներուն: (...) Մեր գրա- կանութիւնը մեծ, մնայուն, խորունկ գոր- ծերով օժտելու բախտով ծնած այդ տա- ղանաւոր գրողը ինչու կը դաւէ իր իսկ կողմին: Գաղտնիք» (28):

Դիտելի տուած ենք, այլուր, որ «Նաւը լեռան վրայ»ի կորիզը «Անցողիկ»էն կու- զայ (29). նաեւ հանդիտութիւններ. նը- կատուած են «Բանկոօսը եւ մամուլի ոսկորները»ի հետ (30): Ասիկա, ան- շուշտ, մեղի շարժումը թարմութեան պակաս մը տեսնել «Նաւը»ին մէջ, որ- քան ատեն որ այս գործը խորհրդանշա- կան համակարգի մը մաս կը կազմէ (31): Միւս կողմէ, «Նաւը» կը զանցէ, աւե- լին, կ'արհամարհէ դասական վէպի կա- ռուցման ամէն կանոն, կամ, հակառա- կը, իր հաշտին կը նորոգէ զանոնք (հմտ. Օշականի ինքնաբերութեամբը մը) (32) իր իսկ խորհրդանշականու- թեան պատճառով, կէտ մը, որ Օշակա- նի ուղղութեան վրիպած է, քանի որ ամէնուրեք Չարեանի հանդէպ իր կան- խակալութիւնը կը բանի: Հաւանարար «Բանկոօսը»ի օրերէն կու զային Օշա- կանի հետեւեալ տողերը Բ. Թաշեա- նին. --

«Չարեան ուղեւոր կը մտածէ, այ- սինքն՝ կեանքին դուրս է, հետեւարար՝ անպատասխանատու. իր ընդհանրացում- ները կը բխին գուրդէն բառերէն, ո՛չ թէ կեանքէն, որուն մէկ շերտին վրայ լա- րած է իր վրանը: Ես կը մտածեմ իմ ջի- դերովս» (33):

Այս հաստատումը աւելի յատկօրէն ցոյց կու տայ երկու գրողներու գրական ըմբռնումներուն հակադրութիւնը: Օշա- կան վէպը կը նոյնացնէ կեանքին եւ կ'ար- համարէ գեղարուեստական բարդու- թիւնները, ոճական եւ այլ հնարքներ(34): Իսկ Չարեան կեանքը կ'անցնէ իր երե- ւակալութեան բովէն, գեղարուեստական իր մտածողութեան ենթարկելու համար: Իր ստեղծածը, կրկնեք, վէպի դասական հակադրութեան քայքայումն էր, թէեւ ո՛չ՝ հեղեղակալ կամ փորձառական վէ- պի ճամբով: «Դիտանկիւնին համաձայն, վիպածեւ յուշարութիւն մըն է կամ յուշագրութեան ծպտումով վէպ մը: Միշտ չէ որ յստակ կը մնայ ե'րբ իրա- կան կեանքը մէկ կողմ կը քաշուի ու երե- ւակալութիւնը սանձերը կը քոնէ: Չե- ղինակին համար, երբ կը հաստատէ ձե- ւը» (35): Ուրիշ արմատախիլի մը՝ բրի- տանացի յայտնի գրող Վ. Ս. Նէյթօլի վերջին երկին մասին գրուած այս տողե- րը կը նախ լաւագոյնս յարմարիլ Չարեա- նին: «Ուղեւորակալ» պայմանական բա- ուր թերեւս լաւագոյնս բնորոշումն է այդ գործին, որ իր հետեւորդը չունեցաւ եւ անանութիւն չտեսողներ, որովհետեւ Չար- եանի աշխարհահայեացքը խորթ էր հայ- կական անանական ըմբռնումին:

Օշականի նման, Չարեան կը պատկերա- ցնէ բեկորներու վերակառուցումը կեդ- ընդին մը նուաճումին ընդմէջէն, բայց բո- լորովին այլ ոճով մը, որ ահապահ հաշ- ուի կ'աւան յայտնիքը հատուածուն ու սփռումը. «Նաւը»ի մէջ տողանցող կեր- պարներէն շատերը «դուրսէն» կը դիտեն ամէն ինչ, որովհետեւ «դրսեցիներ» են, միաձուլման հողովոյթի մէջ շարժող տարրեր որոնք այլութեանէն ինքնութիւն կը վերադառնան (Հէրեան, Թումանեան, Պետրոս Մարկ, Եւայն): Անոնք «ահա- տոր իրականութիւնը» կ'ապրին, բայց ուրիշ մակարդակի վրայ, որ Օշականին ե իր սերնդակիցներուն հասու չէ:

Միւս կողմէ, Նուրիշեյան կը նախա- պատրաստէ գրախօսական մը Չարեանի վէպին մասին: Այս նպատակով, անոր կը դիմէ կենսագրական տուեալներ քա- ղելու համար: Վերջինս Նիւ - Եորքէն կը պատասխանէ 1944 Հոկտեմբեր 2 թուա- կիր նամակով: Կարեւոր կը նկատենք գը- րեթէ ամբողջութեամբ մէջբերել այդ նամակը, որովհետեւ կը նայ օգնել Չար- եանի կենսագրութեան որոշ կէտեր պար- զարանելու. --

«"Նաւի" գրախօսականին համար ձեր ուղած իմ կենսագրութեան զծերը կար- ծում էք իսկապէս անհրաժե'շտ են: Գը- րագէտի բուն կենսագրական իր ար- ստագրած գործերն են. -- "Անցողիկ եւ իր ճամբան", "Արեւմուտք", "Երկիրներ եւ աստաճներ" (որոնց շարքում "Սպան- եան" համարում եմ կարեւոր) ապա բա- նաստեղծութիւնները, "Հայաստանում" պոէման, որի երկրորդ եւ երրորդ մա- սերը լրացած են հիմա եւ, յուսամ, լոյս պիտի տեսնեն, "Տարագոմի հարսը",

"Երեք երգերը", որ թարգմանած են շատ լեզուների, որոնց իտալական թարգմա- նութիւնը տպւած է դասականների շար- ջում եւ որ յայտնի երաժիշտ Ottorino Respighi երաժշտութեան է վերածել (Universal Edition, Leipzig)» (36):

Այս պարբերութեանն ոչինչ մտած է Հեղինէ Դաւիթեանի հեղինակած գրա- խօսականին մէջ: Սակայն, ուշադրու- թեան արժանի են «Հայաստանում» վի- պերդի յիշատակումը (այլապէս անձա- նօթ մեղի եւ, կ'ենթադրենք, ցարձ ան- տպ), ինչպէս եւ «Երկիրներ եւ աստ- ուածներ» շարքի "Սպանիա" բաժնին տըր- ւած կարեւորութիւնը:

Հասկնալի է, թէ ո՞ր աստիճան առաս- պելական քօղի տակ պահպանուած է Չար- եանի կենսագրութիւնը մինչեւ հիմա. 60-ամեակի գրողը ստիպուած եղած է հայ թերթի մը խմբագրին կենսագրական նը- ւագրոյն տեղեկութիւններ հայթայթել: Եւ, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ, ա- նոնցմէ մաս մը միայն պիտի տպուի, այդ ալ՝ որոշ սխալներով:

Նամակը կը շարունակուի հետեւեալ կերպով. --

«Նաեւ, եթէ անպատճառ ուզում էք իմանալ, ծնած եմ Շամայի, սրանից կէս դար անց: Նախական կրթութիւնս եղած է ուսուսական, ապա Փրանսական: Համալ- սարանական կրթութիւնս ստացած եմ Բեքլիայում: Առաջի դրւածքներս (բա- նաստեղծութիւններ) գրած եմ Փրանսա- րէն: Հայերէնը սովորել եմ ուշ եւ այդ պատճառով էլ մինչեւ հիմա անհար տա- ուսխայներ եմ անում: Ապա աշխատակ- ցած եմ, հազար ծածկանունների տակ, Փրանսական, բելգիական, իտալական, հոլլանդական, սպանական, անգլիա- կան եւ էլ չգիտեմ ինչ լեզուներով գրե- ւած հանդէսներին եւ թերթերին, ի խըն- դիր սպրուտի (37): Մոռացայ ասել, որ 1922 - 24-ը դասաւանդած եմ Հայաստա- նի համալսարանում "Եւրոպական գրա- կանութիւնների բարդատական ընդհա- նուր պատմութիւն", որ գրի առած, տըղ- ւելու պատրաստ, մտացած է Հայաստա- նում»:

Հ. Դաւիթեան ամփոփ քաղուածք մը ըրած է այս պարբերութեանն, թէեւ եր- կու սխալ գործելով (38): Առաջինը «ա- ւանդական» է. Չարեանին վերագրել 1922- 1925 կեցութիւն մը Հայաստանի մէջ, հակառակ գրողին իսկ վկայութեան: Ու- րիշ տեղ ցոյց տուած ենք, որ 1925 թուա- կանը անհիմն է (39): Միւս սխալը սկզբը- նադրելու թիւը հակադրութեան հետե- ւանք է. Դաւիթեան կը նշէ, թէ Չարեան սկսած է հայերէն գրել եւրոպական հա- զար ու մէկ թերթերու եւ պարբերական- ներու աշխատակցելէ ետք: Ճիշդ է, որ Չարեան պեթիական որոշ թերթերու աշ- խատակցելէ ետք սկսած է հայերէն գը- րել, բայց նամակին մէջ իր ըսածը անոր հետ կապ չունի: Մնաց որ, Չարեանի բազմալեզու այդ աշխատակցութեան մա- սին շատ ցանցառ տեղեկութիւնները գոյու- թիւն ունին մինչեւ հիմա եւ անոր ստու- գումը բաւական դժուարին է, մանաւանդ եթէ հեղինակը ծածկանուն գործածած է:

Կենսագրական տուեալները տալէ ետք, Չարեան կը նշէ.

«Ուրիշ ի՞նչ... ոչինչ՝ մինչ մեր երի- տասնութեանն ընդհանուր ձգտումն է օտար լեզուներով գրել (ընդհանուր ծա- փահարութեան տակ) եւ օտար լեզուից, ընդհակառակը, անցել եմ հայերէնի, ո- րովհետեւ հայ ոգին կարելի է արտայայ- տել միայն հայ լեզուով (40):

Գրած եմ. --
Երբ հայ լեզուն ուրանալով, մէկը
դառնայ
Օտար վայրի (1 բառ անընթ.) ձեւի
սարակ ծափող՝
Ուրախանում, ծագի են դարձում եւ
ծնծոյց --
Դա ի՞նչ հանձար, դա ինչ համբաւ,
Ի՞նչ քան փող...

Բայց այդ միայն ցոյց է տալիս հայու- թեան մեծող մասի խեղճութիւնը»:

Օտարակիր հայ հեղինակներու հա- նդէպ իր դերը որոշում տարինքը առաջ արտայայտած էր Չարեան՝ Համաստեղին ուղղուած իր մէկ նամակին մէջ, ուր կը քննադատէր Ռուբէն Դարբինեանի խան- դավառ կեցուածքը՝ «այդպէս փոշիների մէջ թաւալ դալով վագել նրանց յար- ղութեան սայլի ետեից» (41): Պէտք է վերջիւնէլ, որ նախ «Հայրենիք» օրաթեր- թին մէջ յատուկ սխնակով, ապա «Հայ- րենիք Ուրիշ» անգլիատառ շարաթա- թերթի հիմնադրութեամբ, Դարբինեան գուրգուրանքի առարկայ կը դարձնէր Սա- նամակները, "Տարագոմի հարսը",

մտաւորականներէ առաջ մենք կանք քու փառք ո՛չ թէ դուրեւելու, այլ քննադակե- լու: Ինչ եւ իրար անցեր: ...Տուր իրաւ գործ ու հոս ենք մենք այդ գործին տա- լու քու ուրաժէք աւելին»: Վարուժան չկրցաւ հանդուրժել ու քաշուեցաւ: ... Օշական կը հաւատար, թէ «այդքան շը- նորհներ չէին կրնար փճանալ այդ յիմար փաստաբարութեան բազմին առջեւ»: Բայց սակէ առաջ (էջ 410), «նաեւ՝ զնահա- տումը. «"Անցողիկ եւ իր ճամբան" մեծ գործ մըն է. Չարեանի դուրս գործոցը նոյնիսկ... իր յարգութիւնը պարտական է Չարեանի յայտնութեան կան, երեւակա- յութեան...»:

Մնացեալը՝ յաջորդել:

ՄԱՐԿ. ՆՇԱՆԵԱՆ

(1) Անշուշտ՝ Չարեանի հանդէպ իր անխախտ հիացումով՝ Եւառի Խաչատրը- եան երբեմն կ'երթայ անհակաչիտ չափա- զանցութիւններու, խօսքերու որոմբ ո՛չ քէ սխալ են, այլ տեղ չեն հասցներ: Օ- րինակ մը. «Գեղարուեստական գրակա- նութեան մէջ Կոստան Զարեանի պատկե- ըային վառ մտածողութիւնը փաստօրէն մինչեւ այսօր էլ մնում է այդպէս էլ շը- գերագնացուած»: Բայց կան իր յատաջա- բանի մէջ ընկալումի քարտիքներ եւ անցեալի անպարարութիւններու գովա- ցուցիչ մատնանշումը. «Հայաստանի գը- րականութիւնն ու քննադատութիւնը տաս- նամեակներ շարունակ գրական կեանքը ներկայացրել են... ծուռ հայելու մէջ, ավել ինչ եմք արկելով... իրենց իմացու- րեան չափից բխող կանխակալութեանը: Սա այնքան անկայտ էր, որ երբ մերժը-

ւած գրողների երկերի հրատարակումը Հայաստանում դարձաւ հնարաւոր, Հա- յաստանի գրականագիտական միտքի փաստօրէն ի գորտ չեղաւ հասկանալու եւ գեղատեսիլ այդ գրականութիւնը»:

(2) Կ'արժէ մէջբերել հոս «Նարբ»ի մէջ տպւած պէրոպետան օրագիրէն չափա- զանց շահագրգռական հատուած մը (1954 Մայիս 7). «"Օրերի Պսակ"ի գրե- քէ բոլոր բանաստեղծութիւնները վերա- մշակելի են: Չգաղտնի է, որ լեզուն դեռ օտար էր ինձ, ապա Միխայիլ Բուրգուինի եւ պոլսական բարբառի դժբախտ ազգեցա- թիւնը: Ընդհանուր խնդիր: Հայը պիտի է գտնի իր ամբողջականութիւնը իր լեզուի միջոցով: Վերադառնալով իր պարզու- րեան՝ անմշակ, յստակ, վերջնական»: Այս տողերուն մեկնաբանութիւնն ու պար- զաբանումը՝ այլ առիթով:

(3) 1995-ին «Բազմապէս»ի մէջ լոյս տեսնելիք «Եղեղնի լուսիւնը Կոստան Զարեանի արձակից մէջ» գործեան ա յ- չերէն ներս, ընթերցողը պիտի գտնէ մ. յ կարծիքին, ինչպէս ներկայ յօդուածին մէջ արտայայտուած միւս գրայններուն ու կարծիքներուն, հիմնաւորումը:

(4) Վարուժան - Օշական . Չարեան եր- րորդութեան մասին խօսած եմ զանա- զան առիթներով, օրինակ «Բազմապէս»ի 150-ամեակի բացառիկին մէջ, «Կոստան Զարեան, կամ անկարելի քատրոնը» վեր- նագրուած յօդուածով: «Պալիսը յարթել» խօսքը եւ վարուժանի հետ վեճը մա- սամը վերլուծուած են «Եղեղնի լուսիւն- րը Կոստան Զարեանի արձակից մէջ» ու- սումնասիրութեամբ:

ընդհանուր ու իր սերնդակից անդլիադիր հեղինակները:

«Ոգի» հատկացումները, ի հարկէ, կապ չունի հայկական ընթացիկ գաղափարաբանութեան «հայ ոգի»ին հետ, որ կը միտի բացատրելու իր, առանձնաշարժութեամբ զարգացող մը հետ նոյնանալու, եւ սխալ է Չարեանը արժեքաւորել ա՛յլ հիմնաւորումով: «Ոգի»ն, Չարեանի բնութագրումով, հաւասար է «մշակոյթ»ին, այս բառի սահմանումը վերապահելով կրօնա-գեղարվեստական ոլորտի մը, որ կը հետեւի Օսկար Ծփենկլըրի յայտանի բաժանումին (42): Չարեան մշակոյթի եւ լեզուի յարաբերութիւնը կը հիմնաւորէ իր մշակած բնագիտական համակարգին ընդմէջէն (43): Ան լեզուն չի սահմանել իր բնութագրի կասկածելի հարադատութիւն մը պահպանելու, ինչպէս Հ. Դաւիթեան կը մեկնարանէ իր հաշտոյն («Չարեանը է հայ գրագէտի հոգին անկարելի է բաւականութեամբ ստանայ օտար շրջանում: Անկարելի է ուրիշ լեզուով նկարագրել Արարատը եւ Սեւանը եւ պահել դրանց հարազատ գոյնը») (44), այլ՝ մշակոյթ մը արտայայտելու (45) համար:

Գրախօսականը լոյս կը տեսնէ «Նոր Գիր»ի 1944-ի աշնան թիւին մէջ, որ կը բացուի Չարեանի գծանկարով, դժուար իր երկրորդ կնոջ՝ Յրեմիա Պրոքս - Չարեանի կողմէ: Առաջին երեք էջերը բուն գրութիւնն են, որուն կը հետեւի 15 էջ արտասպում վէպի զանազան մասերէն: Հեղինէ Դաւիթեան դիտել կուտայ, որ վէպին մէջ Չարեան ծանրացած է խորհրդանշական իմաստներու վրայ, զգայացունց դէպքեր եւ ուժեղ տիպարներ չկան («Իսկ գրելի հերոսը՝ Հէրեանը, նա է ժողովրդի հետ ապրողը շնորհ, ժողովրդի ստանալովն իմաստակից եղող մէկը չէ: Նա մնում է միշտ հեռու եւ դիտում է ամէն բան միայն հեռուից»), իսկ գիրքը կանգուն պահողը Չարեանի պատկերաւոր ոճն է (46): Յարգող երկու էջերը կը գրաւեն կենսագրական տուեալներ, գիրքի կրկին հակիրճ վերադատմամբ, մէկ-երկու մանր դիտողութիւններ, «Հայի ոգին - անվերջ մաքառում եւ պայքար» խորագրի կանխատեսելի արտայայտութիւններ եւ անբաւարարութեան զգացողութիւն մը:

ԽՈՒՄԸ

Հրատարակութեան քիչ ետք, 1944 Դեկտեմբեր 11-ին Չարեան նամակ մը կը գրէ Նուրիկեանին. բնագիրը պահպանուած չէ, քայքայ արտասխանէն կը նկատուին, որ Չարեան խիտ վրդոված է: Արդարեւ, 1945 Յունուար 8-ին «Նոր Գիր»ի խմբագիրը կը պատասխանէ. -- «Չարեանը կարգադրի Դեկ. 11-ի Ձեր նամակը: "Անհասկացող, սղէտ եւ մակերեսային" կը կոչեն Ձեր գրքին՝ "Նա"ի շուրջ գրուած յօդուածը որ երեւցաւ Նոր Գիրի Աշնան թիւով: Երիտիկ ըսելով՝ իրբեւ գրչի եւ արուեստի հասուն մարդ՝ շատ աւելի լայնամտութիւն կ'ակնկալէի Ձեզմէ, Ձեր գործին շուրջ արտայայտուած որեւէ կարծիքի հանդէպ, երբ մանաւանդ այդ կարծիքը կը բղիթ շատ անկեղծ աղբիւրէ մը որ Ձեր ենթադրածէն շատ աւելի խորունկ է: Եւ ո՞վ ըսաւ որ արուեստի ամէն գործ կատարել է եւ անքննադատելի, անխցելի: Այս իրողութիւնը ինքը արուեստագէտը գիտնալու է ամէնէն առաջ եւ ամէնէն աղէկ:

(...) Հապճեպով գրուած նամակ մը չի բաւեր: Նոր Գիրի էջերը բաց են Ձեր առջեւ: Հրամայեցէք եւ ըսէք մեզի հրապարակում, եւ մեծ եղբոր մը լայն մաքուր վր, թէ ինչո՞ւ "սղէտ եւ մակերեսային" են Նոր Գիրի մէջ երեւցած կարծիքները՝ Ձեր գրքին շուրջ: Մենք հաճոյքով եւ յարգանքով կը լսենք Ձեր ըսելքը» (47): Հակառակ Նուրիկեանի հրաւերին, Չարեան այդպիսի յօդուած հրատարակած չէ «Նոր Գիր»ի մէջ: Ձեռք գիտեր, ի հարկէ, ինչպէ՞ս կը հիմնաւորէ իր գաղափարները: Ճիշդ է, այսուհանդերձ, որ Հ. Դաւիթեանի գրախօսականը սահմանափակ էր եւ խորութիւն չունէր, հակառակ Նուրիկեանի հաւաստիացումին: Սակայն, նկատած էր Չարեանի գործին երկու գիծ. խորհրդանշական բնութիւնը եւ ոճին խաղաղութիւնը:

Այս նամակէն կ'իմանանք նաեւ, թէ Չարեան նախօրոք բանաստեղծութիւն մը ուղարկած է «Նոր Գիր»ին. «Կը գարմանամ նաեւ Ձեր այն մտայնութեան վերայ, որով, սրտնեղած, կ'ուզէք որ չըհրատարակեմ Ձեր մէկ ընթացումը գոր

կանխառ. ճամբած էր Նոր Գիրին համար»: Յայտնի չէ, թէ ո՞ր բանաստեղծութեան մասին է խօսքը, սակայն լոյս տեսած չէ թերթին մէջ: Այս նամակէն ետք, Չարեան խորացնէ իր յարաբերութիւնները Նուրիկեանի հանդէպին հետ: Նոյն օրերուն, իր 1945 Յունուար 2-ի թուակիրով, Օշական կը պատասխանէ Նուրիկեանի Նոյեմբեր 14-ի նամակին, որ դարձեալ չէ հասած մեզի: Նուրիկեան անկէ խնդրած է գրախօսական մը «Նաւը»ի մասին, ինչպէս կը հետեւեցնէ Օշականի պատասխանին: --

«Ձեր ուզած յօդուածը "Նաւը լեւան վրայ"ին համար՝ կանխահաս է: Իմ թելադրել ուզածը գրական տաղանայ մըն էր: Ձի բաւեր, որ գրուածք մը կարգացուի: Ձի բաւեր, որ ոճ մը ինքզինքը պարտադրէ: Ամերիկացիք ամէն բան կը սիրեն վերածել կեանքի պրոցեսի մը: Գրականութիւնն ալ, ամէն բանէ առաջ, կեանք մըն է: Ու այդ կեանքին հանդէպ ահա դաւաճանած է Չարեան: 5-600 էջ թիւակիրով կեանքէն զրեթէ դուրս իրողութիւններու... թէկուզ փառքին, բայց լեզուով կեանքը: Կարգացուող գիրքերուն վրայ թերեւ Ձեզի օր մը «Մերմայնացան» մը գրկեմ: Չարեանի վիպասան մը չէ: Մտածող մը չէ: Ի՞նչ է այն ատեն: -- Պատկերահաս մը, պիտի ըսէր Օշական: Բայց գրականութեան մէջ պատկերը շուտ կը թոռի» (48):

Այդ օրերուն էր, որ «Նոր Գիր»ի մէջ հրատարակուող «Մոռցուած քաներ» շարքով, «Մեր վանքերը» նիւթին շուրջ խօսած պահուն Օշական պիտի նշէր. --

«Բանաստեղծութիւնը եւ հայրենասիրութիւնը զրեթէ միշտ միջամտած են վանքերուն եւ անոնց նկարագրներուն արտահանման մէջ: (...) Կոստան Չարեան որ կեցած է Արարատեան դաշտին ու տեսած է Հռիփսիմէն, ներկայացուցած է ոչ մէկ ժողովուրդի, ոչ մէկ ժամանակի պատկանող քառակերտ նկար մը» (49):

Ով որ կարգայ Հռիփսիմէի վերաբերող տղերքը «Նաւը լեւան վրայ»ի մէջ կրնայ հաստատել, որ յիշեալ տեսակէտը բունագրութիւն է. ընդհակառակն, Չարեան հայ ժողովուրդը բնորոշող հոգեկան կառուցումները անոր ճարտարապետութեան մէջ տեսած է (50) եւ զեղադրականը կապած է աղբիւրի - կրօնականին (51):

Օշականի գիրքը շուրջ վէպին մասին նոյն ձեւով յայտնուած է Անդրանիկ Ծառուկեանի հետ այդ օրերուն պահած թղթ-թակցութեամբ (52): Յետագային չէ փոխուած, դատելով Յովհաննէս Աւագեանին 1947 Ապրիլ 23-ին հասցէագրուած նամակէն, որ հրատարակուած է յետմահու «Նոր Գիր»ի օշականեան բացատրիկին մէջ. --

«"Նաւը լեւան վրայ" վրիպանք մըն է, թէ եւ մեր գրականութեան զեղեցիկագոյն էջերէն 50-60 մը ունի իր մէջ» (53): Գրեթէ նոյն բանը պիտի ըսէր Ծառուկեանին ու Եր. Տասնապետեանին, Հալէպ այցելութեան օրերուն, մահէն քիչ առաջ. «Բայց այդ վաթսուն էջը հայ գրականութեան անմահ էջերուն մաս կը կազմեն»: Իսկ Ծառուկեան պիտի նշէր. --

«Արդարեւ, ո՞ր հեղինակն է որ Ներշնչիկ պիտի չզգայ, իր գրածներուն գոնէ տասը հարիւրերորդը ազատագրուած տեսնելով անմահութեան համար...» (54): Եթէ անմահութիւնը յարաբերական ըստորոգութիւն մըն է, կը կարծենք սակայն, որ «Նաւը լեւան վրայ» վէպը վերապահ մը չէր, հակառակ Օշականի հաւաստիացումին, այլ՝ «հայ մտքի նոր ճամբաները» գտնելու իւրաքայտուկ փորձ մը:

ՊԱՆԴԱՆԱՅՐԵՍ, 1994 ՄԱՐՏ . Օգոստոս

- (1) Նամակին համար, տե՛ս. Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարան (ԳԱԹ), Կոստան Չարեանի ֆոնտ, քիւ 25: Անգլերէն մասնակի քարգմանութիւնը տե՛ս. Vartan Matiosian, The Traveller and His Many Roads, «Ararat», Spring 1994, 31.
- (2) Երուանդ Ազատեան, «Նոր Գիր» եւ իր ժամանակները, «Գրական Երոյթներ» (խմբ. Մարգարեա Մարկոսեանի), Նիւ - Եորք, 1985, 39:
- (3) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314 (սակէ առաջ, քանակին մասնակի հրատարակութիւնը տե՛ս. Վ. Մատրէ-Պետեան, Այժմէական հարցազրուաններ, «Յանապ» - Միլի եւ Արուեստ», Նոյեմբեր 1992, 4: Ներկայ յօդուածին մէջ օգտագործուած նամակները ամբողջութեամբ

ԹՈՒՂԹ ԾՆՆՆԵԱՆ
Կոստան Չարեանի կեանքը պատող մշուշը աստիճանաբար չբացնելու լաւագոյն միջոցը փաստաթուղթն է: Անոր ընտանիքին մօտ պահպանուող արխիւին մէջ գոյութիւն ունի ստորեւ հրատարակուող վաւերագրերը, որ կրնանք նկատել Չարեանի ծննդեան վկայականը եւ որ շնորհուած է 1894-ին, ըստ երեւոյթին՝ ապագայ գրողին արտասահման ճամբորդելու նախօրեակին: Ասկէ կ'իմանանք, որ հօր անունը Սաշատուր էր եւ ո՛չ՝ Բրիտանիոյ, ինչպէս կը գրեն «Հայկական Սովետական Հանրագիտարան»ը եւ «Գրական Տեղեկատու»ն: Կը ճշդուի նաեւ ծննդեան թուականը՝ 1885 Փետրուար 8, եւ ո՛չ՝ Փետրուար 2, որ յիշեալ գոյգ աղբիւրներուն հաղորդածն է: Կ'արժէ նշել, թէ այս վաւերագրերը արուած է ուսերէն եւ հայերէն կողմ-կողմի շարադրանքներով:

Վ. Կ. Յ. Ա. Կ. Ա. Ն.

Ըստ հրամանի Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՆՈՒԹԵԱՆ ԻՆՔՆՆԱԿԱԼԻՆ ԱՄԵ. ՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ տուաւ այս ի լուսարձակ կապ չունեցող կոնսիստորիայէ վիճակին Շամախույ համաձայն օրագրական սահմանադրութեան նորին, կայացելոյ ի 7 աւուր սեպտեմբերի 1894 ամի, հիմնեցելոյ ի վերայ խնդրոյ բնակչի Շամախույ քաղաքի Արտէմի Խաչատուրբեկեանի Եղիազարեանց առ այն՝ քէ որպէս տեսանի ի չափաբերական մատնէ 1885 ամի Ս[ուր] Ա[ստուա] ծածին եկեղեցույն Շամախույ քաղաքի՝ յօրինաւոր ամուսնութեանէ Հայոց լուսարձակ դաւանութեան Աստվանաւոր Խաչատուր քեգի Մեխուսեան Եղիազարեանց ընդ Սոնայ Ստեփանեան ծնեալ է որդի կոնստանտին յուրի փետրվարի հազար ութ հարիւր ութսուն եւ հինգ ամի, որ մկրտեալ է ի Ս. Ա[ստուա] ծածին Հայոց եկեղեցույ Շամախույ քաղաքի ի 14 նոյն իսկ փետրվար ամսոյ՝ ի ձեռն Սարգիս Աւագ Գեղի փետրվարեանց եւ ի ժամ մկրտութեան ամուսնականցեալ է կոնստանտին կեփահայր որդի լեալ է Աղասի քեգ Մարտանեանց[] Զորմէ կոնսիստորիայս վկայէ ստորագրութեամբ եւ գրոշմամբ Արտէմի կնքոյ: ի 8 աւուր սեպտեմբերի 1894 ամի ի ք. Շամախի:

(Ստորագրութիւն)

- լոյս պիտի տեսնեն «Նորք» ամսագրին մէջ):
- (4) Տե՛ս. Բ. Նուրիկեան, «Մեր խօսքը», Նոր Գիր, 1, 1939. հմմտ. Նոր Գիր եւ իր աշխատակիցները. Ընտիր էջեր (խմբ. Մարգարեա Մարկոսեանի), Նիւ - Եորք, 1984, էջ XV:
- (5) Վազգէն Գաբրիէլեան, Սփիւռքահայ գրականութիւն, Երեւան, 1987, 214:
- (6) Ն. Սարգսեան, Սերունդը, «Մեմֆ» Ապրիլ 1931, 41:
- (7) Այս խնդիրը հանգամանալից կերպով քննարկուած է Գր. Պրոքսեանի և Մարկ Նշանեանի կողմէ: Իրենց բազում ուսումնասիրութիւններուն շարքին, տե՛ս. օր. Marc Nichean, The Retreat of Shahan Shahnour, «Journal of the Society for Armenian Studies», vol. 4, 1988-1989; 56-58.
- (8) Շահան Շահուր, Նահանջը անոնց երգի, Փարիզ, 1981, 140:
- (9) Գաբրիէլեան, նշ. աշխ., 352: Հմմտ. Նոյն, Դիմանկարներ, Երեւան, 1977, 47:
- (10) Արտէմ Ն. Մամուրեան, Ամերիկահայ գրական մամուլը, «Գրական Երոյթներ», նշ. աշխ., 57:
- (11) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 215:
- (12) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314:
- (13) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 215:
- (14) Գաբրիէլեան, նշ. աշխ., 353 (Դիմանկարներ հատորին մէջ, էջ 48, «Վրիպումներ» էին միայն):
- (15) Նոյն տեղը, 352:
- (16) Այս մասին, տե՛ս Մ. Նշանեան, Շահան Շահուր եւ հարիւրամեակներու զանգուր, «Ահեկան», 3, 1970. Marc Nichean, Հայաստանահայտնութիւնը, «Ous-sanogh», 4, 1971:
- (17) Արշակ Զօպանեան, Նամականի, Երեւան, 1980, 429:
- (18) Կոստան Չարեան, Քարը, «Անահիտ», 1, 1929, 8-13:
- (19) Զօպանեան, նշ. աշխ., 183:
- (20) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314:
- (21) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 215:
- (22) Հրանտ Թամրազեան, Յակոբ Ասատուրեան. կեանքը եւ գործը, Երեւան, 1993, 13:
- (23) ԳԱԹ, Գ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314:
- (24) Տե՛ս Նոր Գիր եւ իր աշխատակիցները, 354-357:
- (25) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314:
- (26) Անդ:
- (27) Տե՛ս Նոր Գիր եւ իր աշխատակիցները, 357-358:
- (28) Յակոբ Օշական, Նամականի, Ա. հատոր, Պէյրութ, 1983, 20-21:
- (29) Լ. Մատրէ-Պետեան, Դեղերուներ նաւուն շուրջ, «Կայք», 3, 1993, 86-87:
- (30) Տե՛ս. Հեղինէ Գալիքեան, Հայի ոգին - անվերջ մաքառում եւ պայքար, «Նոր Գիր», 3, 1944, 226:
- (31) Մատրէ-Պետեան, Դեղերուներ..., 87-96:
- (32) Յակոբ Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատոր Ժ. Անթիլիաս, 1982, 94:
- (33) Բ. Թաշեան, «Յակոբ Օշական Կոստան Չարեանի մասին», «Արմենիա», 1963 Յունիս 4, 2 (արտատպում՝ «Յուսարեք»էն): Թաշեան միայն այս տողը մէջբերած է իր գրութեան մէջ եւ չէ յիշած նամակին բնականը:
- (34) Տե՛ս. Vahé Oshagan, Life and Work of H. Oshagan (1883 - 1948), «Ararat», Winter 1983; 22:
- (35) Mel Gussow, V. S. Naipaul: viajero de una civilización herida, «Clarín Cultura y Nación», 18 de agosto de 1994, (քարգմանուած «Նիւ-Եորք Թայմս»էն):
- (36) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 314:
- (37) Այս նախադասութիւնը մէջբերուած է Գաբրիէլեանի կողմէ (Դիմանկարներ, 46), առանց յիշելու նամակին հասցէատեղը:
- (38) Դաւիթեան, նշ. աշխ., 225:
- (39) Տե՛ս. Վ. Մատրէ-Պետեան, Կոստան Չարեանի վերջապետութիւնը, «Բագմալիկ», 1-2, 1991, 277-278:
- (40) Այս ցարբերութեան գրքէ վերջապակեան մէջբերումին համար, տե՛ս. Գաբրիէլեան, Դիմանկարներ, 25: Բազում ծառայ մէջբերած է Հ. Գալիքեան, քե. եւ փոփոխութիւններով (նշ. աշխ., 225):
- (41) Տե՛ս. Մատրէ-Պետեան, Այժմէական հարցազրուաններ... 4:
- (42) Տե՛ս. Մ. Նշանեան, Կոստան Չարեան եւ Օսկար Ծփենկլըր, «Կայք», 1, 1989, 77-78:
- (43) Տե՛ս. Օր. Կ. Չարեան, Լեզուն եւ արիւնը, «Գեղունի», 1949, 104-106:
- (44) Դաւիթեան, նշ. աշխ., 225:
- (45) Հմմտ. Էմիլ Պենվեիտտի այն զբոյրքը, քէ լեզուն մեկնաբանիչ է ընկերութեան (Margot Bigot, Identidad étnica y educación bilingüe: una problemática abierta, «Cuadernos de Antropología», 2, 1988, 14-15), որուն արտայայտող տարրը մշակոյթն է:
- (46) Դաւիթեան, նշ. աշխ., 224:
- (47) ԳԱԹ, Բ. Նուրիկեան ֆոնտ, քիւ 215:
- (48) Օշական, Նամականի, 23:
- (49) Նոր Գիր եւ իր աշխատակիցները, 252:
- (50) Կարօ Փոյառեան, Զրոյց, Բ. հատոր, Գալիքէ, 1961, 95:
- (51) Հմմտ. Vahé Oshagan, Notes on the Constants in Armenian Culture, «Armenian Review», December 1980, 380-381.
- (52) Ա. Ծառուկեան, Անցողիկ եւ իր ճամբաները, «Յանապ», 1983 Նոյեմբեր 1, էջ 2: Այս յուշագրութիւնը վերջերս մտած է հատորի մէջ. տե՛ս. Մեծերը եւ... միւսները, Պէյրութ, 1992:
- (53) Օշական, Նամականի, 105:
- (54) Մատրէ-Պետեան, նշ. աշխ., 2: